



ISSN 2579 - 2555

**ՖԻՆԱՆՍՆԵՐ ԵՎ
ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄ**

1

ԵՐԵՎԱՆ - 2019
www.iatc.am



ՀԱՇՎԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ
ԿԵՆՏՐՈՆ
INTERNATIONAL ACCOUNTANCY TRAINING CENTRE
МЕЖДУНАРОДНЫЙ ЦЕНТР ПО ОБУЧЕНИЮ
БУХГАЛТЕРИИ

ՖԻՆԱՆՍՆԵՐ ԵՎ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ
ՀԱՇՎԱՌՈՒՄ

ԳԻՏԱԿԱՆ ՀԱՆՂԵՍ

1 (3)

FINANCE AND ACCOUNTING

SCIENTIFIC JOURNAL

ФИНАНСЫ И БУХГАЛТЕРСКИЙ УЧЕТ

НАУЧНЫЙ ЖУРНАЛ

ԵՐԵՎԱՆ 2019

«ՀՈՒՄԿ» ՀԻՄՆԱԴՐԱՍ ՀՐԱՏԱԴԱԿՉՈՒԹՅՈՒՆ

«Ֆինանսներ և հաշվապահական հաշվառում» գիտական
հանդեսը լույս է տեսնում տարեկան երկու անգամ:
Հրատարակվում է 2018 թվականից:

The scientific journal "Finance and accounting" is published
twice a year. It has been published since 2018.

Научный журнал "Финансы и бухгалтерский учет" выходит
два раза в год. Издается с 2018 года.

Խմբագրություն՝

Գլխավոր խմբագիր՝ Ճուղուրյան Արմեն (տ.գ.դ., պրոֆ.)

Գլխ. խմբագրի տեղակալ՝ Սահակյան Հասմիկ

Պատասխ. քարտուղար՝ Մխիթարյան Մելինե

Պատասխ. խմբագիր՝ Առաքելյան Անի

Խմբագրական խորհուրդ.

Թավադյան Աշոտ (տ.գ.դ., պրոֆ.), Հակոբյան Արմեն (տ.գ.դ.)

Գրիգորյան Լիանա (տ.գ.դ., պրոֆ.), Սահակյան Մելս (ֆ.-

մ.գ.թ., պրոֆ.), Խաչատրյան Նոննա (տ.գ.թ.)

© ՖԻՆԱՆՍՆԵՐ ԵՎ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄ • FINANCE
AND ACCOUNTING • ФИНАНСЫ И БУХГАЛТЕРСКИЙ УЧЕТ

Edition:

Editor –in-chief: Tshuguryan Armen (Sc.D. in Economics, Professor)

Deputy editor –in-chief: Sahakyan Hasmik

Executive Secretary: Mkhitaryan Meline

Managing Editor: Arakelyan Ani

Editorial Board:

Tavadyan Ashot (Sc.D. in Economics, Professor), Hakobyan Armen (Sc.D. in Economics), Grigoryan Liana (Sc.D. in Economics, Professor), Sahakyan Mels (Ph.D. in Phys.- Math. Sciences, Professor), Khachatryan Nonna (Ph.D. in Economics)

Редакция:

Главный редактор: Джугурян Армен (д.э.н., проф.)

Зам. главного редактора: Саакян Асмик

Ответственный секретарь: Мхитарян Мелине

Ответ. редактор: Аракелян Ани

Редакционная коллегия:

Тавадян Ашот (д.э.н., проф.), Акопян Армен (д.э.н.), Григорян Лиана (д.э.н., проф.), Саакян Мелс (к.ф.-м.н., проф.), Хачатрян Нонна (к.э.н.)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Թամարա Հովակիմյան ԵՊՀ, տ.գ.թ., դոցենտ Սուրեն Հովակիմյան տ.գ.թ.	Հաշվառման համակարգի տեղն ու դերը տեղեկատվական տեխնոլոգիաների ներկա գործընթացներում 6
Վալերի Միրզոյան փ.գ.դ., պրոֆեսոր	Կառավարման սոցիալ-հոգեբանական մեթոդների համեմատական վերլուծություն 20
Մելս Սահակյան ԵՊՀ, «ՀՈՒՄԿ» Ֆ.-մ.գ. թ., պրոֆեսոր Գևորգ Ղալաչյան ԵՊՀ	Պորտֆելի ընտրության մոդելը էնթրո- պիայի կիրառությամբ 38
Արմեն Ճուղուրյան տ.գ.դ., պրոֆեսոր	Գործարարության կայուն զարգացման հաշվառման հիմնախնդիրները 51
Նարինե Մելիքյան տ.գ.թ.	Կոռուպցիայի դեմ պայքարում բիզնեսի դերը. Հայաստանյան իրականություն 65
Անի Առաքելյան «ՀՈՒՄԿ» հիմնադրամ	Բուհ-գործատու համագործակցության հիմնախնդիրները հաշվապահների պատրաստման կրթական ծրագրում 89
Զարմիկ Մելիքյան ՀԱԱՀ, ասպիրանտ	Մենդարոյունաբերության ռազմավա- րական զարգացման միտումները և ներդրումները ՀՀ-ում 101
Արմինե Մեծումյան ՀԱԱՀ, ասպիրանտ	Կառավարչական հաշվառման գործա- ռույթների առանձնահատուկ շրջա- նակը 113

Մահջուր Համիդոեզա ԵԿՏԱ, հայցորդ	Բլոկչեյնը և «խելացի» պայմանագրերը վերաձևակերպում են բիզնես գործընթացը	125
Արմեն Հակոբյան տ.գ.դ.	Տրանսֆերային գնագոյացման բնագավառում կառավարչական հաշվառման գործառույթները	142
Մհեր Կանդայան տ.գ.թ, ACCA	ՖՀՄՍ 9 ստանդարտի ներդրման հիմ- նախնդիրները և մարտահրավերները ֆինանսական հաստատությունների համար	152

Թամարա Հովակիմյան
տ.գ.թ., դոցենտ,
Սուրեն Հովակիմյան
տ.գ.թ.

**ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՏԵՂՆ ՈՒ ԴԵՐՆ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՆԵՐԿԱ
ԳՈՐԾՆԹԱՑՆԵՐՈՒՄ**

Հիմնաբառեր – հաշվապահական հաշվառման համակարգ, Բրիտանա-Ամերիկյան, Կոնտինենտալ, Հարավային Ամերիկայի, Արևմտյան Եվրոպայի և Իսլամական երկրների հաշվապահական հաշվառման մոդելներ, ֆինանսական կայունություն, հեջավորման գործիքներ, ռազմավարական ռիսկ

Ներկայիս տեղեկատվական տեխնոլոգիաների բուռն զարգացումը, ուղեկցվելով նոր տնտեսական փոխհարաբերությունների և ոչ ավանդական ֆինանսական գործիքների արագ մշակման և ներդրման գործընթացներով, էականորեն բարդացնում են ոչ միայն կազմակերպությունների միջև ձևավորված հաշվարկային հարաբերություններն, այլև հաշվառման ավանդական համակարգերը: Ժամանակակից աշխարհում տեղեկատվությունը դարձել է ռեսուրս, իսկ ցանկացած երկրում ֆինանսատնտեսական իրավիճակի ամենաառանցքային և հիմնական տեղակատվության աղբյուրը հաշվապահական հաշվառման համակարգն է, որը թույլ է տալիս ոչ միայն ստեղծել ամբողջական պատկերացում կազմակերպության գործունեության, ֆինանսական, տնտեսական, արտադրական հզորությունների մասին, այլև այդ տրվ-

յալների հավաքական ամբողջականությունը թույլ է տալիս ստանալ տվյալ երկրի միկրո և մակրոտնտեսական միջավայրերի հայելային պատկերը:

Ուստի, բոլորովին պատահական չէ, որ աշխարհի գրեթե բոլոր երկրներում, չնայած դրանցում առկա բազմազանություններին, այնուամենայնիվ, հաշվապահական հաշվառումը դիտվում է ոչ միայն երկրների տնտեսական հարաբերությունների սերտաճման և կարգավորման, այլ նաև որպես տնտեսական և սոցիալական զարգացման հիմնախնդիրների լուծմանն ուղղված գիտական, կիրառական և տեսական նշանակություն ունեցող սոցիալ-տնտեսական համակարգ: Ավելին, հաշվառումը տնտեսագիտական ինքնուրույն գիտելիքահեն ոլորտ է, որն ունի իր փիլիսոփայությունը, ուսումնասիրության առարկան, մեթոդը, օբյեկտները և սուբյեկտները և, նույնիսկ իր միջազգային զինանշանը, որը մշակվել է 1944 թվականին Ֆրանսիացի գիտնական Ժան Բատիստ Դյումարշեի կողմից¹:



Զինանշանն արտացոլում է հաշվառման փիլիսոփայությունը, որը կառուցված է երեք հետևյալ գաղափարական արժեքների վրա՝ գիտություն, խիղճ և անկախություն, իսկ զինանշանի երեք պատկերներից յուրաքանչյուրն ունի իր խորհրդանշական իմաստը: Արևը՝ հաշվապահական հաշվառումը լուսավորում է տնտեսական գործունեությունը, կշեռքը՝ հաշվապահական հաշվեկշիռն է, իսկ Բերնուլի կորը՝ հաշվառումը, ի հայտ գալով մեկ անգամ, կմնա հավերժ:

¹ <https://yvision.kz/post/344725>

Ներկայիս հաշվապահական հաշվառման համակարգը, ի հայտ գալով խոր միջնադարում (XV դար), անցնելով իր էվոլյուցիոն փուլերը տարբեր երկրներում, ձևավորել են տարբեր մոդելներ: Գործող հաշվառման համակարգերը կարելի է խմբավորել հետևյալ հիմնական մոդելներով՝ Բրիտանա-Ամերիկյան, Կոնտինենտալ, Հարավային Ամերիկայի, Արեւմըտյան Եվրոպայի և Իսլամական երկրների²: Բրիտանա-Ամերիկյան մոդելն առաջին անգամ կիրառվել է ԱՄՆ-ում և Մեծ Բրիտանիայում, մոդելի զարգացման գործում մեծ ներդրում է ունեցել նաև Հոլանդիան, այդ իսկ պատճառով հաճախ այն անվանում են Բրիտանա-Ամերիկյան-Հոլանդական մոդել: Հետագայում այս համակարգը լայնորեն տարածվեց նաև աշխարհի շատ երկրներում, հիմնականում զարգացած, որոնց բնորոշ է ցածր գնաճ, զարգացած ներդրումային և ածանցյալ արժեթղթերի շուկաներ: Այդ երկրներում կազմակերպությունները իրենց ֆինանսավորման պահանջները լրացնում են մեծաքանակ մանր ներդրողների միջոցների հաշվին, հետևաբար, թույլ կախվածություն ունեն բանկային համակարգից, բարձր են մասնագիտական գիտելիքների պահանջները ոչ միայն հաշվապահներից, ֆինանսական կառավարիչներից, այլ նաև ներդրողներից և հաշվետվություններից օգտվող այլ շահառուներից³: Այդպիսի երկրներից են՝ ԱՄՆ-ը, Ավստրալիան, Մեծ Բրիտանիան, Նիդերլանդները, Վենեսուելան, Հոնկոնգը, Իսրայելը, Հնդկաստանը, Իռլանդիան, Մեքսիկան, Նիգերիան, Նոր Զելանդիան, Սինգապուրը, Ֆիլիպինները, Յամայկան և այլն: Այս երկրներում հաշվառ-

² ISSN 2219-7869. НАУЧНЫЙ ВЕСТНИК ДГМА. № 1 (22Е), 2017. Ст. 188-198

³ <https://megaobuchalka.ru/5/25919.html>.

ման համակարգը միտված է ապահովելու արժանահավատ և ամբողջական տեղեկություններ փոքր ներդրողների լայն շրջանակների համար, և, որպես կանոն, այստեղ բացակայում է հաշվառման համակարգի օրենսդրական կարգավորման կոշտ մոտեցումների կիրառությունը և առաջնորդվում են «ինչը արգելված չէ օրենքով, ուրեմն կարելի է» սկզբունքով: Իսկ հաշվետվություններում տվյալներն արտացոլվում են սկզբնական արժեքներով, առանց գնաճային գործընթացների ազդեցության հաշվառման: Մոդելին բնորոշ է միկրոտնտեսական կարգավորման միտում, հիմնականում ինքնարժեքի իջեցման ուղիների մշակում և շահույթի բարձրացմանը միտված ֆինանսական գործիքների կիրառում:

Կոնտինենտալ մոդելը առաջին անգամ կիրառվել է Կենտրոնական Եվրոպայի երկրներում: Հաշվառման այս համակարգի մեթոդական զարգացման գործում մեծ ներդրում է ունեցել Ճապոնիան, իսկ հետագայում դարձել է նաև դրա կիրառողը: Մոդելի առանձնահատկություններից է՝ կախվածությունը պետական կարգավորման մարմիններից և բանկային համակարգից, որպես կազմակերպությունների ֆինանսական պահանջների բավարարման հիմնական աղբյուր: Մոդելը կիրառվում է Ճապոնիայում, Ավստրալիայում, Բելգիայում, Գվինեայում, Հունաստանում, Դանիայում, Եգիպտոսում, Իսպանիայում, Իտալիայում, Լյուքսեմբուրգում, Մալիում, Մարոկկոյում, Նորվեգիայում, Պորտուգալիայում, Սենեգալում, Ֆրանսիայում, Գերմանիայում, Շվեյցարիայում, Շվեդիայում և այլ երկրներում: Այս երկրների հաշվառման համակարգին բնորոշ է հաշվառման վարման և հաշվետվողականության խիստ պետախրավական կարգավորման մոտեցում, որը ծառայում է պետության շահերի բավարարմա-

նը հարկահավաքության վարչարարական կարգավորմամբ երկրի մակրոտնտեսական պլանավորման նպատակներին:

Հարավ-ամերիկյան մոդելը ձևավորվել է հարավամերիկյան տարածաշրջանն ընդգրկող երկրներում, ինչով էլ պայմանավորված է մոդելի անվանումը: Ի տարբերություն բրիտանա-ամերիկյան մոդելի, այս համակարգը ուղղված է գնաճից առաջացող կորուստների հաշվառմանը: Այս մոդելին բնորոշ է հաշվառման տվյալների ճշգրտումը՝ կախված գնաճի տեսլանից, հաշվառումը և հաշվետվողականությունը միտված են հիմնականում պետական կարիքների պլանավորման նպատակին, հաշվառումը վարվում է միասնական սկզբունքներով: Ֆինանսական հաշվետվություններն ապահովում են մանրամասն տեղեկություններ հարկային պարտավորությունների կատարման գործընթացների վերաբերյալ և գտնվում են հարկային մարմինների խիստ վերահսկողության ներքո: Մոդելը կիրառվում է Արգենտինայում, Բոլիվիայում, Բրազիլիայում, Պարագվայում, Պերուում, Ուրուգվայում, Չիլիում, Էկվադորում և այլ նոր զարգացող երկրներում:

Իսլամական հաշվառման համակարգը Էականորեն տարբերվում է նշված բոլոր մոդելներից, ձևավորվելով կրոնական գաղափարախոսության ներքո, ունի սկզբունքային որոշ առանձնահատկություններ: Օրինակ, այդ երկրներում արգելվում է ստանալ ֆինանսական ներդրումների դիմաց դիվիդենտներ, իսկ ակտիվները և պարտավորությունները գնահատվում են շուկայական արժեքներով: Իսլամական տնտեսությունը կառուցվում է բացառապես Իսլամի օրենքներով, քանի որ միայն Իսլամը կարող է ապահովել նյութական և հոգևոր արժեքների հավասարակշռություն:

Արևմտաեվրոպական մոդելը կիրառվում է գրեթե բոլոր հետխորհրդային երկրներում՝ Ռուսաստան, Բելառուս, Ղազախստան, Հայաստան և այլն, որոնց բնորոշ են մեծածավալ ստվերային տնտեսության առկայությունը, միասնական հաշվառման պահանջները, հաշվառման և հաշվետվողականության հրահանգավորված օրինակելի ձևերը և մոտեցումները: Մոդելին բնորոշ է հիմնականում հարկային վարչարարության խիստ վերահսկողությունն ու կարգավորումը, հարկման համակարգերի միասնականությունը, կարգավորման նպատակը հարկերի հավաքագրումն է:

Հարկ է նկատել, որ նշված գրեթե բոլոր երկրներում հաշվառումը վարվում է ձևով նույն ՀՀՄՄ-ների պահանջներից ելնելով, իսկ հաշվետվությունները պատրաստվում են ՖՀՄՄ-ների պահանջների համաձայն, բայց, այնուամենայնիվ, ինչպես տեսանք, դրանց հաշվառման համակարգերը տարբեր են ըստ բովանդակության՝ կախված յուրաքանչյուր երկրի սոցիալ տնտեսական իրավիճակից և երկրի տնտեսության ռազմավարական գերակայություններից: Բացի դրանից, յուրաքանչյուր ոչ միայն երկիր, այլ նաև կազմակերպություն ունի իր անկախության որոշ աստիճանը սեփական հաշվառման քաղաքականությունը մշակելիս, որոնք նախատեսվում են գործող ՀՀՄՄ-ների և ՖՀՄՄ-ների այլընտրանքային մոտեցումներում: Ասվածը հիմք է տալիս արձանագրելու, որ տարբեր երկրներում կիրառվող հաշվապահական հաշվառման համակարգերի արդյունավետությունը, անկախ գործող մոդելից, հիմնականում կախված է տվյալ երկրում հաշվառման համակարգի արդյունավետ կառավարումից և կազմակերպումից, ելնելով երկրին բնորոշ վերը նշված առանձնահատկություններից և ներուժից: Որպես կանոն, առավել արդ-

յունավետ հաշվառման համակարգեր բնորոշ են այնպիսի զարգացած երկրներին, ինչպիսիք են Անգլիան, Ֆրանսիան, Գերմանիան, ԱՄՆ-ը, Կանադան, իսկ ասիական երկրներից՝ Չինաստանը, Ճապոնիան, Հարավային Կորեան: Ավելին, Ասիական տարածաշրջանի երկրները, շնորհիվ այդ երկրներին բնորոշ առանձնահատկությունների, վերջին տասնամյակում արձանագրում են առավել բարձր տնտեսական աճի տեմպ, քան նույնիսկ շատ զարգացած Եվրոպական երկրներ: Այդ երկրներից շատերը, հատկապես Չինաստանը, կենտրոնացնում է ուշադրությունը հիմնականում հաշվառման համակարգի հսկողության և կառուցվածքային կառավարման հիմնախնդիրների լուծման վրա՝ այդ նպատակին հասնելու համար կիրառելով նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաներ և ավտոմատացման համակարգեր:

Հարկ է նշել, որ, ըստ էության, կիրառելով գրեթե նույն հաշվետվողականության պահանջները և հաշվետվությունների փաթեթը, Չինաստանում այդ հաշվետվությունները գտնում են իրենց նպատակային այլ կիրառությունները, օրինակ, սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությանը կցվում է կազմակերպության ակտիվների որակական գնահատականները, դրանց մանրակրկիտ բնութագրությունը և դրանց փոփոխությունների կանխատեսումը ապագայում: Այսինքն, ֆինանսական հաշվետվություններում արտացոլված տվյալները, որոնք իրենց տողատակերում պարունակում են որոշակի տեղեկություններ կազմակերպության գործունեությանը բնորոշ հնարավոր ռիսկերի առկայության մասին, ենթարկվում են մանրամասն ուսումնասիրությունների՝ բացահայտելու համար կազմակերպություն-

ների տնտեսական և ֆինանսական կայունության մակարդակը:

Հատկանշական է, որ, Չինական կառավարությունը նույնպես, ինչպես նաև Հայաստանինը, հատուկ ուշադրություն է դարձնում փոքր և միջին բիզնեսի զարգացմանը, հավաստարիմ մնալով 2014 թվականին փոքր և միջին ձեռնարկություններում ներդրումների խթանմանը նվիրված համաշինական ֆորումում հնչեցրած տնտեսական զարգացման հայեցակարգին՝ համաձայն որի «փոքր և միջին ձեռնարկությունները հանդիսանում են չինական տնտեսության այն հիմնարար ամուր հիմքը, որոնց վրա պետք է հենվի Չինաստանի ապագա տնտեսությունը⁴»: Ըստ էության, առաջին հայացքից հայեցակարգը թվում է նույնը, բայց տարբերությունը նպատակին հասնելու ուղիների ընտրության մեջ է: Մասնավորապես, Չինաստանում փոքր ձեռնարկությունների հաշվետվողականությանը ներկայացվող պահանջները ավելի ծավալուն են և պահանջում են ավելի շատ տեղեկատվության տրամադրում փոքր ձեռնարկատիրության գործունեության վերաբերյալ, քան Հայաստանում: Հիմնական տարբերությունը ձեռնարկության տարեկան ֆինանսական հաշվետվություններում արտացոլված տվյալների մեկնաբանություններն են, որոնք անմիջականորեն վերաբերում են տվյալ կազմակերպությանը: Շատ կազմակերպություններ, ֆինանսական հաշվետվություններից բացի, ներկայացնում են նաև դեկավարության կողմից իրականացվող ֆինանսական ուսումնասիրություն, որը նկարագրում և բացատրում է կազ-

⁴ «Система бухгалтерского учета на малых предприятиях», утвержденном Министерством финансов КНР 27.04.2004. Основные.

մակերպության ֆինանսական արդյունքների և ֆինանսական վիճակի հիմնական հատկանիշները, ինչպես նաև սկզբունքային անորոշությունների վերաբերյալ որոշակի դիտարկումներ է կատարում⁵:

Ինչպես ցանկացած կազմակերպության ֆինանսական մենեջեր կամ ռիսկի կառավարիչ, այնպես էլ ցանկացած երկրի հարկաբյուջետային քաղաքականություն մշակող մարմին պետք է ճշտեն երկրում գործող կազմակերպությունների ֆինանսական վիճակը և բացահայտեն այն ռիսկերը, որոնք կարող են ծառանալ իրենց առջև՝ պատասխանելով մի շարք հարցերի: Դրանք են՝

1. Ինչպիսի՞ն է իր արտադրած ապրանքների պահանջարկը շուկայում:

2. Ընդարձակվո՞ւմ, թե՞ կրճատվում են իր գործարար շրջանակները:

3. Ինչպե՞ս են փոփոխվում կազմակերպության տարեկան հասույթի ցուցանիշը և ապրանքանյութական պաշարների պտույտների արագությունը:

4. Ինչե՞ս են փոփոխվում գործառնական ծախսերի հարաբերակցությունը տարեկան հասույթի նկատմամբ:

5. Հնարավո՞ր են պետենցիալ կորուստներ արտարժույթային գործառնություններից:

6. Որքա՞ն են կազմում արտահանման ծավալները ընդհանուր արտադրության նկատմամբ, և ի՞նչ ռիսկեր կարող են առաջանալ դրանց ծավալների մեծացումից:

⁵ Հավելված ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 11-ի N 235-Ն որոշման:

7. Ինչպե՞ս է կազմակերպությունը սպասարկում իր պարտավորությունները, ինչպիսի՞ միտումներ են նկատվում՝ աճի՞, թե՞ նվազման, և ինչպիսի՞ն է նրա զգայունությունը տոկոսադրույքների տատանումների նկատմամբ:

8. Որքա՞ն է նրա երկարաժամկետ պարտավորությունների տեսակարար կշիռը գործող կապիտալում:

9. Կազմակերպությունը ինչպիսի՞ հարկային խնդիրներ ունի:

Այդ հարցադրումներին պատասխանելու համար, պարզությամբ առավել նախընտրելի է կազմակերպության «Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն» մոդելի կիրառումը, որը կառուցելու համար նախ պետք է խնամքով մուտքագրել հաշվետվություններում առկա բոլոր այն հոդվածները, որոնք ռիսկեր են պարունակում: Այնուհետև, առանձին բլոկում, որը կոչվում է կանխատեսումների բլոկ (assumptions block), մուտքագրվում են այն հնարավոր կանխատեսելի ընթացիկ գները, որոնք սպասվում են դիտարկվող հաշվետու ժամանակաշրջանում: Այնուհետև, առաջին բլոկում մուտքագրված տվյալները կորրեկցվում են կանխատեսումներում բերված գների հետ, որի շնորհիվ հնարավոր է դառնում ստանալ դրանցում առկա այն փոխադարձ գործառական կապը, որն ընկած է կազմակերպության ծախսերի և եկամուտների միջև: Այսպիսով, ունենալով դիտարկվող տոկոսադրույքների, գների փոփոխությունների, փոխարժեքների տատանումների գործառական ազդեցությունը կազմակերպության հասույթի կամ շահույթի վրա, կարելի է ստանալ կազմակերպության տվյալ ժամանակաշրջանի հրնարավոր ֆինանսական արդյունքները: Զարգացած երկրների շատ կազմակերպություններ արդեն վաղուց օգտագոր-

ծում են այս մոդելը իրենց ռազմավարական ռիսկերի կառավարման համար: Հարկ է նշել, որ ՀՀ ֆինանսական միջնորդություն իրականացրող կազմակերպությունները, վաղուց արդեն, օգտագործում են ռիսկերի կանխարգելման մեխանիզմներ, ավելին, դրանց նկատմամբ կիրառվում են ռիսկերի վերահսկողության պարտադիր նորմատիվներ: Արտադրական տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ, որոնց գործունեությամբ է հիմնականում պայմանավորված երկրի տնտեսական կայուն զարգացման գրավականը և ֆինանսական կայունությունը, դեռևս այդպիսի որևէ պահանջ կամ վերահսկողություն Հայաստանում չի իրականացվում: Մինչդեռ, ինչպես ցույց են տալիս ՀՀ ֆինանսական կայունության ցուցանիշի ռեգրեսիոն վելուծությունները, երկրի մակրոտնտեսական (արտահանում, ՀՆԱ, ներկրում, արտաքին պետական պարտք, տրանսֆերտներ) ցուցանիշների հետ, կորրելյացիայի գործակիցը ստացվում է $R=0.91$, դետերմինացիայի գործակիցը՝ $R \text{ Square} = 0.83$, ինչը վկայում է դիտարկվող ցուցանիշների և կայունության բարձր աստիճանի կապի առկայության մասին⁶: Սակայն, դիտարկվող գրեթե բոլոր ցուցանիշները, բացառությամբ արտահանման, երկրի կայունության վրա ունեն տարբեր մակարդակի բացասական ազդեցություններ:

Հետևաբար, եթե համապատասխան պետական հարկաբյուջետային քաղաքականության մշակող, վերահսկող և կարգավորող մարմինները ստեղծեն կազմակերպու-

⁶ Հովակիմյան Սուրեն Ալբերտի, «ՀՀ ֆինանսական կայունության ապահովման արդի հիմնահարցերը», սեղմագիր, Երևան, 2016:

թյունների ֆինանսական կայունության գնահատման տվյալների բազա, անկախ կազմակերպության չափերից, ապա դա հանրապետությունում հնարավորություն կստեղծի՝

- բարձրացնել տնտեսվարող սուբյեկտների գործարար ակտիվությունը,
- կրճատել գործազրկության մակարդակը,
- բարձրացնել բնակչության սոցիալական ապահովվածության աստիճանը,
- ապահովել երկրում կայուն տնտեսական աճ:

Նշված նպատակներին հասնելու համար առավել կարելի է հիմնահարց է հնարավոր ռիսկերի կառավարման լուծմանն ուղղված գործընթացների կազմակերպումը հանրապետությունում: Սակայն, բարձրացված հիմնահարցերը լուծելու ուղիներն արդեն շաղկապվում են ֆինանսական շուկաների զարգացման հիմնախնդիրների հետ, քանի որ դրանց կառավարման արդյունավետությունը պահանջում է ոչ թե հեջավորման մեկ գործիքի, այլ տարբեր հնարավորություններ ստեղծող բազմազան գործիքների առկայություն, որտեղ յուրաքանչյուր կազմակերպություն ինքը պետք է ընտրի իր համար ընդունելի հեջավորման գործիքը իր կողմից գերակա դասվող ռիսկերի նկատմամբ:

ԱՍՓՈՓՈՒՄ

Հոդվածում ուսումնասիրվել են տարբեր երկրների հաշվապահական հաշվառման համակարգերը և դրանցում գործող հաշվառման մոդելները: Դիտարկելով հաշվապահական հաշվառման համակարգը որպես երկրի ֆինանսատնտես-

սական իրավիճակի վերաբերյալ առանցքային տեղեկատվություն ապահովող ռեսուրս, կատարվել է, ինչպես ՀՀ և ստորեր երկրների հաշվառման համակարգերի, այնպես էլ դրանց կարգավորման ուղիների համեմատական վերլուծություն: Ուսումնասիրությունների արդյունքների հիման վրա կատարվել են համապատասխան եզրահանգումներ և առաջարկություններ:

Tamara Hovakimyan

Ph.D. in Economics, professor, YSU

Suren Hovakimyan

Ph.D. in Economics

THE PLACE AND ROLE OF THE ACCOUNTING SYSTEM IN MODERN INFORMATION TECHNOLOGY PROCESSES

***Keywords** – accounting systems, accounting models of the British-American, continental, South American, Western European and Islamic countries, financial stability, hedging instruments, strategic risk*

The article studies the accounting systems of different countries and models operating in them. Considering the accounting system as the main resource providing information on the country's financial and economic situation, a comparative analysis was carried out, not only accounting systems of the Republic of Armenia with accounting systems of different countries, but also with the regulations in these countries. Based on the results of the study, relevant conclusions and recommendations were made.

Тамара Овакимян

к.э.н., доцент

Сурен Овакимян

к.э.н.

МЕСТО И РОЛЬ СИСТЕМЫ УЧЕТА В СОВРЕМЕННЫХ ПРОЦЕССАХ ИНФОРМАЦИОННЫХ ТЕХНОЛОГИЙ

Ключевые слова – системы бухгалтерского учета, модели бухгалтерского учета британо -американских, континентальных, южноамериканских, западноевропейских и исламских стран, финансовая стабильность, инструменты хеджирования, стратегический риск

В статье изучаются системы учета различных стран и действующие в них модели учета. Рассматривая систему бухгалтерского учета в качестве основного ресурса, предоставляющего информацию о финансово-экономическом положении страны, был проведен сравнительный анализ, не только систем бухгалтерского учета Республики Армения с системами учета разных стран, но и их регулирования в этих странах. На основании результатов исследования были сделаны соответствующие выводы и рекомендации.

Ներկայացվել է՝ 20.03.2019 թ.

Ընդունվել է և լրացրել է՝ 19.04.2019 թ.

**ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ
ՄԵԹՈԴՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**

Հիմնաբառեր – կառավարում, սուբյեկտ-օբյեկտային փոխազդեցություն, կառավարման սոցիալ-հոգեբանական մեթոդ, հրամայել, համոզել, հիմնավորել, կառավարման արդյունավետություն

Անոտացիա. Հոդվածում քննարկվում է կառավարման տեսության և պրակտիկայի կարևոր թեմաներից մեկը՝ կառավարչական ազդեցության մեթոդների ընտրության հարցը: Կառավարումը համատեղ գործող մարդկանց ջանքերի համախմբման և ուղղորդման գործունեություն է, նաև միջանձնային հաղորդակցման տեսակ, ուստի առարկայական և ենթակայական բնույթի մի շարք գործոններ և հանգամանքներ էական նշանակություն ունեն կառավարման որոշակի մեթոդն ընտրելիս: Հաշվի առնելով մասնագիտական գրականության մեջ նկարագրված և իրական կյանքում գործադրվող մեթոդները, հեղինակն առաջարկում է սեփական հայեցակարգը՝ յուրատեսակ «3 Հ»-ի կանոնը՝ կառավարչական գործունեության «հրամայել – համոզել – հիմնավորել» մեթոդաբանական եռամիասնական հարացույցը: Դրանցից ամեն մեկն ունի կիրառման իր տիրույթը, առավելությունները և սահմանափակումները, որոնց իմացությունը դյուրացնում է կառավարման սուբյեկտի աշխատանքը:

քը և նպաստում կառավարման ամբողջական համակարգի գործառնության արդյունավետությանը:

Կառավարումը սուբյեկտ-օբյեկտային փոխհարաբերության տեսակ է, երբ կառավարող սուբյեկտը ձգտում է ազդել օբյեկտի վրա, ուղղորդել վերջինիս վարքը որոշակի նպատակի իրականացմանը: Ասելով «փոխհարաբերություն»՝ ընդգծում եմ փոխադարձության հանգամանքը, «սուբյեկտ – օբյեկտ» հարաբերության երկկողմանի բնույթը, այլ կերպ ասած՝ կառավարման օբյեկտի (անհատ կամ խումբ) սուբյեկտային հատկանիշը, ընդ որում՝ երկու իմաստով: Նախ՝ հետադարձ կապի առկայությունը, երբ ենթական ինքը որոշակիորեն ազդում է դեկավարի վրա, երկրորդ՝ օբյեկտն ինքը հանդես է գալիս որպես գործունյա սկիզբ՝ արդեն գործադրելով աշխատանքի միջոցներ, ազդելով աշխատանքի առարկայի վրա, հետամուտ լինելով որոշակի նպատակների իրականացմանը: Կառավարումն, այսպիսով, այն պահից է սկսվում, երբ որևէ մեկը ինչ-որ գործ անձամբ անելու փոխարեն (անձամբ անելիս՝ «կառավարում», որպես սուբյեկտ-օբյեկտային փոխազդեցության տեսակ, առհասարակ գոյություն չունի), դա անում է ուրիշի միջոցով: Այլ կերպ ասած՝ կառավարման սուբյեկտը օբյեկտի կարիքն ունի հանուն սեփական նպատակադրումների միջնորդավորված իրականացման:

Ակնհայտ է, որ սուբյեկտ-օբյեկտային փոխազդեցության մեջ առաջատարը կառավարման սուբյեկտն է, քանի որ նրան է պատկանում տվյալ համակարգի նպատակադրումը: Նպատակը սուբյեկտային իրողություն է՝ պարփակված նպատակադրողի ներաշխարհում: Առարկայական ձև ստանալու համար նպատակը պիտի կորցնի իր սուբյեկտայնու-

թյունը, կառավարողից փոխանցվի կառավարվողին և ուղղորդի վերջինիս գործողությունները: Կառավարման աշխատանքը, հետևաբար, սուբյեկտայինի տեղափոխումն է օբյեկտայինի ոլորտ, սուբյեկտի օբյեկտացումը: Այս առումով «ղեկավար – ենթակա» համակարգում կառավարումը, իսկ ավելի ստույգ իմաստով, կառավարման աշխատանքն անմիջաբար չի ուղղված նպատակի իրականացմանը. վերջինս տեղի է ունենում կրկնակի միջնորդավորմամբ. նպատակը, նախ՝ ղեկավար-կառավարչից հաղորդվում է ենթակա –կառավարվողին, այնուհետև՝ նպատակը դառնում է ենթակայի առջև դրված խնդիր և իրականացվում որպես նրան տրված աշխատանքային հանձնարարություն: Այս փուլում արդեն կառավարվողը, որպես աշխատանքի սուբյեկտ, միջնորդավորում է սեփական գիտելիքն ու հմտությունները՝ այդկերպ իրականացնում կառավարողի նպատակը:

Կառավարաբանության մեջ գործածվում է «կառավարման մեթոդ» եզրը, որն էլ, փաստորեն, միջնորդավորման տարատեսակն է գիտական ճանաչողության տվյալ ասպարեզում: Ընդունված է կառավարման մեթոդների հետևյալ դասադասումը՝ տնտեսական, վարչակազմակերպական և սոցիալ-հոգեբանական: Տնտեսականը ներառում է աշխատավարձը, հավելավճարները, պարգևատրումները, տարատեսակ արտոնությունները (որոնք հնարավոր է արտահայտել գումարային ձևով): Վարչակազմակերպականը կազմակերպական և կարգադրական ազդեցության եղանակներն են, համատեղ աշխատող մարդկանց արտադրական փոխհարաբերությունների կարգավորումը նորմատիվների և կարգապահական նորմերի համակարգի միջոցով: Սոցիալ-հոգեբանական մեթոդները ուղղված են աշխատակազմի ներսում

չձևայնացած կառուցվածքների (փոքր խմբեր), բարոյահոգեբանական մթնոլորտի, աշխատանքի գործուն շահամիտման, կառավարման մշակույթի կարգավորմանը⁷: Միջնորդավորման՝ օբյեկտի վրա ազդեցության միջոցների դաստասման ուրիշ հիմքեր էլ են հնարավոր, այլ կերպ ասած՝ կառավարման մեթոդներ ըստ տևողության (երկարատև կամ կարճատև, անփոփոխ կամ անցողիկ), ձևայնացման աստիճանի (խստիվ ձևակերպված կամ հեղեղուկ, առավելապես իրավական կամ առավելապես բարոյական), հաղորդման եղանակի (ուղղակի կամ անուղղակի, խոսքային կամ ոչ խոսքային), հիմնավորման բնույթի (տրամաբանական կամ հուզական), հիմնավորվածության աստիճանի (լիովին կամ թերի), շահամիտման տեսակի (նյութական, հոգևոր, պաշտոնական առաջխաղացմանն առնչվող), հրատապ պահանջումների (օրինակ՝ նախկին գործագուրկի համար՝ ապահովության, նորավարտ մասնագետի համար՝ աճի) և այլն:

Կառավարման հիմնարար խնդիրներից մեկն առավել արդյունավետ մեթոդի ընտրությունն է: Այս առումով ընթերցողի ուշադրությանն են ներկայացնում կառավարման սոցիալ-հոգեբանական մեթոդների՝ «հրամայել – հանոզել – հիմնավորել» իմ հայեցակարգը: Առաջինն արդեն հայտնի վարչահրամայական մեթոդի էությունն է (իրավական բնութագրմամբ՝ պատկանում է «կարգադրական» մեթոդների շարքին). այստեղ կառավարողը գործադրում է իր իշխանական առավելությունը, այսինքն՝ իր ավելի բարձր դիրքը կազմակերպական աստիճանակարգում, հենվում է առավելա-

⁷ Տե՛ս Մենեջմենթ / ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Յու.Մ.Սուվարյանի ընդհ. խմբ., չորրորդ՝ լր., բարեփ. հրատ., Եր. Տնտեսագետ, 2016, էջ 219 – 230:

պես իրավական հիմքերի վրա, օգտագործում վարչական լծակներ: Այս մեթոդի գործադրման ծայրահեղ տեսակն անձնիշխանական (ավտորիտար) ոճի կառավարողն է, որ հրամայում է, անվերապահ պահանջում, երբեմն ուղղակի դրսևվորում արհամարհանք կառավարվողի սեփական կարծիքի հանդեպ, բացահայտ ցուցադրում իր պաշտոնի, կարգավիճակի գերազանցությունը ստորադասների հանդեպ: Բրիտանացի նշանավոր սոցիալական հոգեբան Դենիել Գոլմանը նույնիսկ հատուկ հասկացություն է շրջանառության մեջ դրել՝ «թունավոր ղեկավար» (toxic boss). այսպիսի կառավարիչն այնքան կոպիտ է, գոռոզամիտ, արհամարհալից, որ ընտրություն ունեցող ենթակաները չեն ցանկանում մնալ նրա ենթակայության տակ և ոչ մի վարձատրության գնով, իսկ հարկադրված աշխատողները ձեռք են բերում նյարդային և սրտանոթային զանազան հիվանդություններ⁸:

Որպես կառավարման միջոց՝ հրամանը ազդեցիկ է, քանի որ կառավարվողը կախման մեջ է կառավարողից, կարող է ենթարկվել դրամական և կարգապահական տույժերի: Բացի դրանից, սոցիալականացման ընթացքում անհատը (տարբեր մշակույթների շրջանակներում տարբեր չափով) սովորում է նաև ենթարկվել հեղինակությանը՝ ավագի, ղեկավարի, պաշտոնյայի, ինչի շնորհիվ էլ, առհասարակ, իսկ գործարար կյանքում, ներկազմակերպական իշխանական աստիճանակարգվածության պայմաններում հատկապես հեշտանում է հրամայելու մեթոդի կիրառումը: Վարչահրամայական մեթոդներին խարսխվող կառավարման տեսակի

⁸ Տե՛ս D. Goleman, *Social Intelligence: The New Science of Human Relationships*. London: Arrow Books, 2006, pp. 227 – 230, 280

հարացույցը կարելի է անվանել «ուղղաձիգ միջնորդավորում», քանի որ կառավարումը իրականացվում է «գերադասություն – ստորադասություն» առանցքով: Այս տեսակի կառավարման հիմքում ընկած է կառավարման սուբյեկտի և օբյեկտի կարգավիճակների անհավասարությունը. հենց վերջինըս էլ, որպես կանոն, ծառայում է իբրև հրաման արձակելու և դրա կատարումը պահանջելու անվիճարկելի իրավունք:

Կառավարման մյուս մեթոդը համոզումն է, որ տարածված է մասնակցային, մասամբ նաև հսկողական կառավարման համակարգերում: Այստեղ հմուտ կառավարիչը կարողանում է համոզել, ոգևորել, ներշնչել, խոստումներ տալ, խանդավառել, գործադրել մարդկային վերաբերմունքի այլեվայլ երանգներ, ստեղծել ջերմ, ընկերական փոխհարաբերությունների մթնոլորտ: Համոզման դեպքում չկա «հրաման – կատարում» կոշտ ուղղաձիգը՝ սրան բնորոշ կարգավիճակային հարկադրանքով: Ընդհակառակը, կառավարման հիմքում ընկած է կառավարման սուբյեկտի և օբյեկտի կարգավիճակների (թեկուզ՝ երևութական) հավասարությունը:

Ուստի, այսօրինակ կառավարման հարացույցը կարելի է անվանել «հորիզոնական միջնորդավորում»: Բուն աշխատանքը դարձյալ ենթական է կատարում, ղեկավարն է նրան առաջադրում անելիքը, սակայն դա իրականացվում է ոչ թե վերից վար, այլ որպես յուրատեսակ «համահավասարության» հաստատում: Կառավարողը չի ճնշում իր դիրքով, չի շեշտում կարգավիճակի առավելությունը, չի անտեսում ենթակայի կարծիքը, չի սպառնում տույժերով. ժպտերես է, բաց, մատչելի, պատրաստ է ընդառաջելու:

Վաղուց է արձանագրված, որ կառավարման երկու մեթոդն էլ ունեն դրական ու բացասական կողմեր: Մասնավոր

րապես, հրամանը, որպես աշխատողների կամքի ճնշման ձև, արդարացված է, եթե «կառավարիչը ձգտում է կարճաժամկետ նպատակների, սակայն երկարատև հեռանկարում դա բովանդակում է անհամաձայնության վտանգ»⁹: Որքան էլ ենթական հնազանդ լինի, միևնույն է, անվերապահ հրամանը, իր՝ կատարող-ենթակայի հանդեպ հրամայող-կառավարչի անսքող քամահրանքը չեն կարող լինել խանդավառության աղբյուր, իսկ, ինքնին հասկանալի է, պատրաստակամությունը, որպես կանոն, եռանդուն աշխատելու ավելի հզոր խթան է, քան սոսկ վախը, կամ, թեկուզ, վարձատրությունը:

Ուշագրավ է այս առումով Արիստոտելի հետևյալ վերապահումը. անգամ «ի բնե ստրուկի» կառավարման համար (որն ավելի ցածրակարգ է, քան գերությամբ ստրուկ դարձածը) նա հորդորում է հրամայելը զուգորդել ավելի մեղմ ազդեցությամբ. «Մխավում են նրանք, որոնք պնդում են, թե սրտրուկի հետ խոսելու հարկ էլ չկա, թե նրան լոկ հրամաններ է պետք տալ. ո՛չ, ստրուկներն ավելի կարիք ունեն խրատի, քան երեխաները»¹⁰:

Համոզումն, առավելություններով հանդերձ, նույնպես շահամիտման լավագույն ձևը չէ, իսկ եթե համոզումը չափից դուրս ճակատային է, եթե բացահայտորեն գործադրվում են ձեռնաձուական (մանիպուլյատիվ) եղանակներ, ապա ենթակայի մեջ կարող են առաջանալ հոգեկան պատնեշներ, կառավարչի խոսքի և վարքագծի աններդաշնակություն (դիսոնանս), նաև՝ վերջինիս տեղափոխում հենց ենթակայի հոգե-

⁹ W.H. Schmidt, R. Tannenbaum, Management of Differences // Harvard Business Review on negotiation and conflict resolution. Boston, 2000, p. 13.

¹⁰ Аристотель, Политика // Соч. в 4 томах, т. 4, М.: Мысль, 1984, с 401.

կան աշխարհ, երբ արտաքինապես նա լիակատար համաձայնություն է ցուցադրում, իսկ ներքինապես տրամադրվում է «չկամությամբ» աշխատանքի (ինչպես մինչթեյլոբյան «խրթանման և նախաձեռնության» համակարգում էր):

Կառավարչական ազդեցության այս երկու խումբ՝ հրամայման և համոզման, մեթոդների հակապատկերը մասամբ կարելի է լուսաբանել անգլերեն գրականության մեջ հանդիպող կառավարման երկու տեսակների՝ «կոշտ կառավարման» (Hard Management) և «մեղմ կառավարման» (Soft management) համեմատության օրինակով: Առաջինն առավելապես գործարանական (պրագմատիկ) բնույթի է, ապավինում է հիմնականում իշխանության գործադրմանը, աշխատակիցներին դիտարկում է որպես կրավորական պաշար (ռեսուրս): Նման կառավարիչը հակված է հրամայական տոնի, կտրուկ հրամանների, «իր հեղինակությամբ հեշտորեն ձևավորում է վախի և սարսուռի (fear and trembling) մթնոլորտ»¹¹, մինչդեռ երկրորդը կողմնաշված է մարդկային կողմին (human side), հուզական հաղորդակցմանը, նվազ բախումնային է¹², ձգտում է ենթակաների վարքը կառավարել ոչ այնքան իրավական լծակներով, որքան կազմակերպության մշակույթի տարրերի միջոցով¹³:

Համաբանությունը (անալոգիա) այստեղ մասնակի է, քանի որ «կոշտ» և «մեղմ» բնութագրիչները, ըստ իս, արտահայտում են ոչ թե կառավարման մեթոդի էությունը, այլ դրա գործադրման որոշակի ոճը: Կառավարչական ազդեցության

¹¹ http://www.extensor.co.uk/articles/soft_and_hard/soft_and_hard.html

¹² <http://www.hktdc.com/info/mi/a/csr/en/1X002OPB/1/Corporate-Social-Responsibilities/Win-Win-Realization-through-Soft-Management.htm>

¹³ <http://www.theworkitselfgroup.com/>

ամեն մի մեթոդ կարող է գործածվել թե՛ «կոշտ», և թե՛ «մեղմ» կերպով, ավելին՝ միաժամանակ՝ և՛ «կոշտ», և՛ «մեղմ» կախված կառավարչական իրադրության առանձնահատկություններից: Իբրև ապացույց մեջբերենք այն խնդրի ձևակերպումը, որ կառավարաբաններն առաջադրում են կառավարիչներին, այն է՝ «մեղմ կառավարիչ դառնալու դժվարին գործը» (the hard work of being soft manager)¹⁴:

Կառավարողի և կառավարվողի միջև իրական ներդաշնակության հնարավորություն է ընձեռում կառավարման երրորդ՝ հիմնավորման մեթոդը: Կառավարողը ոչ թե սուկ պարտադրում է՝ այդկերպ կամա թե ակամա կառավարվողի մեջ առաջացնելով լարվածություն, դժգոհության կուտակում, նենգադուլի (սաբոտաժ) տրամադրվածություն, ոչ էլ միայն համոզում՝ այդկերպ էլ կառավարվողի մեջ կասկած առաջացնելով հորդորների ու խոստումների անկեղծության հանդեպ: Հիմնավորելիս ենթակային տրվող աշխատանքը՝ կառավարողը վկայակոչում է ներկազմակերպական աստիճանակարգում իրենից վեր ասյանի կամքը, պարտադրանքը, վերնից թելադրվող անհրաժեշտությունը:

Հետևաբար, հիմնավորումը հնարավորություն է ստեղծում վերանձնային փաստարկման, ի լրումն՝ գոյանում է կարգավիճակների հավասարություն, այն է՝ կառավարողն ինքը վերին ասյանի կառավարչի ենթական է, կատարում է վերնիների կարգադրությունը: Ուրեմն՝ երկուստեք ենթարկվում են վերնից բխող «իրերի տրամաբանությանը»՝ լոգոսին. սա յուրատեսակ «հավասար կախվածության» կառավարում է: Այսկերպ մատուցված հրաման լինի, թե համոզում,

¹⁴ Ibidem.

դառնում են ավելի ընկալելի և ընդունելի կառավարվողի համար:

Արդ, հիմնավորումը, որպես միջնորդավորման տեսակ, միավորում է նախորդ երկու տեսակի առավելությունները և հնարավորություն ընձեռում մեղմելու բացասական կողմերը: Իսկապես, կառավարվողը հրամանն ընկալում է առավելապես իբրև կառավարողի անձնիշխանության, կամայականության, անգամ՝ հոռի բնավորության կամ տրամադրության դրսևորում: Համոզելն, անտարակույս, ավելի բարենպաստ արձագանք է գտնում, սակայն կասկած է հարուցում համոզողի անկեղծության հանդեպ՝ հենց որ կառավարվողի համար ակնհայտ է դառնում, որ ինքն ու իր ղեկավարը հավասար վիճակում չեն, նույն օգուտը չեն քաղում, այսինքն՝ համոզելը միակողմանի նպատակուղղվածություն ունի: Բացի դրանից, հրամանով կամ համոզումով ձեռքբերված ենթակայի պատրաստակամությունը հաճախ ոչ թե ղեկավարին ընդառաջ գնալու ինքնակամ ցանկություն է լինում, այլ ղեկավարին չառարկելու սովորություն, հեղինակությանը հարմարվելու, հնազանդվելու, աշխատակազմի մյուս անդամներից չառանձնանալու («չցցվելու»), կուրորեն հնազանդվելու հոգեբանություն, ինչից անփուսափելիորեն տուժում է բուն աշխատանքի արդյունավետությունը: Չէ՞ որ այդպիսի պայմաններում անգամ գիտակ ենթական հակվում է ղեկավարի որոշումները (այդ թվում՝ թերի հիմնավորված կամ ուղղակի սխալ) մեքենայաբար կատարելուն՝ առանց սեփական պատասխանատվության զգացումի:

Հիմնավորման մեթոդը հնարավորություն է ընձեռում հաղթահարելու համոզման գործադրմանը վերաբերող խորքային մի բարդություն, որի մասին զարմանալիորեն ընդգր-

կուն գրել է դեռ Խան Ֆեյը. «Համոզելու բարդությունը սովորաբար այն չէ, թե դժվար է լինում գրուցակցիս համոզել իմ գիտելիքների պակասի պատճառով, ոչ էլ այն, որ ես դժվարանում եմ սեփական մտքերս պարզ դարձնել իմ փաստարկներով, և ոչ էլ այն, որ չեմ համարձակվում մինչև վերջ արտահայտվել պերճախոսությանս պակասի պատճառով. Համոզելու բարդությունը սովորաբար այն է, որ կարողանաս պարզել դիմացինի դիտավորությունները և քո համոզումները դրանց նպատակադրել»¹⁵: Իր ամփոփիչ մտքով չին փիլիսոփան, ըստ էության, անցում է կատարել հենց հիմնավորման մեթոդին, քանի որ դիմացինի դիրքորոշումը պարզաբանելը և ըստ դրա կողմնորոշվելը տրամաբանական փաստարկման գործողություն է, այնինչ համոզելը՝ առավելապես հուզական, հոգեբանական, ճարտասանական (այդ թվում՝ սոփեստական) հնարքների գործադրում. եթե պահպանենք Խան Ֆեյի եզրաբանությունը, ապա կարելի էր, թերևս, միջանկյալ լուծում տալ նշված բարդությանը, այն է՝ «համոզում՝ հիմնավորման միջոցով»:

Դրա հետ մեկտեղ, հիմնավորումը կառավարողից պահանջում է ավելի մեծ հմտություն, քան հրամայելն ու համոզելը. նա պիտի կարողանա ոչ թե սուկ ունկնդրել, իսկապես լսել ենթակային, տրամադրվել և դիմացինին տրամադրել երկխոսության, վարել երկխոսությունը իր համար շահեկան հունով, պիտի տեղյակ լինի փաստարկման հիմունքներին ու կարողանա տեղին կիրառել փաստարկման տարբեր եղանակները:

¹⁵ Хань Фэй-Цзы // Древнекитайская философия, т. 2. М., 1973, с. 232.

Հիմնավորումն է հնարավոր ու առավել արդյունավետ դարձնում «ղեկավար – ենթակա» կապերի միջնորդավորման մի այնպիսի հզոր միջոց, ինչպիսին է մարդկային խոսքը: Առհասարակ, կառավարումը երեք դեպքում էլ կարելի է դիտել որպես կողմերի խոսքային հաղորդակցման տեսակ՝ երկխոսություն, սակայն լոկ հիմնավորման մեթոդն է ապահովում հաղորդակցման շիտակ երկխոսայնությունը: Հրամանի կառավարչական ուժն ամենից առաջ խոսողի դիրքի ընդգծումն է, ոչ թե ինքնին խոսքը՝ կառուցվածքը, տրամաբանությունը, ոճական հնարքները և այլն: Դրանք համոզման դեպքում ավելի են կարևորվում, բայց մեթոդի ազդեցությունը վերջիվերջո, պայմանավորված է խոսողի բարյացակամության, բարեհաճության այլնայլ դրսևորումներով: Հիմնավորման շրջանակում է, որ կողմերը հանդես են գալիս իբրև խոսքի գործադրման հավասարազոր գործակալներ:

Հրամանն ու համոզումը միակողմանի ներգործություն են՝ մենախոսություն: Հիմնավորման դեպքում է միայն հնարավոր լիարժեք փաստարկում և հակափաստարկում, տեսակետների համադրում, վերլուծություն, արժեքավորում, այսինքն՝ երկխոսություն բառի ստույգ իմաստով: Այստեղ է, որ կողմերի միջև հնարավոր է շիտակ բանակցություն՝ հայերեն անգուգական ձևակերպմամբ՝ խոսքի, ուստի նաև գործի համադրում: Ահա թե ինչու «արդյունավետ բանակցելուն» ուղղված բոլոր հանձնարարականներն ու կանոնները հատկապես հիմնավորման մեթոդի դեպքում են պատշաճ և օգտակար: Առհասարակ, մարդկային խոսքի վարքակարգավորիչ ներգործության արդյունավետ գործադրման հմտությամբ է (բայց, իհարկե, ոչ միայն դրանով) առաջնորդ-կառավարիչը

(ավելի ստույգ՝ առաջնորդող կառավարիչը) առանձնանում գուտ կառավարիչ-ղեկավարից¹⁶:

Անհատական և հանրային կյանքի տարբեր ոլորտներում ենթակա-մասից դեպի կառավարիչ-ամբողջ միտումն, առհասարակ, բնորոշ է մարդու հոգեբանությանը: Այդ մասին է գրում Աբրահամ Հարոլդ Մասլոուն. «Մարդը գերադասում է ամբողջականությունը, նա չի ցանկանում լինել մաս, առարկա, լրացում, միջոց կամ գործիք»¹⁷: Այդ հոգեբանությունը, կարծում եմ, բացատրվում է մարդ արարածին ներհատուկ իմաստավորման մղումով. չէ՞ որ միշտ էլ ամբողջն ավելի մեծ հնարավորություն է ստեղծում աշխատանքային գործունեության իմաստավորման համար, քան մասը: Իսկ ենթակային ամբողջը ներկայացնելը կառավարողից պահանջում է մասի և մնացածի կապերի մեկնաբանում-հիմնավորում, տվյալ մասի իմաստավորում ամբողջի խորապատկերի վրա: Ոչ միայն Ֆրեդերիկ Թեյլորի կամ Հենրի Ֆորդի համակարգերում, որտեղ ծայրահեղորեն խզված էին նպատակադրման-պլանավորման և կատարման աշխատանքները, այլ անգամ հին հունական դիցաբանության Սիզիփոսը թեկուզ չնչին հնարավորություն կունենար իմաստավորելու իր աշխատանք-պատիժը, եթե վերջինս ոչ թե պարտադրվեր Ջևաի կամքով, այլ ինչ-որ կերպ հիմնավորվեր (դիցուք՝ մարզական ռեկորդի սահմանման նպատակադրմամբ):

Հիմնավորման մեթոդը նախորդներից անհամեմատ ավելի լայն ասպարեզ է ընձեռում աշխատանքային իրավիճա-

¹⁶ Տե՛ս Վ. Միրզոյան, Առաջնորդման փիլիսոփայություն, Եր.: Մեկնարկ, 2018:

¹⁷ А.Г. Маслоу, Маслоу о менеджменте / Пер. с англ., СПб.: Питер, 2003, с. 77.

կի ամբողջական ընկալման, ուստի և՛ աշխատանքային գործունեության ամբողջական իմաստավորման համար: Բանն այն է, որ լոկ այս դեպքում է կառավարման սուբյեկտի և օբյեկտի միջև գոյանում շիտակ փոխազդեցության հնարավորություն: Հրամայելը բացարձակապես միակողմանի մեթոդ է կատարողը չունի հնարավորություն (ոչ էլ՝ իրավունք) հրամայելու իր ղեկավարին: Առավելապես միակողմանի բնույթի է նաև համոզումը. ենթական բացառիկ դեպքերում կարող է ինքը հոգեբանորեն ազդել ղեկավարի վրա, նրան ձեռնածության ենթարկել: Մինչդեռ հիմնավորման մեթոդը իր բնույթով հաղթահարում է (գոնե՝ տպավորություն ստեղծում) կառավարչական ազդեցության սուբյեկտիվիզմը (կարգավիճակային-իրավական գերազանցությունը կամ հուզական ճնշումը), դրանով կողմերը հայտնվում են հավասար վիճակում, հավասարապես կարող են դիմել «իրերի տրամաբանությանը», հավասարազոր քննարկել կայացված կառավարչական որոշման խելամտությունը, համատեղ գործունեության հեռանկարները:

Վերջապես, հիմնավորումը, որպես «ղեկավար-ենթակա» փոխհարաբերության կարգավորման լծակ, առավել արդյունավետ է, քանի որ ավելի է համապատասխանում իրերի վիճակին: Իհարկե, ղեկավարը իշխողն է, փոխհարաբերության առաջատարն է՝ շնորհիվ կարգավիճակի, դրանից բխող իշխանական լիազորությունների (երբեմն նաև՝ փորձառության, մասնագիտական ու անձնային հեղինակության): Մի խոսքով, ղեկավարն է կառավարողը, սակայն չմոռանանք, որ նրա այդ գործունեությունը ինքնանպատակ չէ, քանի որ «ղեկավար – ենթակա» փոխազդեցության բովանդակությունը պայմանավորված է ավելի լայն՝ համատեղ աշխատանքի

կատարմանն ուղղված համակարգի պահանջներով: Եթե դեկավարը կառավարման սուբյեկտն է, ենթական՝ օբյեկտը, ապա, ավելի լայն համակարգի շրջանակներում, նրանք միաձույլ են՝ որպես միասնաբար գործող սուբյեկտ:

Երկու կողմերի փոխկապակցված գործառույթունը Հեգելը շատ պատկերավոր ու խորն է բնութագրել. «Դա կարող է իրականացվել միայն ամբողջի հզորությունն այն կերպ բաշխելով միմյանց հակադիր երկու կողմերի միջև, որ կառավարվողը հարկադրվի կառավարողի, իսկ կառավարողն էլ՝ կառավարվողի կողմից»¹⁸:

«Կազմակերպության էությունը փոխկապակցվածությունն է՝ հակիրճ ձևակերպում է ամերիկացի հայտնի կառավարաբան Ջեֆրի Պֆեֆերը «Իշխանությամբ կառավարել» պերճախոս վերնագրված գրքում և բացատրում կառավարիչներին, թե սեփական իշխանությունը բանեցնելը հենց «ընդունակությունն է ազդել նրանց վրա, ումից մենք ինքներս ենք կախված»¹⁹: Իրոք, պարզ ճշմարտությունն այն է, որ երկու կողմերի համատեղ ջանքերով, Հեգելի մտքի լույսով՝ նրանց դերերի «փոխադարձ հարկադրումով» է միայն, որ գործունեության նպատակն իրականացվում է. կազմակերպությունը կատարում է իր գործառույթները՝ արտադրանք տալիս, ծառայություն մատուցում, կատարում վերադաս կազմակերպության հանձնարարությունները և այլն: Եթե կառավարողի վարվելակերպի հիմքում ընկած է այս ըմբռնումը, ապա նրա համար դյուրին է լինում եթե ոչ լիարժեքորեն գործադրել

¹⁸ Гегель, Политические произведения, М.: Наука, 1978, с. 220.

¹⁹ Pfeffer J., *Managing with Power: Politics and Influence in Organizations*. Boston: Harvard Business School Press, 1992, p. 38.

հիմնավորման մեթոդը, ապա խուսափել վարչահրամայական մեթոդի ծայրահեղություններից, կամ գոնե դրանք մեղմել՝ մտցնելով հիմնավորման տարրեր:

Ավելի դյուրին է սա հիշել և գործադրել որպես «3 Հ»-ի կանոն. օրինակ՝ չմոռանալ համոզելու և հիմնավորելու հնարավորությունը և անհրաժեշտությունը, այլ ոչ թե ապավինել միայն հրամաններին ու կարգադրություններին: Իրավիճակներ կան, որտեղ հրամայելն է առավել արդյունավետ մեթոդը՝ ի պաշտոնե, կանոնադրական պայմանների, ժամանակի և պաշարների սղության և այլ պայմաններում, օրինակ՝ բանակում կամ արտակարգ իրավիճակում փրկարար գործողություններ իրականացնելիս: Անտարակույս, նման պայմաններում ամենանրբագաց ենթական իսկ գիտակցում է, որ իր անմիջական ղեկավարը հարկադրված է կտրուկ հրամաններ արձակում: Բայց նույն այդ ենթական արդեն այլ պայմաններում չի կարող բնականոն համարել անհարկի կոպտությունը, ղեկավարի ինքնահավանությունը, արհամարհական խոսքը, ենթակաների կարծիքը լիովին և բացահայտ անտեսելը: Առավել ևս սա վերաբերում է աշխատանքի այն տեսակներին, որտեղ ենթական ոչ թե պարզ ցուցումների և պարզունակ գործողությունների կատարողն է, այլ որոշակի (բուն իսկ տեխնոլոգիայով) ինքնուրույնությամբ օժտված դերակատար: Եթե նրան վերահսկելիս արդարացված է հրամանի մեթոդը, ապա վստահելիս, բնականաբար, առավել արդյունավետ են համոզման և հիմնավորման մեթոդները:

Որպես ամփոփում, հակիրճ նկատեմ հետևյալը. հրամայելը իրավունքի գործադրումն է, համոզելը՝ հոգեբանության, հիմնավորելը՝ տրամաբանության: Որպես դիմացինի վրա ազդելու միջոց՝ դրանցից ամեն մեկն ունի կիրառման իր

առանձնահատկությունները, առավելությունները և սահմանափակումները: Բայց դրանք անջրպետված չեն, ավելին՝ իրականում կառավարման սոցիալ-հոգեբանական մեթոդների եռամիասնական հիմքն են, ուրեմն պիտի պատշաճ և ներդաշնակ գործադրվեն, այնպես, ինչպես որ մարդու կամքը, հոգին և միտքը կարող ներդաշնակ լինել:

Valeri Mirzoyan

Sc. D. in Philosophy, Professor

COMPARATIVE ANALYSIS OF SOCIO- PSYCHOLOGICAL MANAGEMENT METHODS

***Keywords** –management, subject-object interaction, social and psychological management method, ordering, persuading, justifying, management efficiency*

The article discusses one of the important topics of management theory and practice – the choice of methods of management influence. Management is the coordination of efforts of people working together, as well as the type of interpersonal interaction, therefore, when choosing a method of management influence, it is important to take into account a number of objective and subjective circumstances. Taking into consideration the background of the concepts of management methods established in the special literature and in real life, the author proposes his own concept of three-fold social and psychological methods of influence: ordering, persuading and justifying. Each of these methods has its own sphere of use, its own advantages and limitations, therefore the subject of management must clearly know them and use them adequately to ensure the effective functioning of the entire management system.

Валерий Мирзоян

доктор философских наук, профессор

СРАВНИТЕЛЬНЫЙ АНАЛИЗ СОЦИАЛЬНО - ПСИХОЛОГИЧЕСКИХ МЕТОДОВ УПРАВЛЕНИЯ

Ключевые слова – управление, субъект-объектное взаимодействие, социально-психологический метод управления, приказывать, убеждать, обосновывать, эффективность управления

В статье обсуждается одна из важных тем теории и практики управления – выбор методов управленческого воздействия. Управление – это координация усилий совместно работающих людей, а также тип межличностного взаимодействия, поэтому при выборе метода управленческого воздействия важное значение имеет учёт ряда обстоятельств объективного и субъективного характера. На фоне устоявшихся в специальной литературе и в реальной жизни представлений о методах управления автором предлагается собственная концепция тройственных социально-психологических методов воздействия: приказывать, убеждать и обосновывать. Каждый из этих методов имеет свою сферу использования, свои преимущества и ограничения, поэтому субъекту управления необходимо чётко знать их и адекватно использовать ради обеспечения эффективного функционирования всей системы управления.

Ներկայացվել է՝ 29.03.2019 թ.

Հնդուկվել է տպագրության՝ 19.04.2019 թ.

Mels Sahakyan

Ph.D. in Phys.- Math. Sciences, Professor, YSU, 'IATC' Fund

Gevorg Ghalachyan

Master Course Student, Faculty of Economics and Management, YSU

PORTFOLIO SELECTION MODEL: ENTROPY APPROACH

ABSTRACT. Ever since 1952 when Harry Markowitz put forward efficient frontier theory, it has become the modern approach to portfolio selection. When making decisions in which portfolio to invest, an individual faces a dilemma of sacrificing some expected return for a certain level of risk of portfolio.

The first part of the paper introduces classical mean-variance model by Harry Markowitz and explains how the criteria for later discussions are obtained. Of all the possible portfolio selections, efficient frontier is presented where each point is Pareto-optimal.

In the second part we offer later approaches and modifications to the model. We focus on the principle maximum of entropy approach which provides different distribution to the weights of stocks in portfolio. The last part of the paper shows result of the analysis, particularly weights of the given shares in the portfolio, portfolio centralization and comparison of results by different models.

Keywords – *Portfolio Selection, Mean-Variance Model, Entropy, Information Theory, Uniform distribution, Normal distribution*

JEL classification: G11

INTRODUCTION

The word “diversification” derives from Latin words *di-* “aside” and *vertere* “to turn”, and in Chinese it consists of hieroglyphs meaning *many examples*. In everyday life routine we try to diversify 24 hours to gain maximum utility, e.g. to consume more quality goods and services, meet more people, and spend minimum resources, e.g. time, energy, money.

Since the development of financial markets and investment companies arose, the problem of diversification of investment portfolio has been turning more and more actual. A typical investor, dealer, having a certain amount of savings or capital, is eager to invest the money in the assets that both provide maximal return and take minimum risk. Thus, they face a dilemma, and the solutions of this problem are often controversial. Sometimes one sets a goal to get a certain amount of income during a certain period trying to minimize the risk, another is quite a risk averse person and tries to achieve some level of return with a little risk during a long period. In this paper we consider different investing choices during a week of “holding period”.

As the problem became up-to-date, researcher started to discuss precise mathematical calculations to reach the efficient portfolio frontier. Though the diversification of investments was well-established, Harry Markowitz was the first one to structure the problem, give the proper solution and publish it. Often called *Mean-Variance* model, his approach used two statistical

parameters to describe a single asset – mean of return and its standard deviation. Then he calculated the mean and variance for portfolio, which depend on weights of the portfolio.

Classical mean-variance model may lead to portfolio centralization that is allocating the investments mostly in a certain asset. This quite often leads to hidden and immeasurable risk. Moreover, this model is valid only if the variance is multi-variate normally distributed and the investor is risk averse. Originating from thermodynamics theory, entropy approach of portfolio offers a diversification that provides both minimal risk and maximum entropy for the weights of assets.

In this paper we consider 5-year weekly prices of 12 different investment options – stocks, bond and currency, which are:

1. Bank of America Corporation stocks
2. Facebook Corporation stocks
3. Frontier Communications Corporation stocks
4. Advanced Micro Devices, Inc. stocks
5. IBM Corporation stocks
6. Ford Corporation stocks
7. Intel Corporation stocks
8. Apple Inc. stocks
9. General Electric Corporation stocks
10. General Motors Corporation stocks
11. US 5 year treasury bonds
12. EUR-USD currency

Methodology

Statistic Parameters

During portfolio analysis we consider a few statistic parameters that must lead to an optimal set of assets. We chose N most preferable assets. As initial data we use a sample of k weeks' adjusted close prices (p_{im}) of the assets in the stock market;

$$P_{k \times n} = \{p_{im}\}, \quad i = \overline{1, N}, \quad m = \overline{1, k}.$$

For a weekly holding period weekly return (r_{im}) equals to;

$$r_{im} = \frac{p_{im} - p_{im-1}}{p_{im-1}}, \quad i = \overline{1, N}, \quad m = \overline{1, k}.$$

An investor sells the portfolio on $k + 1$ week, thus it's necessary to predict $r_{i, k+1} = r_i$ (for simplicity we take the mean of $k - 1$ later data) and variance (σ_i^2) for each asset;

$$r_i = \frac{1}{k-1} \sum_{m=2}^k r_{im}, \quad i = \overline{1, N};$$
$$\sigma_i^2 = \frac{1}{k-2} \sum_{m=2}^k (r_{im} - \bar{r}_i)^2, \quad i = \overline{1, N}.$$

After individual parameters we discuss portfolio parameters – expected return of portfolio (r_p) and expected risk of portfolio (σ_p). For return

$$r_p = \sum_{i=1}^N x_i \bar{r}_i, \quad i = \overline{1, N};$$

x_i – the weight of i asset in the portfolio, $x_i \in [0, 1]$. And

$$r_p = \frac{w_1 - w_0}{w_0};$$

w_0 – an initial value of portfolio,

w_1 – a final value of portfolio.

As a measure of risk we take standard deviation of portfolio. First we calculate covariance of any two assets (σ_{ij}), then square root of their weighted sum.

$$\sigma_{ij} = \frac{1}{k-2} \sum_{m=2}^k (r_{i_m} - \bar{r}_i)(r_{j_m} - \bar{r}_j), i = \overline{1, N}, j = \overline{1, N};$$

$$\sigma_p = \left[\sum_{i=1}^N \sum_{j=1}^N x_i \sigma_{ij} x_j \right]^{1/2}$$

As a descriptive parameter we also consider correlation matrix of

$$\rho_{ij} = \frac{\sigma_{ij}}{\sigma_i \sigma_j}.$$

Classical Mean-Variance Model

Classical mean-variance model is based on following postulates:

- An investor intends to buy securities at *purchasing time*

$t = 0$, and intends to sell them at *selling time* $t = 1$. The difference between these periods is called *holding period*.

- The rate of return is *normally distributed* random variable.

The investor tries to maximize the return in the state of minimal risk. As long as we face a two-objective optimization problem, we set one of them as a constraint and maximize the other one. Here are two options;

$$\sigma_p \rightarrow \min \quad (\text{Model 1})$$

subject to

$$\begin{aligned} r_p &\geq r_p^0, \\ \sum_{i=1}^N x_i &= 1, \\ x_i &\geq 0, i = \overline{1, N}. \end{aligned}$$

$$r_p \rightarrow \max \quad (\text{Model 2})$$

subject to

$$\begin{aligned} \sigma_p &\leq \sigma_p^0, \\ \sum_{i=1}^N x_i &= 1, \\ x_i &\geq 0, i = \overline{1, N}. \end{aligned}$$

Another modification of the model suggests maximizing Sharpe ratio;

$$\frac{r_p - r_f}{\sigma_p} \rightarrow \max \quad (\text{Model 3})$$

subject to

$$\begin{aligned} \sum_{i=1}^N x_i &= 1, \\ x_i &\geq 0, i = \overline{1, N}, \end{aligned}$$

r_f - risk free rate of return.

Entropy Approach of Portfolio Selection

The history of the word “entropy” can be tracked back to 1865 when a German physicist Rudolf Clausius tried to give a new name to irreversible heat loss what he previously called “equivalent-value”. The word “entropy” in Greek means “content transformative” or “transformation content” (en+tropein). The concept of entropy plays an important role in the Second Law of Thermodynamics, where it is defined as the sum of “heat supplied” divided by “temperature”. Entropy is also used to measure of the amount of order and disorder, chaos.

The application of entropy can be regarded as the extension of the information entropy and the probability entropy. It can be an important tool in portfolio selection and asset pricing.

Phillipatos and Wilson were the first two researchers who applied the concept of entropy to portfolio selection. In their thesis, a mean entropy approach was proposed and compared to traditional methods by constructing all possible efficient

portfolios from a randomly selected sample of monthly closing prices on 50 securities over a period of 14 years. Since then many scholars have enriched the portfolio selection theory with entropy concepts. In this paper we consider two approaches to construct portfolio problem. The first one is based on *Shanon* entropy as a measure of probability. Entropy function has the following formulation:

$$S_n(P) = - \sum_{i=1}^n p_i \ln p_i$$

where $\sum p_i = 1, p_i \geq 0, 0 \ln 0 = 0$.

In the state of uncertainty, when we don't have information about the distribution of return of assets, maximum value of entropy provides distribution close to uniform distribution with the given constraints. We use weights of the assets as probabilities and maximize the entropy. As long as in mean-variance model there are two optimization functions, we set one as a constraint and include another one in the entropy function. The problem has the following formulation:

$$- \sum_{i=1}^n x_i \ln x_i \rightarrow \max \quad (\text{Model 4})$$

subject to

$$\begin{aligned} \sigma_p &\leq \sigma_p^0, \\ r_p &\geq r_p^0, \\ \sum_{i=1}^N x_i &= 1, \\ x_i &\geq 0, i = 1, N, \\ 0 \ln 0 &= 0. \end{aligned}$$

The second /our/ method is a hybrid entropy method, where we use following functions as probabilities:

$$f_1(\bar{x}) = \frac{r_p}{r_p + \sigma_p}$$

$$f_2(\bar{x}) = \frac{\sigma_p}{r_p + \sigma_p}$$

sum of which equals one.

Then our portfolio problem looks like this:

$$-\sum_{i=1}^2 f_i(\bar{x}) \ln f_i(\bar{x}) \rightarrow \max \quad (5)$$

subject to

$$\begin{aligned} \sigma_p &\leq \sigma_p^0, \\ r_p &\geq r_p^0, \\ \sum_{i=1}^N x_i &= 1, \\ x_i &\geq 0, i = \overline{1, N}, \\ 0 \ln 0 &= 0. \end{aligned}$$

Results

In this section we use 5 models defined above for $N = 12$ different assets' and $k = 261$ observations' sample. Holding period is a week.

Table 1. Weekly Return, Risk, and Sharp Ratio, Individual Assets

	Average	Std. Deviation	Sharp Ratio
BAC	0.456%	3.839%	0.12
FB	0.648%	5.409%	0.12
FTR	0.039%	10.542%	0.00
AMD	0.570%	8.506%	0.07
IBM	0.020%	2.562%	0.01
F	0.108%	3.396%	0.03
INTC	0.200%	2.926%	0.07
AAPL	0.282%	3.630%	0.08
GE	0.261%	2.539%	0.10
GM	0.257%	3.708%	0.07
EUR_USD	0.603%	7.911%	0.08
US 5Y	0.186%	1.963%	0.09

Discussion

Table 1 contains information about individual assets. We included highly differentiated assets, such as FTR and BAC.

Model 0 represents a portfolio of equal weights and in *Model 3* we take risk free rate of return as zero since holding time is a week. In Table 2 we represent calculation for different models described above.

Table 2. Parameters of Portfolios by Different Models

	Model 0	Model 1	Model 2	Model 3	Model 4	Model 5
Constraining Variable	None	at $r =$	at $\sigma \leq$	none	at $r =$	at $r =$
Value of Constraint	N/A	0.200%	3.630%	N/A	0.470%	0.470%
Portfolio WEIGHTS						
BAC	8.33%	0.00%	31.68%	17.45%	13.28%	31.99%
FB	8.33%	8.61%	51.62%	22.28%	19.64%	35.26%
FTR	8.33%	0.00%	0.00%	0.00%	0.00%	0.00%
AMD	8.33%	0.00%	10.18%	0.23%	17.05%	4.72%
IBM	8.33%	20.46%	0.00%	0.00%	0.00%	0.00%
F	8.33%	1.59%	0.00%	0.00%	1.74%	0.00%
INTC	8.33%	10.38%	0.00%	4.12%	4.80%	0.00%
AAPL	8.33%	4.05%	0.00%	7.56%	7.52%	6.72%
GE	8.33%	5.43%	0.00%	11.92%	6.81%	5.60%
GM	8.33%	0.00%	0.00%	0.00%	6.68%	0.00%
EUR_USD	8.33%	0.00%	6.51%	0.00%	18.13%	1.39%
US 5Y	8.33%	49.48%	0.00%	36.43%	4.34%	14.32%
Sum of Weights	100.00%	100.00%	100.00%	100.00%	100.00%	100.00%
Return	0.302%	0.200%	0.576%	0.354%	0.470%	0.470%
Risk	2.695%	1.570%	3.630%	1.893%	3.305%	2.687%
Return/Risk	0.11	0.13	0.16	0.19	0.14	0.17

Conclusion

From the theoretical and empirical studies we conclude:

- Both *Model 1* and *Model 2* provide portfolios on the efficient frontier with either minimal risk or maximal return.
- *Model 3* provides maximal Sharpe ratio by centralization on assets with high return and risk
- As long as series of returns is not normally distributed, *Model 1, Model 2, Model 3* are not so reliable in spite of shown results
- *Model 4* and *Model 5* are used in state of uncertainty and show the results, and give the opportunity to weigh the preference on risk
- Comparing classical mean-variance *Model 1* and entropy *Model 5*, we can conclude that compromising 1,117% of risk, we spread centralization from assets FB, IBM to the other assets providing more return.

References

1. Markowitz, H. M. (1959). Portfolio Selection: Efficient Diversification of Investments, New York, John Wiles and Sons.
2. William F. Sharpe, Gordon J. Alexander, Jeffrey V. Bailey (1995). Investments, A Simon and Schuster Company, New Jersey

3. Rongxi Zhou, Ru Cai, Guanqun Tong (2013). Application of Entropy in Finance: A Review, available at: <http://www.mdpi.com/journal/entropy>
4. Laidler, K. J. (1995). Thermodynamics. In The World of Physical Chemistry; Oxford University Press, New York, USA; pp 156-240
5. Phillipatos, G.C., Wilson C. J. (1972). Entropy, Market Risk and the Selection of Efficient Portfolios, Applied Economics, 4
6. Kapur, J. N. (1990). Maximum-Entropy Probability Distributions: Principles, Formalism and Techniques, Wiley Eastern Limited, New Dehli, India

ՄԵԼԱ ՍԱԽԱԿՅԱՆ

Ֆ.-մ.գ.թ., պրոֆեսոր, ԵՊՀ,

«Հաշվապահության Ուսուցման Միջազգային Կենտրոն»

Գևորգ Ղալաչյան

Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի
մագիստրատուրայի ուսանող, ԵՊՀ

ՊՈՐՏՖԵԼԻ ԸՆՏՈՒԹՅԱՆ ՍՈՂԵԼԸ ԷՆԹՐՈՊԻԱՅԻ ԿԻՐԱՌՈՒԹՅԱՄԲ

Հիմնաբառեր – պորտֆելի ընտրություն, «միջին սպասելի քառակուսային շեղում» մոդել, էնթրոպիա, տեղեկատվության տեսություն, միասնական բաշխում, բնականոն բաշխում

Երբ 1952 թ. Հարի Մարկովիցն առաջարկեց արդյունավետ սահմանի տեսությունը, այն դարձավ արդյունավետ պորտֆելի խնդրի լուծման հիմնական մոտեցումը: Ներդրողը

ստիպված է ընտրություն կատարել պորտֆելի սպասելի միջին եկամուտի և պորտֆելի ռիսկայնության միջև:

Հոդվածի առաջին մասում ներկայացվում է Հարի Մարկովիցի կողմից առաջադրված դասական միջին սպասելիքառակուսային շեղում բաշխման մոդելը և բացատրում, թե ինչպիսի չափորոշիչներ են օգտագործվում հետագա վերլուծության համար: Բոլոր հնարավոր ընտրություններից ներկայացվում է արդյունավետ սահմանը, որտեղ յուրաքանչյուր կետ Պարետո օպտիմալ է:

Երկրորդ մասում առաջարկվում է մոդելի հետագա մոդիֆիկացիաներ: Հիմնական շեշտը դրվում է էնթրոպիայի մաքսիմումի սկզբունքի մեթոդի վրա, որը պորտֆելում ընդգրկված արժեթղթերի կշիռների համար տալիս է այլընտրանքային բաշխում:

Հոդվածի վերջում ներկայացվում են մեր վերլուծության արդյունքները, մասնավորապես, պորտֆելում ընդգրկված արժեթղթերի կշիռները և այլ մոդելների արդյունքների համեմատական վերլուծությունը:

Мелс Саакян

к.ф.-м.н. профессор ЕГУ,

‘Международный Центр по Обучению Бухгалтерии’

Геворг Галачян

студент магистратуры факультета экономики и управления,
ЕГУ

ЗАДАЧА ВЫБОРА ПОРТФЕЛЯ С ПРИМЕНЕНИЕМ ЭНТРОПИИ

Ключевые слова – выбор портфеля, модель среднее ожидаемое - средне квадратичное отклонение, энтропия, теория информации, равномерное распределение, нормальное распределение

Когда в 1952г. Гарри Марковиц выдвинул теорию эффективной границы, она стала современной основой для решения задачи выбора эффективного портфеля. Инвестор портфеля стоит перед дилеммой выбора ожидаемого среднего дохода и степени риска портфеля.

В первой части статьи представлена предложенная Гарри Марковицем классическая модель среднее ожидаемое-среднеквадратичное отклонение и рассматриваются критерии используемые для дальнейшего анализа. Из всех вариантов выбора портфеля выбирается метод эффективной границы, где все точки являются Парето оптимальми.

Во второй части статьи мы представляем последние модификации модели. Основной упор делается на применении принципа максимума энтропии, позволяющий выбирать альтернативные веса ценных бумаг в портфеле.

В последней части статьи представлен анализ полученных результатов, в частности, веса ценных бумаг и сравнение решений представленных моделей.

Ներկայացվել է՝ 04.04.2019 թ.

Հնդունվել է ստաթրոնոթյան՝ 19.04.2019 թ.

**ԳՈՐԾԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՅՈՒՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ
ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ**

Հիմնաբառեր – կայուն զարգացում, բնապահպանական վրնասաների հաշվառում, բնօգտագործման արդյունքների հաշվառում, ոչ ֆինանսական հաշվետվություն

Գործարարության ընթացում բնական պաշարների սպառումը էկոարդարության տեսակետից համարվում է արդյունավետ, երբ կազմակերպության շահույթից չափաբաժին է տրամադրվում բնապահպանական լրացուցիչ միջոցառումների իրականացմանը: Ընդ որում, բնության բարիքները պետք է վերականգվեն կազմակերպությունների կողմից լիարժեք կարգով, քանի որ բնապահպանական վնասները, ուղղակիորեն ձևավորվելով գործարարության անմիջական ոլորտում, հաճախ անսահման արդյունքներով հանդես են գալիս նաև տնտեսական գործունեության շրջանակներից դուրս: Բնական պաշարների լիարժեք վերարտադրության պահանջը դրված է գործարարության կայուն զարգացման հիմքում, որն ապագա սերունդների համար ապահովում է բնական կապիտալի անհրաժեշտ մակարդակ:

Հաշվապահական հաշվառման համակարգի միջոցով տնտեսական վերահսկողության կիրառումը գործարարության կայուն զարգացման ոլորտում, առաջին հերթին, պայմանավորված է տնտեսական գործառնությունների բնապահպանական տեսանկյունով գնահատմամբ: Ավանդաբար,

տնտեսական գործառնությունները հաշվապահական հաշվառման համակարգում դիտարկվել են ֆինանսական արդյունքների ձևավորման պրիզմայով, երբ գործարարներին հիմնականում հետաքրքրել է կատարված գործառնական ծախսերից կամ ներդրումներից ստացված շահույթը:

Սակայն, ֆինանսական հետևանքներից բացի, բազմաթիվ տնտեսական գործարքներ ուղեկցվում են նաև բնապահպանական արդյունքներով: Գործարարության բնապահպանական վնասները լինում են ակնառու կամ տեսանելի, երբ ուղղակիորեն ձևավորվում են կազմակերպության տրնտեսավարման գործընթացում (տեխնոլոգիական արտանետումներ, թափոնների լուծարում, կենսապաշարների օգտագործում և այլն) և «թաքնված» կամ տվյալ բիզնեսի համար անտեսանելի, երբ, գործարարության արդյունք հանդիսանալով, ձևավորվում են վերջինիս շրջանակներից դուրս:²⁰

Այսպես, զովացուցիչ հյուրեր արտադրող գործարանի կողմից բնապահպանական ուղղակի վնասը դրսևորվում է տեխնոլոգիական նպատակներով ջրային ռեսուրսների օգտագործումով, շշալցման ավելցուկային գազերի մթնոլորտ արտանետումներով: Սակայն, նույնիսկ կազմակերպության տնտեսական գործունեության շրջանակներից դուրս, դեռևս կարող են ձևավորվել գործարարությանն առնչվող բնապահպանական վնասներ, որոնք բացահայտման և գնահատման կարիք ունեն: Այսպես, գործարանի կողմից բնապահպանական ոչ պակաս վնաս է հասցվում աղմկոտ տեխնոլոգիաներ կիրառելիս, զովացուցիչ հյուրերի սպառմանը հաջորդող պո-

²⁰ Ծերունյան Վարդան, Բնապահպանական աուդիտ, «Տնտեսագետ», Երևան, 2006 թ. էջ 16:

լիեթիլեն շշերով շրջապատի ադտոտումից, և, վերջապես, երեխաների առողջության համար վտանգ հանդիսացող գազայցված արհեստական ըմպելիքների վաճառքից:

Ընդ որում, եթե ինչ որ չափով կազմակերպության կողմից բնապահպանական բացահայտ վնասները ընդգրկվում են տնտեսավարման հաշվապահական հաշվառման համակարգ, ապա տնտեսական գործարքներից բխող բնապահպանական «թաքնված վնասներ», որպես կանոն, գործնականում ընդհանրապես շրջանցում են հաշվապահական հաշվառման շրջանակը:²¹

Այս հիմնախնդրի լուծման ուղի ենք առաջարկում տնտեսական գործառնություններին էկոկրիչների ամրագրումը: Էկոկրիչները հանդիսանում են յուրաքանչյուր գործառնության բնապահպանական արդյունքներ, որոնք, նախ բացահայտման և, այնուհետև, գնահատման կարիք ունեն: Այս պարագայում յուրաքանչյուր գործառնություն հաշվապահական հաշվառման համակարգում դիտարկվում է ոչ միայն ֆինանսական, այլև բնապահպանական առումով: Ուստի, խնդիր է դրվում պարզելու, թե կոնկրետ տնտեսական գործառնության հետևանքով ձևավորվում են արդյոք բնապահպանական բացահայտ կամ «թաքնված» վնասներ և ինչպես են դրանք տնտեսական արժևորում ստանում:

Հետևաբար, տնտեսական գործառնությունների գծով, առաջին հերթին, դժվարություններ են առաջանում էկոկրիչների բացահայտման ոլորտում, քանի որ դրանք հաճախ «թաքնված» բնույթ են կրում: Մյուս կողմից, վիճահարույց է դառնում դրանց տնտեսագիտական հիմնավոր գնահատու-

²¹ Петров С. Экологический учет, ИНФРА, М. 2014, стр. 34.

մը: Օրինակ, պայմանականություններ են ծագում գործարարության արդյունքում մարդկանց առողջությանը պատճառած վնասի չափը գնահատելիս, կամ օդային ավազան արտանետումներից կենսապաշարների կորուստը որոշելիս:

Բոլոր դեպքերում, տնտեսական գործառնություններին առնչվող էկոկրիչների կիրառումն, անգամ վերը թվարկած հիմնախնդիրների առկայության դեպքում, էական դեր կարող է խաղալ գործարարության կայուն զարգացումը վերահսկելիս և կազմակերպության կողմից էկոարդարության պահպանումը գնահատելիս:

Քանի որ, համաձայն էկոարդարության սկզբունքի, սպառված բնական ռեսուրսների վերականգնումը կազմակերպությունն իրականացնում է գործարարության շահույթի հաշվին, ուստի բնապահպանական թաքնված կամ բացահայտ վնասները ներառվում են գործարարության ծախսերի մեջ՝ բարձրացնելով թողարկվող արտադրանքի կամ մատուցվող ծառայությունների ինքնարժեքը: Բացի այդ, գործարարության ընթացքում թույլ տալով բնապահպանական վնասներ, կազմակերպությունը պարտավորվում է այն հատուցել երկարաժամկետ, իսկ որոշ դեպքում էլ՝ կարճաժամկետ հատվածում:

Այսպիսով, բնապահպանական գործունեության արդյունքները հաշվետու ժամանակաշրջանում անհրաժեշտ է դերետազրել ծախսային հաշիվներով և կրեդիտազրել պարտավորություններ հաշիվներով: Հաշվապահական նման գրանցումները հնարավորություն կտան ոչ միայն արձանագրելու բնական ռեսուրսների օգտագործման հետևանքները, գործարարության ընթացքում իրականացնելու բնապահպանական անընդհատ վերահսկողություն, այլև հատուկ հող-

վածներով ներկայացնել բնօգտագործման տնտեսական հետեվանքները հրապարակվող ֆինանսական հաշվետվություններում:

Հաշվապահական հաշիվների գործող հաշվային պլանով բնապահպանական գործունեության հաշիվներ չեն նախատեսված, ուստի բնական ռեսուրսների օգտագործումից տնտեսական վնասը առաջարկում ենք հաշվառել «Կառավարչական հաշիվներ» դասին պատկանող մի նոր՝ 865 «Բնապահպանական վնասներ» հաշվով:

Բնապահպանությանը պատճառած վնասի փոխհատուցման գծով կազմակերպության պարտավորության հաշվառումը առաջարկում ենք հաշվառել համանուն 460 հաշվով, որն, իր կրեդիտային մասով թղթակցելով 865 «Բնապահպանական վնասներ» հաշվի դեբետի հետ, արձանագրում է հաշվետու ժամանակաշրջանում գործարարության բնօգտագործման վերականգման չափաբաժինը:

Ընդ որում, եթե 865 «Բնապահպանական վնասներ» հաշիվը փակվում է յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում, կրեդիտային մասով թղթակցելով ծախսային հաշիվների հետ, ապա 460 «Բնապահպանության վնասի փոխհատուցման պարտավորություն» հաշիվը, որպես կանոն, հաշվապահական հաշվեկշռում հանդես է գալիս մնացորդով, քանի որ կազմակերպության կողմից սպառած բնական ռեսուրսների վերականգնումը տևում է մի քանի տարի:

Հաշվապահական հաշվառման համակարգում էկոկրիչների տնտեսական արձանագրման մեխանիզմը ներկա-

յացնենք վերը ներկայացված գովացուցիչ հյուսիս արտադրող գործարանի պայմանական օրինակով:²²

Գործարանի տնօրինությունը մինչև 2018 թվականը հստակ բնապահպանական քաղաքականություն չէր վարում և միայն կատարում էր բնօգտագործման օրենսդրական պարտավորությունները: Սակայն, հիմնադիրների ժողովի որոշմամբ, սկսած 2018 թվականից, գովացուցիչ հյուսիս արտադրող գործարանը ոչ միայն պարտավորվեց կանոնավոր մշակել և հրապարակել բնապահպանական քաղաքականություն, այլև անցում կատարել կայուն գործարարության զարգացմանը: Գործարանի գործող բնապահպանական օրենսդրության պահանջներով տեխնոլոգիական նպատակներով ջրային ռեսուրսների սպառման դիմաց տարեկան վճարում է 200 հազար դրամի բնօգտագործման վճար, ինչպես նաև կատարում է բնապահպանական 50 հազար դրամի վճար՝ օդային ավազան թունավոր կամ ջերմոցային գազեր արտանետելու դիմաց: Սակայն, կայուն գործարարության կազմակերպման պահանջներին չեն բավարարվում գործարանի բնապահպանական թվարկված վճարները և խնդիր է դրվում որդեգրել իրատեսական պարտավորություններ բնօգտագործման վնասները վերականգնելու համար:

Բնապահպանական գործունեության նման կտրուկ ակտիվացումը ստիպեց գործարանի հաշվապահությանը բացահայտել տնտեսական գործարքների էկոլոգիչները և դրանք տեղափոխել տնտեսական գործունեության դաշտ, որպեսզի հրապարակվող ֆինանսական հաշվետվություններ

²² Ճուղուրյան Ա., Հաշվապահական հաշվառում, «Տնտեսագետ», Եր. 2009, էջեր 719-721:

րով ներկայացվեն գործարարության բնօգտագործման վնասները և դրանց փոխհատուցման համար կազմակերպության պարտավորությունները:

Տնտեսական գործունեության շրջանակներում գործարանի հաշվապահությունը սահամանել է էկոլոգիչներ՝ շրջակա միջավայրին պատճառած տարեկան վնասի հետևյալ չափերով.

- շալցման աղմկոտ տեխնոլոգիաների շահագործումից աշխատակիցների առողջության վերականգման ծախսեր՝ 80 հազ. դրամ,
- բնությունը աղտոտող պատրաստի արտադրանքի պոլիէթիլենային շէրի շրջակա միջավայրից հեռացման և վերացման լրացուցիչ ծախսեր՝ 120 հազ. դրամ,
- գազալցված արհեստական ըմպելիքներից երեխաների առողջությանը սպառնալիքի կանխման միջոցառումների ծախսեր՝ 800 հազ. դրամ:

Հաշվետու ժամանակաշրջանի սկզբին գործարանի հաշվապահական հաշվեկշիռը ներկայացվել է հետևյալ հոդվածներով:

Հաշվապահական հաշվեկշիռ

առ 01.01.2018 թ., (հազ. դրամ)

ԱԿՏԻՎՆԵՐ	Գումար	ՊԱՍԻՎՆԵՐ	Գումար
Ոչ ընթացիկ		Կապիտալ	
հիմնական միջոցներ	3 000	բաժնեհավաք կապիտալ	6 000
Ընթացիկ		կուտակված շահույթ	1 000
դրամական միջոցներ	500	Պարտավորություններ	

հումք և նյութեր	8 000	բանկերին	3 000
արտադրանք	1 800	մատակարարներին	600
դեբիտորներ	200	բյուջեին	2 900
Հաշվեկիտ	13 500	Հաշվեկիտ	13 500

Հաշվետու ժամանակաշրջանում (2018թ.) զուվացուցիչ հյու-
թեր արտադրող գործարանի ծախսերն ու եկամուտները ամ-
փոփ ներկայացված են հետևյալ գործառնություններով.

1. Զուվացուցիչ հյութերի արտադրման նպատակով ծախսվել
են 3 800 հազ. դրամի հումք և նյութեր:

Դտ 811 «Արտադրության ծախսումներ».....3 800

Կտ 211 «Նյութեր» 3 800

2. Արտադրական նպատակներով հաշվարկվել է 2 100
հազ. դրամի աշխատավարձ:

Դտ 811 «Արտադրության ծախսումներ».....2 100

Կտ 524 «Աշխատավարձի պարտավորություն»2 100

3. Հաշվարկվել է 100 հազ. դրամի հիմնական միջոցների ա-
մորտիզացիա:

Դտ 811 «Արտադրության ծախսումներ».....100

Կտ112 «Կուտակված մաշվածք».....100

4. Փոխանցվել է 200 հազ. դրամի բնօգտագործման վճար և 50
հազ. դրամի բնապահպանական վճար:

Դտ 713 «Վերադիր ծախսեր».....250

Կտ 252 «Հաշվարկային հաշիվ».....250

5. Հաշվարկվել է հաշվետու ժամանակաշրջանում գործարա-
րության բնապահպանական վնասը՝ աղմկոտ տեխնոլոգիա-
ներից աշխատակիցների առողջության վատթարացումից՝
80 հազ. դրամ, պոլիէթիլենային շէրի աղտոտումից՝ 120

հազ. դրամ, արհեստական ընպելիքներից երեխաների առողջության վատթարացումից՝ 800 հազ. դրամ:

Դտ 865 «Բնապահպանական վնասներ».....1 000

Կտ 460 «Բնապահպանական վնասի փոխհատուցման պարտավորություններ».....1 000

6. Արտադրված և իրացված արտադրանքի ինքնարժեքին են դուրս գրվել հաշվետու ժամանակաշրջանի գործարարության և բնապահպանական ծախսումները 7000 հազ. դրամով:

Դտ 711 «Իրացման ինքնարժեք».....7 000

Կտ 811 «Արտադրության ծախսումներ».....6 000

Կտ 865 «Բնապահպանական վնասներ»....1 000

7. Իրացված արտադրանքի հասույթը 8250 հազ. դրամով մուտքագրվել է գործարանի հաշվարկային հաշիվ:

Դտ 252 «Հաշվարկային հաշիվ».....8 250

Կտ 611 «Իրացումից եկամուտ».....8 250

8. Հաշվարկվել է 400 հազ. դրամի շահութահարկ:

Դտ 751 «Շահութահարկի ծախսեր».....400

Կտ 524 «Պարտավորություններ բյուջեին».....400

9. Հաշվետվու ժամանակաշրջանի եկամուտը դուրս է գրվել ֆինանսական արդյունքին:

Դտ 611 «Իրացումից եկամուտ».....8 250

Կտ 331 «Ֆինանսական արդյունք».....8 250

10. Հաշվետու ժամանակաշրջանի ծախսերը դուրս են գրվել ֆինանսական արդյունքին:

Դտ 331 «Ֆինանսական արդյունք».....7 650

Կտ 711 «Իրացման ինքնարժեք».....7 000

Կտ 713 «Վերադիր ծախսեր».....250

Կտ 751 «Շահութահարկի ծախսեր».....400

11. Հաշվարկվել է գործարանի հաշվետու ժամանակաշրջանի գուտ շահույթը:

Դտ 331 «Ֆինանսական արդյունք».....600

Կտ 343 «Զուտ շահույթ»600

Այսպիսով, հաշվետու ժամանակաշրջանի վերջում գործարանի հաշվապահական հաշվեկշիռը վերընշյալ տնտեսական գործառնություններից հետո՝ առ 01.01.2019 թվականին կներկայացվի փոփոխված տեսքով, իսկ ֆինանսական արդյունքների հաշվետվությունը կկազմվի այսպես.

Ֆինանսական արդյունքներ

Արտադրանքի իրացումից եկամուտ8 250

Արտադրանքի թողարկման ինքնարժեք(7 000)


Վերադիր ծախսեր(250)

Շահութահարկ(400)

Զուտ շահույթ600

Կայուն զարգացմամբ գործարարության կազմակերպելիս հաշվապահական հաշվառման համակարգում տնտեսական գործունեության ծախսային հոսքերից հստակ առանձնացվում է կազմակերպության կողմից հաշվետու ժամանակաշրջանում շրջակա միջավայրին հասցված վնասի չափը, քանի որ վերջիններս արձանագրվում են առանձին հաշվով: Այսպես, կայուն զարգացմամբ գործարարությամբ զովացուցիչ ըմպելիքներ արտադրող գործարանի 2018 թ. հաշվետու տարվա ծախսային հոսքերում շրջակա միջավայրին հասցված վնասի չափը հաշվապահական հաշիվների փոխկապակցմամբ կներկայացվի գծապատկերով:

Բացի այդ, հաշվապահական հաշիվներում հաշվետու ժամանակաշրջանի էկոկրիչների տնտեսական արձանագրմամբ հնարավորություն է ստեղծվում հրապարակվող հաշվեկշռում ներկայացնելու կազմակերպության գործարարության արդյունքում շրջակա միջավայրին հարուցած վնասի փոխհատուցման պարտավորությունը (տե՛ս ստորև հաշվեկշռի պասիվային մասը):



Պատկեր 1. Բնապահպանական վնասների արձանագրման մեխանիզմը հաշվապահական հաշվառման համակարգում

Հաշվապահական հաշվեկշիռ

առ 01.01.2019 թ. (հազ. դրամ)

ԱԿՏԻՎՆԵՐ	Գու-մար	ՊԱՍԻՎՆԵՐ	Գու-մար
Ոչ ընթացիկ		Կապիտալ	
հիմնական միջոցներ 3 000 - 100	2 900	բաժնեհավաք կապիտալ	6 000
ԸՆԹացիկ		կուտակված շահույթ 1000 + 600	1 600
դրամական միջոցներ 500 + 8 250 - 250	8 500	Պարտավորություններ	
հումք և նյութեր 8 000 – 3 800	4 200	բանկերին	3 000
արտադրանք	1 800	մատակարարներին	600
դեբիտորներ	200	Բյուջեին 2 900 + 400	3 300
		աշխատակիցներին 0 + 2 100	2 100
		բնապահպանականը	1 000
Հաշվեկշիռ	17 600	Հաշվեկշիռ	17 600

Հարկ է նշել, որ զովացուցիչ հյուրերի գործարանի 2019թ. հաշվետու ժամանակըջանի հրապարակված հաշվեկշռում թիվ 460 «Բնապահպանության վնասի փոխհատուցման պարտավորություններ» հաշվի մնացորդը աճման միտում կունենա, եթե կազմակերպությունը խախտի իր իսկ կողմից որդեգրած գործարարության կայուն զարգացման քաղաքականությունը և միջոցներ խնայի բնապահպանական գործունեության ոլորտում: Հակառակ պարագայում, հաշվի մնա-

ցորդը կնվազի և դրանով իսկ կարձանագրվի հաշվետու ժամանակաշրջանում գործարանի կողմից բնապահպանական ակտիվ միջոցառումների ձեռնարկումը:

ԱՄՓՈՓՈՒՄ

Կազմակերպությունների կողմից հրապարակվող ֆինանսական հաշվետվություններում ներկայումս իր արձանագրումն է ստանում ոչ ֆինանսական տեղեկատվությունը: Շահառուներին հետաքրքրում է ոչ միայն բիզնեսի ֆինանսատնտեսական գործունեությունը, այլև դրան առնչվող ոչ ֆինանսական արդյունքները: Հետևաբար, ներկայումս կազմակերպությունները ձգտում են ֆինանսական հաշվետվություններին կից բացահայտումներում ներկայացնել նաև բնապահպանական գործունեությանը վերաբերող ցուցանիշներ:

Armen Tshuguryan

Sc.D. in Economics, Professor

PROBLEMS OF ACCOUNTING STABLE BUSINESS DEVELOPMENT

Keywords –*stable development, accounting for environmental damage, accounting for environmental management results, non-financial reporting*

Practice shows, that non-financial information is now actively included in the system of the organizations' traditional reporting process. The beneficiaries are interested not only in the financial

and economic indicators of the business, but also in connection with this, non financial results of the economic activity. In this regard, organizations are trying to provide non-financial information in the annexes of published financial statements, which in turn leads to the need for organizing the accounting of such information flows.

Армен Джугурян

д.э.н., проф.

ПРОБЛЕМЫ УЧЕТА СТАБИЛЬНОГО РАЗВИТИЯ БИЗНЕСА

***Ключевые слова** – стабильное развитие, учет ущерба природопользования, учет результатов природопользования, не финансовая отчетность*

Практика показывает, что не финансовая информация ныне активно включается в систему традиционного отчетного процесса организации. Бенефициарии интересуются не только с финансово – экономическими показателями бизнеса, но и связанные с этим, не финансовыми результатами хозяйственной деятельности. В этой связи организации стараются представить не финансовые информации в приложениях опубликованных пакетов финансовой отчетности, что в свою очередь приводит к необходимости организации бухгалтерского учета подобных информационных потоков.

Ներկայացվել է՝ 01.04.2019 թ.

Հնդանվել է և քննարկվել է՝ 19.04.2019 թ.

Նարինե Մելիքյան

Կորպորատիվ Կառավարման Կենտրոնի տնօրեն, տ.գ.թ.

ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐՈՒՄ ԲԻԶՆԵՍԻ ԴԵՐՈ. ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Հիմնաբառեր – հակակոռուպցիոն համապատասխանություն, հակակոռուպցիոն համապատասխանության ծրագիր, կորպորատիվ կառավարում, ռիսկերի կառավարում, կորպորատիվ վարքականոններ, տնօրենների խորհուրդ

Այսօր, ավելի քան երբևէ, Հայաստանում կարևորվում է կոռուպցիայի դեմ պայքարը: Դրա մասին խոսում են տարբեր մակարդակներում, տարբեր հարթակներից: Կասկած չի հարուցում այն թեզը, որ կոռուպցիան Հայաստանի լրջագույն խնդիրներից է: Դրա հաղթահարման հարցում անմասն չի կարող մնալ մասնավոր հատվածը, քանի որ կոռուպցիան վատթարացնում է այն անձանց կյանքի որակը, որոնց բարեկեցությամբ է պայմանավորվում բիզնեսի հաջողությունը: Կոռուպցիան խարխլում է վատահոության մթնոլորտը, որը կենսական նշանակություն ունի բիզնեսի երկարաժամկետ և կայուն զարգացման համար:

Բիզնեսի համատեքստում հակակոռուպցիոն համապատասխանությունը վերաբերում է կոռուպցիայի դեմ պայքարի ազգային և միջազգային օրենքներին, կանոնագրքերին, կանոններին և սկզբունքներին, ինչպես նաև սեփական կորպորատիվ մշակույթին հետևելուն: Հակակոռուպցիոն համապատասխանության գիտակցված ու իրական հանձնառությունը պարզևատրում է ներդրումային գրավչության, գործունեության արդյունավետության բարձրացմամբ, կորպորատիվ մշակույթի բարելավմամբ, կորպորատիվ որոշումների որակով և գործընկերային երկարաժամկետ ազնիվ հարա-

բերություններով, ինչպես նաև գործարար միջավայրի և տրնտեսության առողջացմամբ:

Առաջնորդվելով վերոնշյալ շարժառիթներով՝ Կորպորատիվ Կառավարման Կենտրոնը Միջազգային մասնավոր ձեռնարկատիրության կենտրոնի (CIPE, www.cipe.org) հետ համագործակցության շրջանակներում նախաձեռնել է «Կոռուպցիայի դեմ պայքարում բիզնեսի դերը. Հայաստանյան իրականություն» հետազոտությունը՝ նպատակ ունենալով բացահայտել՝

- մասնավոր հատվածի վերաբերմունքը կոռուպցիայի նկատմամբ,
- հակակոռուպցիոն համապատասխանության մասնավոր հատվածի ընկալումը,
- հակակոռուպցիոն համապատասխանության ապահովման համար մասնավոր հատվածի կողմից իրականացվող ու իրականացվելիք միջոցառումները:

Հետազոտությունն իրականացվել է հարցման միջոցով: Հարցումն անցկացվել է հայաստանյան ընկերությունների շրջանում 2018թ. սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսների ընթացքում: Հարցմանը մասնակցել են 188 կազմակերպություն: Հարցումն իրականացվել է կիսաստանդարտացված հարցաթերթի միջոցով, որի հիմնական արդյունքները ներկայացնում ենք ստորև:

1. Ընկերության վերաբերմունքը կոռուպցիայի նկատմամբ

1.1. Ի՞նչ է կոռուպցիան Ձեր ընկալմամբ

Կոռուպցիայի՝ ընկերությունների ընկալումը պարզելու համար հարցվողներին առաջարկվել է տալ կոռուպցիայի սեփական սահմանումը: Հարցի վերաբերյալ իրենց տեսակետն արտահայտել է հարցվողների գերակշիռ մեծամասնությունը՝

շուրջ 88%-ը: Հարցվողներն իրենց սահմանումներում կոռուպցիային մոտեցել են տարբեր տեսանկյուններից: Հետևաբար, փորձ է կատարվել խմբավորել այդ սահմանումները:

Միաժամանակ հարկ է նշել, որ ներկայացված խմբավորումը պայմանական է, քանի որ սահմանումներում հնարավոր է դիտարկել ներքևում նշված հատկանիշների համատեղումներ: Այս կամ այն խմբի մեջ սահմանման ներառումը հիմնականում պայմանավորվում է հարցվողների պատասխանում որոշակի հատկանիշի ընդգծվածության աստիճանով: Սահմանումների խմբերը հետևյալն են.

Խումբ 1. սահմանումներ, որոնցում կարմիր թելի պես անցնում է այն միտքը, որ կոռուպցիան պաշտոնական դիրքի չարաշահում է, և շեշտադրվում է շահերի բախման բաղկացուցիչը.

- *Կոռուպցիան իշխանության չարաշահումն է՝ անձնական և/կամ խմբային շահ/առավելություն ստանալու նպատակով և առավել մեծ մասշտաբի է հասնում, երբ դրա հնարավորությունը հատուկ (կանխամտացված) ներկառուցված է օրենսդրական և պետական համակարգերում:*
- *Կոռուպցիան ծառայողական դիրքի չարաշահումն է անձնական նպատակներ իրագործելու համար:*
- *Պետական կամ մասնավոր հատվածում անձի կողմից իր լիազորությունների և իրավունքների չարաշահում՝ ի շահ սեփական անձի:*

Խումբ 2. սահմանումներ, որոնք որակում են երևույթը.

- *կոռուպցիան հանցագործություն է, չարիք,*
- *պետության և ժողովրդի հանդեպ իրականացվող հակաօրինական գործողություն է կամ անգործություն,*
- *անընդունելի արարք է և այլն:*

Խումբ 3. սահմանումներ, որոնք կոռուպցիան դիտարկում են դրա հետևյալ դրսևորումների տեսանկյունից.

- *կաշառակերություն,*
- *հովանավորչություն,*
- *պաշտոնական դիրքի, լիազորությունների կամ կապերի չարաշահում, պաշտոնական կեղծիք,*
- *պաշտոնական դիրքի օգտագործմամբ պետական կամ կազմակերպության սեփականության յուրացում ու վատնում և այլն:*

Խումբ 4. սահմանումներ, որոնք կոռուպցիայի էությունը բացահայտում են դրա հետևանքների տեսանկյունից.

- *խափանում է առաջընթացը, բիզնեսի զարգացումը,*
- *խրախուսում է անբարեխիղճ ու ոչ արդար մրցակցությունը,*
- *գործում է իրական բիզնեսի դեմ և քանդում երկրի անվտանգության հիմքերը,*
- *կոռուպցիան պետականությունը թուլացնելու ու անարդար մրցակցության արտահայտումն է,*
- *կոռուպցիան ողջ աշխարհում տնտեսական և սոցիալական զարգացման ամենամեծ խոչընդոտն է,*
- *որտեղ իշխում է կոռուպցիան, ընկերությունները հակված չեն ներդրումներ կատարել, քանի որ գործարարությամբ զբաղվելու ծախսերը զգալիորեն ավելի մեծ են,*
- *կոռուպցիան պետականության հիմքերը քայքայող, վստահության միջավայրը խաթարող հիվանդություն է և այլն:*

Խումբ 5. սահմանումներ, որոնցում արտահայտվում է հարցվող ընկերության վերաբերմունքը կոռուպցիայի նկատմամբ կամ իրավիճակը ընկերությունում.

- *դեմ ենք կոռուպցիային,*
- *մեր ընկերության քաղաքականության մեջ տեղ չկա կոռուպցիային,*
- *ընկերությունը հետևում է հակակոռուպցիոն օրենսդրության պահպանման և էթիկական վարքագծի սկզբունքներին բոլոր տեսակի գործնական հարաբերություններում՝ անկախ երկրից, որի տարածքում Ընկերությունը ծավալում է իր տնտեսական գործունեությունը և այլն:*

Խումբ 6. հուզական սահմանումներ.

- *կոռուպցիան ուրիշի աշխատանքի յուրացում է, գողություն հասարակությունից,*
- *կոռուպցիան մոլախոտ է, որից ազատվելու միակ միջոցը արմատախիլ անելն է, կոռուպցիան վատթարագույն զգվելի երևույթ է, կորչի կոռուպցիան,*
- *կոռուպցիան «պոզով-պոչով» կենդանի չէ: Կոռուպցիան ՀՀ նախկին կառավարությունն է և այլն:*


Առանձնակի ընդգծելու անհրաժեշտություն ունեն ներքոնշյալ սահմանումները, քանի որ դրանք կոռուպցիան դիտարկում են կայուն զարգացման հայեցակարգի տեսանկյունից և կարևորում ընկերությունների ոչ միայն տնտեսական, այլև սոցիալական դերակատարումը, այդ թվում՝ դրանց կողմից հակակոռուպցիոն դիրքորոշման որդեգրումը.

- Կոռուպցիան ընկերությունների գործունեությունն է բացառապես տնտեսական շահի հետապնդմամբ:
- Կոռուպցիան աշխատող ժողովրդին թալանելն է, ինչը խոչընդոտում է ապագա սերնդի զարգացմանը:

- Արդի զարգացման ժամանակաշրջանում ոչ պակաս դերակատարություն ունի կոռուպցիոն դրսևորումների դեմ պայքարը առևտրային կազմակերպությունների կողմից, որը լրացուցիչ զսպողական մեխանիզմների ներդրում է պահանջում հենց առևտրային կազմակերպությունների ներքին ակտերի միջոցով:

165 սահմանումներից ընդամենը մեկն է կոռուպցիան դիտարկել դրական լույսի ներքո և տվել հետևյալ ձևակերպումը. Կոռուպցիան խնդիրների լուծման ամենաարագ միջոցն է: Եվ, ընդամենը մեկ սահմանում ունի վատատեսական հնչերանգ. կոռուպցիան արմատախիլ անել չի լինի, քանի որ այն գալիս է անհիշելի ժամանակներից, և դեռևս ոչ մի երկրի չի հաջողվել այդ չարիքից ազատվել:


1.2. Որո՞նք են կոռուպցիան խթանող գործոնները Հայաստանում



Կոռուպցիան խթանող գործոնների վերաբերյալ հարցվողները գրեթե նույն նշանակությունն են տվել պետական և տեղական կառավարման համակարգի խնդիրներին (23%), տնտեսական թույլ համակարգին (22%), թույլ քաղաքացիա-

կան հասարակությանը (20%), դատաիրավական թույլ համակարգին (22%): Հատկանշանական է, որ ընկերությունների ոչ պատասխանատու դիրքորոշումը՝ որպես կոռուպցիան խթանող գործոն, ունի բավականաչափ ցածր տեսակարար կշիռ (8%), ինչից կարելի է եզրակացնել, որ հայաստանյան ընկերությունները դեռևս լիարժեք չեն գիտակցում հակակոռուպցիոն իրենց ակտիվ դիրքորոշման նշանակությունը:

Կոռուպցիան խթանող «Այլ» գործոնների խմբում նշվել են խորհրդային ժառանգության հետևանքները, քաղաքական կամքի բացակայությունը, օրենսդրական դաշտի թերությունները, բյուրոկրատական քաշքշուկները, ցածր աշխատավարձերի խնդիրը և այլն:



1.3. Որո՞նք են կոռուպցիայի բացասական հետևանքները

Կոռուպցիայի հնարավոր բացասական հետևանքների 1-ին հորիզոնականն, ըստ հարցման արդյունքների, զբաղեցնում են ֆինանսական կորուստները (25%), 2-րդ տեղում հեղինակության ռիսկն է (21%), իսկ 3-րդում՝ կորպորատիվ բացասական միջավայրը (20%): Հարկ է նշել, որ թե՛ կորպո-

րատիվ հեղինակությունը և թե՛ կորպորատիվ միջավայրը ոչ նյութական ակտիվներ են, որոնք ազդում են ընկերության արժեքի վրա և կարող են կասկածի տակ դնել ընկերության երկարաժամկետ կայունությունը, այդ թվում՝ ֆինանսական: Որպես այլ հետևանքներ, հարցվողները նշել են նաև ոչ առողջ մրցակցային միջավայրը, մեղքի զգացողությունը հասարակության առջև, որ դու նույնպես սնուցում ես այդ արատավոր երևույթը:


1.4. Կարո՞ղ է կոռուպցիան դրական ազդեցություն ունենալ Ձեր ընկերության գործունեության վրա

Հարցվածների գերակշիռ մեծամասնությունը (93%) մերժել է կոռուպցիայի դրական ազդեցությունը, իսկ 6%-ը ընդունել այն: Կոռուպցիայի նկատմամբ դրական տրամադրվածությունը հարցվածները բացատրել են հետևյալ հանգամանքներով.

- առանց կոռուպցիոն երևույթների հնարավոր չէ կարճ ժամանակահատվածում լուծել խնդիրներ,
- ժամանակի տնտեսում,
- ավելորդ թղթաբանությունից խուսափում,
- բյուրոկրատիայի հաղթահարում ոչ միայն պետական մարմինների, այլև մասնավոր, հատկապես բնական մենաշնորհների հետ հարաբերություններում:

1.5. Կոռուպցիոն ի՞նչ երևույթների է բախվել Ձեր ընկերությունը

Հնարավոր է, որ այս հարցին պատասխանելիս հարցվողներն այնքան էլ անկեղծ չեն եղել: Այսպես, հարցվածների 23%-ը



նշել է, որ կոռուպցիոն երևույթների հետ չի բախվել, և նրանցից ընդամենը մեկն է ներկայացրել հիմնավորում՝ դա պայմանավորելով ընկերության կողմից ընդունված հակակոռուպցիոն քաղաքականությամբ ու ընթացակարգերով: Հարցին չի պատասխանել հարցվածների 21%-ը: Ամեն դեպքում, հարցվածների 15%-ը նշել է շահերի բախման չբացահայտումը, և 13-ական տոկոսներ ստացել են անձնական ծառայությունների մատուցումն ու պետական պաշտոնյայի կողմից կաշառք պահանջելը: Ուշագրավ է դիտարկել նաև «Այլ» խումբը, որտեղ հարցվածներն առանձնացրել են հետևյալ կոռուպցիոն երևույթները. կորպորատիվ կոռուպցիա, օրինակ՝ աշխատակիցը չարաշահել է իր պաշտոնական պարտականություններն՝ ի վնաս ընկերության, գործընկերը պահանջել է ոչ ֆորմալ վճար մրցակիցների նկատմամբ ավելի բարենպաստ պայմաններ առաջարկելու դիմաց, մրցությալին

գործընթացների ոչ պատշաճ կազմակերպում (հայտարարում են մի բան, անում բոլորովին այլ):

2. Հակակոռուպցիոն համապատասխանության միջոցները

Հաշվի առնելով այն, որ հակակոռուպցիոն համապատասխանության թեման բավական նոր է հայաստանյան ընկերությունների համար՝ հարցման ընթացքում հարցվողների ուշադրությունը հրավիրվել է ոչ թե հակակոռուպցիոն համապատասխանության ծրագրի բոլոր բաղկացուցիչների, այլ դրանց մի մասի վրա, որոնցից են՝

- ռիսկերի կառավարումը,
- վարքականոնները և դրանց կիրառումը,
- հակակոռուպցիոն համապատասխանության կանխարգելիչ գործողությունները:

2.1. Դիտարկում և գնահատում եք, արդյոք՞, կոռուպցիոն ռիսկերը

Հարցին դրական պատասխան է տվել հարցվածների 63%-ը, սակայն նրանց 67%-ը նշել է նաև, որ հակակոռուպցիոն համապատասխանության տեսանկյունից երբևէ չի գնահատել իր գործընկերներին: Սա տարակուսանքների տեղիք է տալիս այն առումով, որ գործընկերների կամ երրորդ կողմի գնահատումը հանդիսանում է կոռուպցիոն ռիսկերի գնահատման և կառավարման կարևորագույն բաղկացուցիչը: Ինչ վերաբերում է գործընկերների կողմից իրենց գնահատելուն, ապա, ըստ հարցման արդյունքների, դրան ենթարկվել է հարցվածների ընդամենը 20%-ը, գերակշիռ մեծամասնությունը հարցին տվել է բացասական պատասխան:

2.2. Ընդունել էք արդյոք կորպորատիվ վարքականոններ և ինչպե՞ս էք ապահովում դրա կիրառումը

Վարքականոնները հանդիսանում են ոչ միայն հակակոռուպցիոն համապատասխանության ծրագրի, այլև ընկերությունների կորպորատիվ մշակույթի առանցքը: Կորպորատիվ վարքականոնները ընկերության վարվելակերպի հիմնական ուղեցույցն են: Կորպորատիվ վարքականոնների անհրաժեշտությունը պայմանավորվում է՝

- կորպորատիվ արժեքների կարևորության ճանաչմամբ, կորպորատիվ մշակույթի կառավարմամբ և արդյունքում ընկերության գործարար համբավի ու հեղինակության բարելավմամբ: Հաշվի առնելով, որ ցանկացած ընկերության գործարար համբավն ու հեղինակությունը նրա ամենաարժեքավոր ակտիվն է, վարքականոնների որդեգրումն ու դրան հետևելը նրպաստում են ընկերության արժեքի ավելացմանը,
- ռիսկերի արդյունավետ կառավարմամբ, ճգնաժամային իրավիճակների կանխատեսմամբ և կանխարգելմամբ կամ դրանք նվազ վնասներով հաղթահարմամբ,
- շահառուների հետ արդյունավետ հարաբերությունների կառուցմամբ, ընկերության նկատմամբ նրանց վստահության ամրապնդմամբ,
- աշխատակիցների և գործընկերների ընտրության չափանիշների հստակեցմամբ:

Կորպորատիվ վարքականոնները գործնական կյանքում վերածվում են ընկերության և նրա յուրաքանչյուր աշխատակցի «այցեքարտի», և, որ ամենակարևորն է, դրանք շահառուների մոտ ընկերության վերաբերյալ ձևավորում են


սպասումներ: Հետևաբար, ընկերությունն իր գործունեությանը և վարքականոնների պրակտիկ կիրառման միջոցով պետք է արդարացնի այդ սպասումները, այլապես կարող է ունենալ խնդիրներ, այդ թվում՝ հեղինակության ռիսկով պայմանավորված:

2.2.1. Ունեք, արդյո՞ք, կորպորատիվ վարքականոններ

Հարցմանը մասնակցած ընկերությունների ընդամենը 34%-ն է նշել կորպորատիվ վարքականոնների առկայության մասին:

Այն հարցին, թե վարքականոնները բովանդակում են արդյոք կանոն կոռուպցիայի նկատմամբ զրո հանդուրժողականության մասին, վարքականոններ որդեգրած ընկերությունների 32%-ը տվել է դրական պատասխան, 20%-ը՝ բացասական, իսկ 48%-ը՝ հարցին չի պատասխանել:

2.2.2. Ինչպե՞ս են աշխատակիցներն ու գործընկերներն իրազեկվում կորպորատիվ վարքականոններին



Հարցվածների կեսը կրկին չի պատասխանել հարցին: 23%-ը կորպորատիվ վարքականոնները տրամադրում է աշխատակիցներին ծանոթացման նպատակով: Հնարավոր է, որ այստեղ իր բաժինն ունենա ընթացակարգի ֆորմալ պահպանումը, այլ ոչ թե ընկերության կորպորատիվ մշակույթի վերաբերյալ աշխատակիցներին իրազեկման անհրաժեշտության գիտակցումը: Ինչ վերաբերում է գործընկերներին, ապա իրազեկելու ամենահարմար և հասանելի կապուղիով՝ ինտերնետային էջի միջոցով վարքականոնների բացահայտումը կատարվում է հարցվածների ընդամենը 8%-ի կողմից:

2.2.3. Ու՞մ պարտականությունների շրջանակում է կորպորատիվ վարքականոնների կիրառման հսկողությունը

Այս հարցին կրկին չեն պատասխանել հարցվածների գրեթե կեսը: Հարցվածների 15-ական տոկոսը կազմող երկու խումբ, որպես պատասխանատուներ, նշել են անմիջական ղեկավարին ու տնօրենին: Հաշվի առնելով, որ հարցվածների գերակշիռ մեծամասնությունը ՓՄՁ-ներ են, ապա, հարկ է նշել, որ անմիջական ղեկավարի ու տնօրենի պարտականությունները հնարավոր է, որ համատեղվեն:

Սա է փաստում նաև այն, որ կորպորատիվ վարքականոնների խախտման դեպքերը հարցվածների 32%-ի մոտ բացահայտվում են անմիջական ղեկավարին տեղեկացման միջոցով, և, ըստ հարցվածների 18%-ի, խախտման հետ կապված ձեռնարկվող միջոցներից է անմիջական ղեկավարի հետ առանձնազրույցը:

2.2.4. Ի՞նչ դերակատարում ունի ընկերության բարձրագույն ղեկավարությունը կորպորատիվ վարքականոնների իրագործման հարցում


Սովորաբար ընկերությունների էթիկական, այդ թվում՝ հակակոռուպցիոն, համապատասխանությանը «տոն տվողը» բարձրագույն ղեկավարությունն է՝ հանձինս խորհրդի ու գործադիր ղեկավարության: Նրանք պարտավոր են գործել ուրուշակի վարքագծային սահմանափակումների շրջանակում: Որպես նման սահմանափակումներ հանդես են գալիս նաև էթիկական արժեքներն ու սկզբունքները: Նրանք պետք է գիտակցեն, որ ընկերության էթիկան ու գործարար հեղինակությունն իրենց սեփական հեղինակության շարունակությունն են:

Ինչպես հետևում է հարցման արդյունքներից, հարցվածների 18%-ի մոտ բարձրագույն ղեկավարությունը սեփական վարքագծով օրինակ է ծառայում աշխատակիցների և այլ շահառուների համար: Հարցվածների 11%-ը նշել է, որ բարձրագույն ղեկավարությունը երաշխավորում է, որ վարքականոնները հավասարապես կիրառվեն բոլոր աշխատակիցների և շահառուների նկատմամբ, իսկ 10%-ի մոտ ղեկավարությունն անհապաղ միջոցներ է կիրառում բացահայտված անհամապատասխանությունները կամ խախտումները վերացնելու ուղղությամբ: Հարկ է նշել, որ կրկին բավականաչափ բարձր է հարցին չպատասխանած անձանց տեսակար կշիռը (35%):

2.2.5. Մտադիր եք, արդյո՞ք, ընդունել կորպորատիվ վարքականոններ

Հարցի պատասխանն այնքան էլ հուսադրող չէ, քանի որ իրենց դրական մտադրության մասին կիսվել են հարցվածների ընդամենը 43%-ը, 26%-ի մոտ պատասխանը բացասական է, իսկ 31%-ը, կարելի է ասել, մտորումների մեջ է, քանի որ հարցին չի պատասխանել:

2.3. Հակակոռուպցիոն համապատասխանության կանխարգելիչ գործողություններ



2.3.1. Ի՞նչ գործոններ կարող են կանխել կոռուպցիոն ռիսկի ծագումը

Հարցվածների ձայների համեմատաբար բարձր տոկոսներ բաժին են ընկել բիզնես-գործընթացների վերահսկմանը (18%), սեփական կորպորատիվ մշակույթի ճանաչմանն ու կառավարմանը (15%), ռիսկերի կառավարմանը (14%): Մի կողմից հուսադրող է այն, որ հարցվածները հակակոռուպցիոն միջոցառումները դիտարկում են վերահսկման միջավայրի և կորպորատիվ մշակույթի ձևավորման համատեքստում, իսկ, մյուս կողմից, համեմատաբար ցածր է ուսուցումներին, ահազանգումներին բաժին ընկած ձայների քանակը:

Ինչպես հետևում է գծապատկերից, հարցման ժամանակ, որպես կանխարգելիչ գործոններ, դիտարկվել են ներքինները: Մակայն հարցվողներն իրենց պատասխաններում նշել են նաև արտաքին այնպիսի գործոններ, ինչպիսիք են՝

- հարկային արդարացի քաղաքականության իրականացումը,
- մենաշնորհների և պետական լծակներն անձնական շահերի համար ծառայեցնելու բացառումը,
- քաղաքականության և գործարարության համատեղելիության բացառումը:

2.3.2. Մտադիր եք, արդյո՞ք, առաջիկա 6 ամիսների ընթացքում ընդունել հակակոռուպցիոն համապատասխանության գործելաձև

Առաջիկա վեց ամիսների ընթացքում հակակոռուպցիոն համապատասխանության գործելաձևը որդեգրելու իր մտադրությունն արտահայտել է հարցվածների 52%-ը, իսկ նման մտադրության բացակայությունն արձանագրվել է 45%-ի մոտ: Մակայն, վերջին հանգամանքի հետ կապված, որոշ ընկերություններ տվել են մեկնաբանություններ առ այն, որ ընկերությունն արդեն իսկ ունի նման համակարգ, կամ ներդրված են այդ համակարգի որոշակի տարրեր: Օրինակ՝ ներդրված համակարգը բավականին արդյունավետ է գործում, և առաջիկա աշխատանքները կապված կլինեն դրանց պահպանման, նոր աշխատակիցների տեղեկացվածության հետ և այլն: Հարկ է նշել, որ նման ընկերությունները փոքրամասնություն են կազմում:

Ուշագրավ է այն հանգամանքը, որ ընկերությունների մոտ որոշակի հակասական վերաբերմունք է իրենց կորպորատիվ մշակույթի, այդ թվում՝ կորպորատիվ վարքականոնների, հակակոռուպցիոն քաղաքականությունների ու ընթա-


ցակարգերի փաստաթղթավորման և ընդունման առնչությամբ: Այսպես, առկա են հետևյալ տրամաբանությամբ պատասխաններ. *փաստաթղթային վարքականոններ չկան, սակայն ընկերության գործունեության հիմքում կորպորատիվ վարքականոններն են, կամ իրականում այդ ամենը գործում է առանց որևէ ստանդարտի ընդունման*: Նման պատասխանները վկայում են ընկերությունների կառավարման համակարգում առկա խնդիրների մասին: Կորպորատիվ հարաբերությունները կարգավորող ցանկացած, թեկուզ անկատար, փաստաթղթի առկայությունն ավելի լավ է, քան դրա բացակայությունը, որովհետև այդ փաստաթղթերը որոշակի սահմանափակումներ են նախատեսում ընկերության գործելավճում և, դրա հետ կապված, ձևավորում սպասումներ ընկերության վարքագծի առնչությամբ, որոնք կարող են արդարացվել կամ չարդարացվել: Սովորաբար, կորպորատիվ փաստաթուղթը այս կամ այն խնդրի կարգավորման վերաբերյալ ընկերության մոտեցումն է, այլ կերպ ասած, ընկերության խոստումը, խոսքը:

Ընկերության գործելավճը վկայում է կամ խոսքի ու գործի համապատասխանության, որը դրական ազդեցություն է ունենում ընկերության կորպորատիվ հեղինակության վրա, կամ դրանց անհամապատասխանության մասին, որի ազդեցությունն, ակներև, բացասական է: Խոսքի բացակայությունը վկայում է նաև դրան հավատարիմ լինելու ընկերության՝ իր ունակությունների նկատմամբ անվստահության մասին:

Բացի այդ, կորպորատիվ կարգավորումները ընկերության խաղի կանոններն են, որոնք պետք է փոխանցվեն ընկերության ներկա և ապագա աշխատակիցներին ու գործընկերներին, ժամանակի ընթացքում կանոնավոր կերպով ենթարկվեն վերանայումների՝ գործող իրականության հետ համապատասխանությունն ապահովելու նպատակով: Սա բավականին բարդ ու աշխատատար, սակայն ընկերության

կառավարման համակարգի որակը երաշխավորող գործընթաց է:


2.3.3. Եթե մտադիր եք ընդունել հակակոռուպցիոն համապատասխանության գործելաձևը, ապա ի՞նչ եք նախատեսում անել



Ընկերությունների պատասխաններից կրկին հետևում է, որ հակակոռուպցիոն համապատասխանությունը դիտարկվում է կորպորատիվ մշակույթի և վերահսկման միջավայրի կառավարման տեսանկյունից: Հետևաբար, հավաքած ձայների քանակով առանձնացել են սեփական կորպորատիվ մշակույթի ճանաչումը և կառավարումը (14%), բիզնես-գործընթացների վերահսկումը (14%), ռիսկերի կառավարումը (13%):

2.3.4. Եթե մտադիր չեք ընդունել հակակոռուպցիոն համապատասխանության գործելաձևը, ապա որո՞նք են պատճառները

Գծապատկերից կարելի է եզրակացնել, որ հակակոռուպցիոն



համապատասխանության գործելաձև չորդեգրելու ամենաընդգծված պատճառն այդ գործելաձևի առանձնահատկությունների, առավելությունների ու թերությունների մասին լիարժեք պատկերացում չունենալն է, ինչն էլ, ամենայն հավանականությամբ, դրդել է հարցվողների 55%-ին չպատասխանել հարցին:

2.3.5. Գիտե՞ք Հայաստանում գործող ընկերություններ, որոնք ներդրել են հակակոռուպցիոն համապատասխանության ծրագրեր

Հարցվածների գերակշիռ մեծամասնությունը (77%) նշել է, որ չգիտի Հայաստանում գործող ընկերություններ, որոնք ներդրել են հակակոռուպցիոն համապատասխանության ծրագիր: Պատճառներից մեկն այն է, որ հայաստանյան փորձն այս բնագավառում բավականաչափ համեստ է: Միաժամանակ հակակոռուպցիոն համապատասխանության փորձառություն ունեցող ընկերություններից եզակիներն են ապահովում իրենց թափանցիկությունը:

2.3.6. Ընկերությունների հակակոռուպցիոն համապատասխանության գործելաձևը կարող է արդյոք սահմանափակել կոռուպցիան Հայաստանում

Ընկերությունների գերակշիռ մեծամասնությունը (82%) համամիտ է, որ ընկերությունների հակակոռուպցիոն համապատասխանության գործելաձևը կարող է սահմանափակել կոռուպցիան: Սա ուրախացնող փաստ է հակակոռուպցիոն կոլեկտիվ (համատեղ) գործողությունների նախաձեռնման տեսանկյունից: Սակայն, եթե այն համադրում ենք ընկերությունների հակակոռուպցիոն համապատասխանության անհատական միջոցառումներ նախաձեռնելու մտադրությունների հետ, որոնք տեղ են գտել վերևում նշված պատասխաններում, ապա հարցվածների մոտ նշմարելի է «անտոմս ուղեվորի» խնդիրը, երբ անձն օգտվում է կամ պատրաստ է օգտվել հանրային բարիքից՝ առանց դրա մեջ ներդրում կատարելու:

ԱՄՓՈՓՈՒՄ

1. Հարցվածները բավականաչափ տեղեկացված են կոռուպցիայի ու դրա հետևանքների մասին և ունեն բացասական ու քննադատական վերաբերմունք:

2. Կոռուպցիան խթանող գործոնների վերաբերյալ հարցվողները գրեթե նույն նշանակությունն են տվել պետական և տեղական կառավարման համակարգի խնդիրներին, տնտեսական թույլ համակարգին, թույլ քաղաքացիական հասարակությանը, դատախիզական թույլ համակարգին: Չեն բացառել նաև խորհրդային ժառանգության, քաղաքական կամքի բացակայության, օրենսդրական դաշտի թերությունների, բյուրոկրատական քաշքշուկների, ցածր աշխատավարձերի ազդեցությունը:
3. Կոռուպցիայի հնարավոր բացասական հետևանքների 1-ին հորիզոնականը զբաղեցնում են ֆինանսական կորուստները (25%), 2-րդ տեղում հեղինակության ռիսկն է (21%), իսկ 3-րդում՝ կորպորատիվ բացասական միջավայրը (20%):
4. Հայաստանում եզակի ընկերություններում է ներդրվել հակակոռուպցիոն համապատասխանության ծրագիր:
5. Կոռուպցիոն ռիսկերը գնահատող ընկերությունների (հարցվածների 63%) 67%-ը հակակոռուպցիոն համապատասխանության տեսանկյունից երբևէ չի գնահատել իր գործընկերներին:
6. Հարցմանը մասնակցած ընկերությունների ընդամենը 34%-ն է նշել կորպորատիվ վարքականոնների առկայության մասին:
7. Հակակոռուպցիոն կանխարգելիչ միջոցառումներին վերաբերող հարցերում բավականաչափ բարձր է դրանց չպատասխանածների տեսակարար կշիռը, ինչի հնարավոր պատճառներից կարող է լինել հակակոռուպցիոն համապատասխանության գործելառճի առանձնահատ-

կությունների, առավելությունների ու թերությունների մասին լիարժեք պատկերացումների բացակայությունը:

8. Հակակոռուպցիոն միջոցառումները հարցվածների կողմից դիտարկվում են վերահսկման միջավայրի և կորպորատիվ մշակույթի ձևավորման համատեքստում:
9. Առաջիկա վեց ամիսների ընթացքում հակակոռուպցիոն համապատասխանության գործելառճը որդեգրելու իր մտադրությունն արտահայտել է հարցվածների 52%-ը:
10. Ընկերությունների գերակշիռ մեծամասնությունը (82%) համամիտ է, որ ընկերությունների հակակոռուպցիոն համապատասխանության գործելառճը կարող է սահմանափակել կոռուպցիան: Մակայն, եթե դա համադրում ենք ընկերությունների հակակոռուպցիոն համապատասխանության անհատական միջոցառումներ նախաձեռնելու մտադրությունների հետ, ապա հարցվածների մոտ նշմարելի է «անտոմս ուղևորի» խնդիրը:

Narine Melikyan

Director of the Corporate Governance Center, Ph.D. in Economics

THE ROLE OF BUSINESS IN THE FIGHT AGAINST CORRUPTION: ARMENIAN REALITY

Keywords – *anti-corruption compliance, anti-corruption compliance program, corporate governance, risk management, code of conducts, board of directors*

Today, more than ever, the fight against corruption is given much importance in Armenia.

The private business sector in Armenia cannot remain unconcerned about overcoming corruption. The conscious and genuine commitment of anti-corruption compliance of business rewards with recovery of companies, business environment and economy.

Guided by the above motives, "The Role of Business in the Fight against Corruption: Armenian Reality" research was conducted through survey in the framework of the project "Armenia: Promoting Anti-Corruption Conduct and Reforms" supported by the Center for International Private Enterprise. 188 companies participated in the survey. The respondent companies are quite aware of corruption and its consequences as well as have a negative and cautious approach towards corruption. As for the factors promoting corruption, the respondents gave almost the same importance to the problems of state and local government system, the weak economic system, the weak civil society and the weak judicial and legal system. Financial losses (25%) come first among possible negative consequences of corruption, reputation risk (21%) occupies the second place, and negative corporate environment (20%) is in the third place.

Нарине Меликян

Директор Центра Корпоративного Управления, к.э.н.

**РОЛЬ БИЗНЕСА В БОРЬБЕ ПРОТИВ КОРРУПЦИИ:
АРМЯНСКАЯ РЕАЛЬНОСТЬ**

***Ключевые слова** – антикоррупционное соответствие, программа антикоррупционного соответствия, корпоративное управление, управление рисками, кодекс этики, совет директоров*

Сегодня как никогда в Армении приобретает особую важность борьба против коррупции, в котором не может остаться безучастным частный сектор. Осознанное обязательство бизнеса борьбы против коррупции награждает улучшением деловой среды и оздоровлением экономики.

В рамках проекта “Армения: стимулирование антикоррупционного поведения и реформы”, который осуществляется при поддержке Международного центра частного предпринимательства, с помощью опроса было проведено исследование “Роль бизнеса в борьбе против коррупции: армянская реальность”. В опросе приняли участие 188 организаций.

Согласно результатов опроса, у респондентов был зафиксирован высокий уровень информированности относительно коррупции и ее последствий, а также подчеркнута негативный подход к коррупционным явлениям. В числе стимулов коррупции респонденты почти равное значение отдали слабой экономической системе, слабому гражданскому обществу и слабой судебной системе. Среди негативных последствий коррупции первое место заняли финансовые потери (25%), второе - репутационный риск (21%), третье - негативная корпоративная среда (20%).

Ներկայացվել է՝ 23.03.2019 թ.

Ընդունվել է և ցայտարարվել է՝ 19.04.2019 թ.

Անի Առաքելյան

«Հաշվապահության Ուսուցման Միջազգային Կենտրոն»

Որակյի ապահովման կենտրոնի պատասխանատու

ԲՈՒՀ–ԳՈՐԾԱՏՈՒ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՒՄ

Հիմնաբառեր – կրթության շուկա, աշխատաշուկա, մասնագիտական կրթության որակյի ապահովում, շարունակական համագործակցություն, հաշվապահ շրջանավարտ

Բարձրագույն կրթության որակյի ապահովման ժամանակակից քննարկումների համատեքստում հատկապես արդիական է դարձել բուհ–աշխատաշուկա արդյունավետ համագործակցության մոդելի մշակման և զարգացման հարցը: Վերջինիս համատեքստում էական հիմնախնդիրներից է հանդիսանում այն հանգամանքը, որ բուհերը և գործատուները մշտապես «խոսում են տարբեր լեզուներով»: Գործատուները կողմնորոշված են դեպյի շուկայական զարագացումները, իսկ բուհն իրենից ներկայացնում է գիտելիքի փոխանցման ինստիտուցիոնալիզացված ակադեմիական դաշտ, որի զարգացման ուղենիշները գտնվում են գիտակրթական նպատակների և մարտահրավերների տիրույթում: Բուհ–աշխատաշուկա արդյունավետ կապի ստեղծման փորձերի մեծ մասի սահմանափակությունը կայանում է նրանում, որ դեպքերի մի մասում փորձ է արվում բուհական կրթությունը կողմնորոշել շուկայական պահանջներին, ինչն, էականորեն, սահմանափակում է գիտական կրթության զարգացման հեռանկարները: Մյուս կողմից, գործատուների պահանջների

համապատասխանեցումը բուհական կրթության չափանիշներին ևս հիմնադրային է, քանի որ շուկայի անկանոն զարգացումների պայմաններում այդպիսի համապատասխանեցումը կարող է պարզապես հանգեցնել կազմակերպությունների մրցունակության նվազեցմանը:

Ինչու և ինչպես համագործակցել գործատուների հետ, որպեսզի կրթական գործընթացը լինի հնարավորինս արդյունավետ. այս հարցերի պատասխանները առանց գործատուների հետ արդյունավետ համագործակցության հնարավոր չէ, ըստ այդմ էլ, հնարավոր չէ ապահովել աշխատաշուկայի կողմից պահանջված մասնագետներ և որակավորումների ճանաչելիություն:²³

Կրթական գործընթացի արդյունավետության համար ուսումնական հաստատությունը և գործատուն համատեղ ռազմավարություն պետք է մշակեն, ուսումնական հաստատություններից յուրաքանչյուրը պետք է կարողանա գտնել գործատուների հետ շարունակական համագործակցության իր բանաձևը:

Ինչու է կարևոր գործատուների հետ համագործակցությունը. այն ապահովում է ուսումնական հաստատությունների ինքնավարությունը, շնորհած որակավորումների ճանաչելիությունը, աշխատաշուկայի պահանջներին համընթաց քայլելը, առանց մեծ ֆինանսական ներդրումների, գործատուների նյութատեխնիկական բազայի հիման վրա պրակտիկ կրթության կազմակերպումը և այլն: Պետք է արվի առավելագույնը, որպեսզի բիզնեսի ներկայացուցիչները

²³ Ն. Խաչատրյան, Բարձրագույն կրթության տնտեսագիտություն, հեղ. հրատ, Եր. 2010, էջ 12:

ներգրավվեն բուհերի կառավարման մարմիններում և առաջարկեն բուհերի զարգացման ուղղությունների իրենց տարբերակը, որպեսզի դրանց գործունեությունն ինչ-որ չափով համահունչ լինի աշխատաշուկային: Կարևոր է նաև բուհերի կարիերայի կենտրոնների աշխատանքը. հենց վերջիններս պետք է ուսումնասիրեն իրենց բուհի շրջանավարտների հոսքը, աշխատաշուկայի կարիքները և բուհին ու նախարարությանն ուղղորդեն ընդունելություն կազմակերպելու, պետպատվեր ձևավորելու հարցում:

Հայաստանի համար գլխավոր մարտահրավերը աշխատանքի շուկայում երիտասարդների գործազրկության կրճատումն է: Թեև որոշ մասնագիտությունների գծով, ինչպես, օրինակ, հաշվապահության ոլորտում, արդեն այս խնդիրը որոշակիորեն կարգավորվել է, սակայն շատ բնագավառներում շարունակում է բարձր մնալ գործազուրկ երիտասարդների թիվը:²⁴

Ներկայումս փոխվել է բուհերի դերը: Նրանց առաքելություններում նշվում է ոչ միայն ուսանողների գիտելիքների փոխանցումը, այլև հմտությունների ուսուցումը, այնպիսի հմտությունների, որոնք կիրառելի են աշխատաշուկայում: Այսօր էլ մեր հասարակությունում հնչող հիմնական դժգոհությունը հենց այն է, որ ուսանողները չեն կարողանում գիտելիքները կիրառել աշխատանքում: Երբ 1980-1990 -ականներին բարձրագույն կրթությունը մասսայականացվեց, դա հանգեցրեց մասնագետների ավելցուկի, այսինքն՝ ավելի շատ մասնագետ է պատրաստվում, քան պետք է տնտեսությանը, որն էլ բերում է գործազրկության աճի: Սակայն բարձ-

²⁴ Լ. Զաքարյան, Որակի ապահովման ձեռնարկ, Եր. 2015, էջ 49:

րագույն կրթության մատչելիությունը և հասանելիությունը ևս պետության համար խնդիր է:²⁵

Հայաստանում առկա է այն խնդիրը, որ ավելի շատ ուսանողներ են ավարտում համալսարանը, քան պետք է աշխատաշուկային: Առաջացել է մեկ խնդիր ևս. միայն բակալավրիատում ուսուցումը բավական չէ աշխատանքի ընդունվելու համար և անհրաժեշտ է լինում նաև գիտելիքների բացը լրացնել լրացուցիչ կրթության շրջանակներում: Բացի այդ, գործատուները ցանկանում են աշխատանքի վերցնել նրանց, ովքեր ունեն աշխատանքի փորձ, իսկ նոր շրջանավարտները, ովքեր դեռ չունեն աշխատանքի փորձ, չեն կարողանում աշխատանքի ընդունվել: Այս դեպքում իրական լուծում կարող է լինել այն, որ բուհ-գործատու համագործակցության շնորհիվ ուսանողները կարողանան պրակտիկա անցնել և հետագայում աշխատանքի տեղավորվել տվյալ բնագավառում:²⁶

«Հաշվապահության Ուսուցման Միջազգային Կենտրոն» կրթական հիմնադրամը պատրաստում է «Հաշվապահական հաշվառում և հարկում» մասնագիտությամբ մագիստրոսներ՝ տնտեսագիտության մագիստրոսի որակավորմամբ: Մեր շրջանավարտներն աշխատում են հայաստանյան աշխատաշուկայի ոլորտի ամենաբազմազան կազմակերպություններում՝ մեծամասամբ որպես գլխավոր հաշվապահներ: Բուհն իր առջև հենց սկզբից խնդիր է դրել շրջանավարտների

²⁵ Խաչատրյան Ն., Բարձրագույն կրթության տնտեսագիտություն, հեղ. հրատ, Եր. 2010, էջ 19:

²⁶ Երիցյան Ս., Ճուղության Ա., Բոլոնիայի գործընթացի մարտահրավերները, «Էդիթ Պրինտ», Եր., 2012, էջ 61:

աշխատանքի տեղավորման հարցը: Կենտրոնում յուրաքանչյուր տարի հետազոտություն է կատարվում շրջանավարտների զբաղվածության՝ մասնագիտական և ոչ մասնագիտական, և գործատուների կողմից որակի գնահատման հետ կապված: Վերջին երեք տարիներին կատարված հարցումների արդյունքում պարզ է դառնում հետևյալը.

Աղյուսակ 1. Շրջանավարտների զբաղվածության մակարդակը 2016-2018 թթ. շրջանավարտների կտրվածքով

No.	Զբաղվածություն, %	2016, %	2017, %	2018, %
1	Մասնագիտությամբ	86	84	94
2	Ոչ մասնագիտությամբ	14	16	6
3	Զի աշխատում	0	0	0

2019 թ. փետրվարի 26-ին «Հաշվապահության Ուսուցման Միջազգային Կենտրոն» կրթական հիմնադրամում տեղի ունեցավ նախադեպը չունեցող «ՀՈՒՄԿ–գործատու շարունակական երկխոսություն» թեմայով քննարկում: Քըննարկմանը մասնակցում էին գործարար համայնքի ներկայացուցիչներ, ուսումնական հաստատության պրոֆեսորադասախոսական անձնակազմը, աշխատակիցները, «Հաշվապահական հաշվառում և հարկում» մասնագիտության մագիստրատուրայի առաջին և երկրորդ կուրսերի ուսանողներ: Հանդիպման առանցքային հարցերն էին.

1. Որո՞նք են գործատուի կողմից բացահայտվող հաշվապահ շրջանավարտի մասնագիտական գիտելիք-

ների, կարողությունների և հմտությունների «թույլ օղակները»:

2. Ի՞նչ ճանապարհներով պետք է բուհը գործատուի հետ համագործակցի մասնագիտական կրթական ծրագիրը կազմելիս:
3. Ինչպե՞ս գործատուի հետ հաստատել հետադարձ կապ՝ պարզելու համար շրջանավարտի մասնագիտական որակները:
4. Ո՞րն է գործատու–բուհ համագործակցության արդյունավետ ուղին, որը երկուստեք շահավետ կլինի:
5. Որպես գործատու, արդյո՞ք ժամանակ ծախսում եք բուհի շրջանավարտին «աշխատանքային վիճակի» հասցնելու համար:

Բոլոր կողմերն էլ արձանագրեցին, որ հանդիպումը սպասված է և քննարկման անհրաժեշտությունը հասունացել էր: Գործատուների՝ որպես շահակիցների հետ այսպիսի բաց քննարկումներն անհրաժեշտ են հենց բուհերին, առաջին հերթին, կրթական ծրագրերի բարելավման համար: Կենտրոնի արտաքին շահակիցներից են գործարար համայնքը, շրջանավարտներն, ի դեպ, շրջանավարտներին արդեն կարելի է տեսնել գործատուի կարգավիճակում:

«ՀՈՒՄԿ» կրթական հիմնադրամը թողարկում է մի պրոդուկտ՝ «Հաշվապահական հաշվառում և հարկում» մասնագիտությամբ մագիստրոս-շրջանավարտ, վերջինիս գործատուի կողմից տրված գնահատականը շատ կարևոր է: Այսպիսի բաց քննարկում-հանդիպումները անհրաժեշտ են խնդիրների վերհանման, վերջիններիս լուծում տալու և բարելավման աշխատանքների շարունակական ընթացքի հա-

մար: Անհրաժեշտ է նաև միջազգային փորձին տեղյակ լինելը, համեմատություններ կատարելը, առաջավոր փորձի փոխանակումը և ներդրումը մեր կրթական հաստատություններում:

Ներկայումս բուհ–գործատու կապը շատ թույլ է, գրեթե բացակայում է, բուհը շրջանավարտին ուղարկում է գործատուի մոտ աշխատանքի, իսկ վերջինիս կողմից հաճախ հնչում է հետևյալը՝ «Դուք դասավանդում եք այն, ինչը մեզ պետք չէ»:

Նման հանդիպումները հնարավորություն են տալիս անմիջականորեն լսել գործատուի խոսքը շրջանավարտի «թույլ օղակների» վերաբերյալ, քանի որ, ի վերջո, շրջանավարտի որակի գնահատականը տալիս է հենց գործատուն:

Այսօր մեր բուհերի կրթական ծրագրերը կազմելիս հաշվի են առնում գործատուի պահանջները, ի վերջո, բուհերն աշխատում են ստանալ այն վերջնարդյունքը, որն ակնկալում է գործատուն: Սակայն հայաստանյան բուհերը, այսպես կոչված, կտրված են կյանքից, սա խնդիր է, բուհից աշխատաշուկա են մտնում ցածր գիտելիքներով շրջանավարտներ, ինչպես փաստում են որոշ գործատուներ, նրանց ստացած դիպլոմը պետք չէ աշխատաշուկայում:

Ուսանողի համար շատ կարևոր է, որ դասավանդող դասախոսը լինի պրակտիկ, որ ցանկացած հարցի շուրջ կարողանա ներկայացնել օրինակներ, բարդ, դասագրքային մտքերը ներկայացնի համառոտ և համեմատի պրակտիկայի հետ: Անշուշտ, չպետք է թերագնահատել ակադեմիական գիտելիքների նշանակությունը, պետք է դասավանդողը կարողանա գտնել, այսպես կոչված, «ոսկե միջինը»:

Սակայն, հաճախ բուհերի առջև դրված չափանիշները կրթության ոլորտի ներկայացուցիչներին, այսպես կոչված, «քառակուսու» մեջ են դնում, չափանիշներով հստակ ներկայացվում է, թե ինչ աստիճան կամ կոչում ունեցող մասնագետ պետք է լինի տվյալ առարկան դասավանդողը, պրոֆեսորադասախոսկան կազմում քանի տոկոսը պետք է լինեն այս կամ այն կոչում ունեցող մասնագետները, բայց հատկապես հաշվապահի մասնագիտության գծով ուսանողներին պետք են պրակտիկ, այսպես կոչված, «կյանքից եկած» մասնագետներ:

Երբեմն անտեսվում է այն հանգամանքը, որ կրթության վերանպատակը գործատուի համար կադրեր պատրաստելը չէ միայն, այլ նաև կարևոր է երիտասարդ սերնդի մեջ վերլուծական կարողություններով քննադատական մտածողության ձևավորումը և զարգացումը: Վերջիններիս ձևավորման համար ավելի շատ ջանք, եռանդ և աշխատանք է անհրաժեշտ, քան գործնական գիտելիքների ձեռքբերման ժամանակ, որոնք կարելի է համեմատաբար ավելի կարճ ժամանակահատվածում ստանալ: Արևմտյան կրթական համակարգում ուսանողը դեռևս առաջին կուրսից մտածում է իր պրակտիկայի մասին:

Ցավալիորեն պետք է արձանագրենք, որ ՀՀ բուհական համակարգում դեռևս բացակայում է ուղիղ կապ բուհի և գործատուի միջև: Բայց արդյո՞ք կա ուղիղ կապի անհրաժեշտությունը: Ուսանողին, առաջին հերթին, անհրաժեշտ է շատ լավ գիտելիք: Այնուհետև և՛ բուհը, և՛ գործատուն պետք է նայեն, թե ուր է տանում կյանքը, անընդհատ մտածեն, թե ինչ անեն, որ նոր տեխնոլոգիաներն ազդեն երկու օղակների աշխատանքի վրա: Չմոռանանք, որ բուհն առաջնային տալիս է

գիտելիք, հետո գալիս են երեք կարևորագույն փուլեր՝ փորձառություն, հմտություն և կարողություն, վերջիններս կարող են ավելանալ ու լրացվել գործատուի մոտ:

Հավելենք նաև, որ գործատուն պետք է պատրաստ լինի սովորեցնել, քանի որ շատերի կարծիքով ավելի հեշտ է սկզբից մասնագետ դարձնել, քան հետո փոխել, աշխատանքի ընդունվողը պետք է ընդհանուր գրագիտություն ունենա, անպայմանորեն ակադեմիական կրթություն ստացած լինի, դա շատ կարևոր է, հետագայում նա կաճի որպես մասնագետ: Կարևոր է աշխատանքային գործունեության ընթացքում տարբեր դասընթացների և վերապատրաստումների մասնակցությունը. դա առավել արդյունավետ ուսուցման ձև է: Ի վերջո, ուսանողը պետք է բուհից գիտելիք տանի, իսկ գործատուն նրան պետք է կարողանա տալ նորը, պրակտիկը:

«ՀՈՒՄԿ» ԿՀ-ի ուսանողների առանձնահատկություններից նշենք հետևյալը. կենտրոնի ուսանողները պատրաստակամ են սովորել, նրանք լավ հիմքեր են ունենում, գիտելիքների բազայով են ներկայանում աշխատաշուկա:

«ՀՈՒՄԿ» ԿՀ-ի կողմից կազմակերպված հանդիպում-քննարկման ավարտին գործատուները պատրաստակամություն հայտնեցին համագործակցել բուհերի հետ, սակայն անհրաժեշտ համարեցի գործընթացին մասնակից դարձնել առավել մեծ թվով ամենատարբեր ոլորտների ներկայացուցիչների, մի քանի ներկայացուցիչով հնարավոր չէ իրականացնել դա, յուրաքանչյուրը պետք է իր կարծիքն ասի, թե ինչ հումք է ուզում:

Բուհը պետք է շահագրգիռ լինի համալսարան-գործատու հետադարձ կապի համար, պետք է կամուրջ կառուցել,

իսկ կամուրջ կարող են հենց իրենք՝ ուսանողները կառուցել, ուլքեր, աշխատավայրում հասկանալով, թե ինչ բացթողումներ են ունեցել, կարող են ներկայացնել բուհին, վերջինս էլ դրանք բարելավելու ուղղությամբ աշխատանքներ կտանի:

Ըստ ուսանողների, այս մեծ խնդիրը պետք է առաջին հերթին պետական բուհերի ուշադրության առանցքում լինի, «ՀՈՒՄԿ» կրթական հիմնադրամն առաջիններից է հանդես գալիս նման նախաձեռնությամբ: Շատ արդյունավետ գործիք է նաև «Բաց դաս–քննարկումներն», որոնք մեծացնում են ուսանողների հետաքրքրությունը մասնագիտության նկատմամբ և հնարավորություն ընձեռում շփվել ոլորտի լավագույն մասնագետների հետ: Ինչպես միշտ առանցքային խընդիր է մնում «իրական ուսումնական պրակտիկան», քանի որ հիմնականում դա կրում է ձևական բնույթ:

ԱՄՓՈՓՈՒՄ

Բուհ–գործատու համագործակցության խնդիրը բոլոր ժամանակներում էլ արդիական է, լուծման ճանապարհները բազմազան են և երկուստեք հետևողական ու շարունակական աշխատանք են պահանջում: Ընդհանրացնելով մեր կողմից կատարված ուսումնասիրությունը, խնդրի վերաբերյալ կառաջարկենք հետևյալ առանցքային կետերը.

Առաջին՝ գործատուն նախ ինքը պետք է իմանա, թե իրեն ինչ է պետք, որ կարողանա հենց դա էլ պահանջել բուհից:

Երկրորդ՝ գործատուն շրջանավարտին պետք է աշխատանքի ընդունի որոշակի գիտելիքների համար, նա պատ-

րաստի կադր չէ, իրենք պետք է նրանից ստանան մասնագետ, բուհը չի նախատեսում պատրաստի կադր տալ գործատուին:

Երրորդ՝ բուհ–գործատու համագործակցության մոտիվացիան առայժմ բացակայում է, եթե բուհը գործատուից ժամանակ առ ժամանակ ազդակներ ստանա, անպայմանորեն կբարելավի իր աշխատանքները:

Չորրորդ՝ երբեք չպետք է նվազեցնել ակադեմիական գիտելիքների կարևորությունը: Դրանք անպայմանորեն զուգակցվելու են պրակտիկ գործունեության հետ, լրացվելու են ամենաբազմազան ոլորտների ներկայացուցիչների հանդիպումներով, փորձի ձեռքբերմամբ և աշխատանքային պրակտիկ հմտությունների ձևավորմամբ:

Ani Arakelyan

‘International Accountancy Training Centre’,
Head of Quality Assurance Centre

PROBLEMS OF COOPERATION HIGHER EDUCATION INSTITUTION-EMPLOYER WITHIN ACADEMIC PROGRAM OF ACCOUNTANTS

Keywords – *labor market, education service market, ensuring the quality of vocational education, continuous cooperation, accountant graduate*

Solutions to the problems of cooperation within the framework of the university–employer are relevant at all times and require constant attention from both sides. Studies show, that not only the university, but also the employer are responsible for the quality assurance of training of accountants. Here success is happen in

cases, when the employer, for his part, makes amendments in the curriculum and offers his own requirements for the quality of the final results to education of accountants. However, on the other hand, the university should not reduce the importance of knowledge and try to make effective transformation of obtaining knowledge into professional skills for graduates-accountants.

Ани Аракелян

‘Международный Центр по Обучению Бухгалтерии’,
Руководитель Центра обеспечения качества

ПРОБЛЕМЫ СОТРУДНИЧЕСТВА ВУЗ- РАБОТОДАТЕЛЬ В УЧЕБНОМ ПРОГРАММЕ ПОДГОТОВКИ БУХГАЛТЕРОВ

Ключевые слова – рынок труда, рынок обслуживания образования, обеспечение качества профессионального образования, непрерывное сотрудничество, бухгалтер выпускник

Решения проблем сотрудничества в рамках вуз работодатель имеют актуальность во все времена и требуют постоянное внимание с двух сторон. Исследования показывают, что за качество подготовки бухгалтеров специалистов отвечает не только вуз, но и работодатель. Здесь намечается успех в тех случаях, когда работодатель со своей стороны сделает поправки в учебном программе и предлагает свои требования по качеству конечных результатов образования бухгалтеров. Однако, со своей стороны, вуз не должен снижать значимость знаний и их генерации в профессиональные новики выпускников-бухгалтеров.

Ներկայացվել է՝ 31.03.2019 թ.

Հնդուկվել է և ցարրուրյալի՝ 19.04.2019 թ.

Զարմիկ Մելիքյան

Հայաստանի ազգային ագրարային համալսարան, ասպիրանտ

ՄՆՆԴԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

Հիմնաբառեր – ագրոպարենային համակարգ, սննդարդյունաբերություն, ներդրումային միջավայր, ներդրումների ճյուղային բաշխվածություն


Սննդարդյունաբերությունը հանդիսանում է մարդկային կենսաապահովման առաջնային ոլորտ, և, այս առումով, սննդամթերքի արտադրության զարգացման հիմնախնդիրները մշտապես քննարկվել են ոչ միայն տեսական և գործնական հետաքրքրությունների շրջանակում, այլև թիրախավորվել են կառավարության ռազմավարական ծրագրերում: Այսպես, դեռևս 2011 թվականի ՀՀ Կառավարության N 49 արձանագրային որոշմամբ հաստատված Հայաստանի արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությամբ ՀՀ Կառավարությունը հայտարարեց «նոր արդյունաբերական քաղաքականության» իրականացման մասին: Արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության երկարաժամկետ նպատակը տնտեսական աճի շարժիչ ոլորտների ձևավորումն է՝ ի հաշիվ ներկայումս արտահանման ներուժ ունեցող ոլորտների զարգացման: Այս առումով, արդյունաբերական քաղաքականության ուղղակի թիրախը վերամշակող արդյունաբերության ճյուղերի և հա-

մալիքների զարգացումն էր:²⁷


Հատկանաշական է, որ վերոնշյալ ռազմավարության մեկնարկային փուլում վերամշակող արդյունաբերության աղամանդագործության, ոսկեգործության ենթաճյուղերն զուգահեռ, որպես զարգացման գերակա ոլորտներ, թիրախավորվեցին սննդարդյունաբերության, կոնյակագործության, գինեգործության, պահածոների, հանքային ջրերի և հյութերի ուղղությունները: Մակայն, դրա հետ մեկտեղ, ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ դեռևս վերջին տարիներին ՀՀ-ում արտադրող սննդամթերքի արժեքային կտրուկ աճ չի արձանագրվում, այն դեպքում, որ նման միտում նկատելի է ծխախոտագործության ոլորտում (տե՛ս գծապատկեր 1.):

Ավելին, սննդամթերքի արտադրության տեսակարար կշիռը ՀՀ արդյունաբերական արտադրանքի կառուցվածքում նվազման միտում է արձանագրում (տե՛ս գծապատկեր 2), որը պայմանավորված է մի շարք պատճառներով: Իսկ դրանց մեջ առավելապես ընդգծվում է բարենպաստ ներդրումային միջավայրի բացակայությունը, որը հարավորություն չի ընձեռում ՀՀ-ում ոչ միայն արդյունավետ փոխկապակցելու գյուղատնտեսության և սննդի վերամշակման ոլորտները, այլև ներգարավվելու տեղական և օտարերկրյա ներդրումներ:

²⁷ ՀՀ 2014-2025 թթ. Հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիր, էջ 56:



Գծապատկեր 1. Մնդամթերքի արտադրության դինամիկան ՀՀ-ում (մլն դրամ)²⁸




Գծապատկեր 2. Մնդամթերքի արտադրության տեսակարար կշիռը ՀՀ արդյունաբերական արտադրանքի կառուցվածքում²⁹

²⁸ ՀՀ ԱՎԾ, Տարեգիրք, 2018, էջ 263:

²⁹ ՀՀ ԱՎԾ, Տարեգիրք, 2018, էջ 270:

Հատկանշական է, որ կառավարության ռազմավարական ծրագրում կարևորվում է գյուղատնտեսական մթերքները վերամշակող և էկոլոգիապես մաքուր արդյունաբերական փոքր ձեռնարկությունների հիմնումը, մասնավորապես, գյուղմթերքները վերամշակող կամ դրանից ստացվող սննդամթերքի փաթեթավորման, սառեցման և պահեստավորման ոլորտներում: ³⁰ Սակայն, վիճակագրությունը ցույց է տալիս, որ վերջին տարիներին այս ոլորտայամբ հանրապետությունում կտրուկ փոփոխություններ չեն նկատվում (տե՛ս գծապատկեր 3):



Գծապատկեր 3. Մշակող արդյունաբերության տնտեսվարող սուբյեկտների քանակի դինամիկան³¹

Հայաստանի Հանրապետությունում թողարկվող հայ-

³⁰ ՀՀ 2014-2025 թթ. Հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիր, էջ 71:

³¹ ԱՎԾ, Տարեգիրք, 2018, էջ 273:

րենական սննդամթերքի տեսականու ուսումնասիրությունը ակնհայտ առավելություն է բացահայտում որոշ ապրանքների համար: Օրինակ, կաթնամթերքի արտադրությունը, հատկապես, պանրի արտադրությունը, և արտահանումը պաշտոնապես դիտարկվում է նվազագույն սպառողական զանրյուղի տեսականի, նաև կարևորվում է պարենային անվտանգության հիմնախնդրի լուծման տեսանկյունից:³² Ավելին, վերջին տարիներին սննդամթերքի որոշ տեսականու արտադրության գծով նկատվում են դրական տեղաշարժեր (տե՛ս աղյուսակ 1): Մակայն, դրա հետ մեկտեղ, գյուղատնտեսական մթերքների ապրանքայնության մակարդակը վերջին տարիներին դեռևս տատանվում է 56%-ի սահմաններում: Ստեղծված իրավիճակը հետևանք է նաև գյուղատնտեսական մթերքների իրացնող կառույցների անարդյունավետ գործունեության, կամ անհրաժեշտ քանակի բացակայության:³³

Աղյուսակ 1

Սննդամթերքի արտադրության դինամիկան ՀՀ-ում³⁴

Սննդամթերք	2013	2014	2015	2016	2017
Երշիկեղեն, տ	4 030	5 240	5 057	5 792	8 116
Պանիր, 1 000 տ	17.4	18.3	18.6	22.3	19.2
Կաթնաշոռ, տ	1 011	922	989	955	868
Մածուն, տ	3 552	4 721	6 172	6 098	6 269

³² ՀՀ գյուղի և գյուղատնտեսության 2015-20125 թթ Կայուն զարգացման ռազմավարություն, էջ 87


³³ ՀՀ 2014-2025թթ. Հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիր, 64:

³⁴ ՀՀ ԱՎԾ, Տարեգիրք, 2018, էջ 286

Պաղպաղակ, 1000 լ	4 265	6 345	9 637	9 009	9 699
Պահածոներ, տ	10 325	11 729	11 275	14 506	19 141
Հաց, 1000 տ	295	290	284	279	272
Հրուշակեղեն, տ	16 593	18 243	16 277	16 215	18 925
Մակարոնեղեն, տ	4 094	4 468	2 824	3 264	3 278
Օղի և լիկյոր, 1000 լ	9 941	9 504	9 515	8 435	7 316
Կոնյակ, 1000 լ	20 453	18 705	16 948	21 542	30 040
Գարեջուր, 1000 լ	19 848	23 717	20 687	18 538	20 454
Ոչ ակոհոլային Խմիչքներ, 1000 լ	63 400	80 150	81 719	77 502	97 817

Այս առումով, սննդամթերքի առաջարկի կառուցվածքում ներմուծման ծավալների մեծ տեսակարար կշռի դեպքում ՀՀ կառավարությունը իր ռազմավարական ծրագրում կարևորում է ներմուծմանը տեղական արտադրությամբ փոխարինելու խնդրի լուծումը: Որպես ռազմավարական նպատակ, ընդգծվում է որոշակիորեն հաստատուն պահանջարկի դեպքում ներմուծման փոխարինումը տեղական արտադրանքի արտադրության ծավալների ավելացման հաշվին՝ վերջինիս մրցունակության բարձրացման միջոցով: Այդ նպատակով նախատեսվում է բուսաբուծության, անասնապահության, գյուղատնտեսական մթերքների վերամշակման բնագավառում՝ առաջավոր տեխնոլոգիաների ներդրման ուղղությամբ մատչելի պայմաններով նպատակային վարկերի

ծավալների ընդլայնում և ներդրումների համար բարենր-
պաստ պայմանների ձևավորում:³⁵




Գծապատկեր 4. Մշակող արդյունաբերության կառուցվածքը ՀՀ-ում³⁶

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ մշակող արդյունաբերության կառուցվածքում սննդարդյունաբերությունը գրավում է ամենամեծ տեսկարար կշիռը՝ շուրջ 29% (տե՛ս գծապատկեր 4): Այնուամենայնիվ, ՀՀ-ում վերջին տարիներին իրականացված վերամշակող արդյունաբերությունում օտարերկրյա ներդրումների 31% չափաբաժինը չի կարող ներդաշնակ համարվել գյուղատնտեսության ոլորտում 6% չափաբաժնի հետ (տե՛ս գծապատկեր 5), քանի որ գյուղատնտեսությունը համարվում է սննդարդյունաբերության առաջնային շղթան և, սննդարդյունաբերությանը զուգահեռ, զարգացման համաչափություն է պահանջում:

³⁵ ՀՀ գյուղի և գյուղատնտեսության 2015-20125 թթ Կայուն զարգացման ռազմավարություն, էջ 87:

³⁶ ՀՀ ԱՎԾ, Տարեգիրք, 2018, էջ 297:

Հետևաբար, ելնելով ոլորտի առանձնահատկությունից, ներդրումային ռազմավարությունը անհրաժեշտ է ձևավորել այնպես, որ ֆինանսական ռեսուրսները համաչափ բաշխվեն ագրոպարենային համակարգում, դրանով իսկ սընընդարդունաբերության և գյուղատնտեսության համար ապահովելով կայուն և համաչափ զարգացման պայմաններ: Ընդ որում, Հայաստանում ներդրումային ոլորտում պետական քաղաքականության հիմնական խնդիրներն են հանդիսանում ներդրումային միջավայրի բարելավումը, օրենսդրական դաշտի կատարելագործումը և ՀՀ տնտեսության մեջ ներդրումների, այդ թվում օտարերկրյա, ուղղակի ներդրումների խթանումը,³⁷ որոնք, մեր կարծիքով, դեռևս չեն թիրախավորվում ներդրումային ռեսուրսների բաշխման ներդաշնակեցմանը:




Գծապատկեր 5. ՕՈՒՆ-ները՝ ըստ ՀՀ տնտեսության ոլորտների³⁸:

³⁷ <http://www.mineconomy.am/hy/96>

³⁸ ՀՀ ԱՎԾ պաշտոնական կայք, // www.armstat.am

Ինչ վերաբերում է հանրային ֆինանսական աղբյուրներով ներդրումների ֆինանսավորմանը, ապա պետք է արձանագրել, որ այս ոլորտում ՀՀ պետական բյուջեի մասնակցությունը ընդամենը կազմում է 4%, վարկային ռեսուրսներով ներդրումային ծրագրերի ֆինանսավորման բաժնեմասը՝ 19%, և հիմնականում գերակշռում է մասնավոր ֆինանսավորմամբ ներդրումային ծրագրերի իրագործումը՝ 68% (տե՛ս գծապատկեր 1.1.6): Բնականաբար, նման իրավիճակ է արձանագրվում նաև ՀՀ սննդարդյունաբերություն ոլորտում, որն էլ արդիական է դարձնում այդ ենթաճյուղում ներդրումային բարենպաստ միջավայրի ձևավորումը այնպես, որ այն գրավիչ դառնա մասնավոր օտարերկրյա և տեղացի ներդրողների համար և առավելապես հիմնվի ոչ թե հանրային, այլ կորպորատիվ ֆինանսավորման աղբյուրների վրա:



Գծապատկեր 6. Ներդրումների ֆինանսավորման կառուցվածքը ՀՀ-ում (%)³⁹

³⁹ Հաշվետվություն, 2017 թ. ՀՀ-ում իրականացված ներդրումային ծրագրերի կատարողականի վերաբերյալ, http://www.gov.am/u_files/file/documents/INVESTMENTS_28_02.pdf

ԱՄՓՈՓՈՒՄ

ՀՀ-ում սննդարդյունաբերության ռազմավարական զարգացման համատեքստում, մեր կարծիքով, որպես ներդրումային քաղաքականության բարելավման ուղիներ կարող են հանդես գալ.

Առաջին՝ ներդրումային ռեսուրսների ներդաշնակ բաշխման հեռանկարային մոտեցումների կիրառումը սննդարդյունաբերության արտադրական համապարփակ պարբերաշրջանում՝ «գյուղատնտեսություն-մթերում-արտադրություն-սննդամթերքի իրացում» շղթայով:

Երկրորդ՝ ելնելով պարենային անվտանգության ապահովման նկատառումներից, ներդրումներին ուղղված ֆինանսական ռեսուրսների կառուցվածքում մասնավոր միջոցներին զուգընթաց՝ հանրային ֆինանսական ռեսուրսների բաժնեմասի ավելացմամբ ռազմավարական ուղու ընտրությունը, որով կարձանագրվի պետության մասնակցության ակտիվացում սննդարդյունաբերության ներդրումային ծրագրերում:

Երրորդ՝ ապահովել առավելագույն արդյունավետություն, սննդարդյունաբերության ոլորտում ներդրումների կենսացիկլի տարբեր փուլերում հնարավոր խոչընդոտների ռիսկերի մեղմման ուղղությամբ և մշակել ներդրումային հատուկ քաղաքականություն, ուղղված սննդարդյունաբերության ոլորտի ռազմավարական զարգացմանը:

Zarmik Melikyan

Armenian National Agrarian University, Ph.D. student

TRENDS OF STRATEGIC DEVELOPMENT OF FOOD INDUSTRY AND INVESTMENTS IN RA

***Keywords** –agro-industrial system, food industry, investment environment, sectoral investment distribution*

In the context of the strategic development of the food industry of Armenia, ways of improving the investment policy are proposed. Firstly, it seems necessary to establish a perspective harmonization of the distribution of investment resources in the food industry chain “agriculture - food supply - processing - realization”. Secondly, on the basis of the country's food security, it is considered important to intensify the financing of investments from the state budget in the field of food industry. Finally, it becomes relevant to present an investment policy in the food industry, given the overcoming of the possible risks of the entire production processing cycle in the near future.

Зармик Меликян

Армянский национальный аграрный университет, аспирант

ТЕНДЕНЦИ СТРАТЕГИЧЕСКОГО РАЗВИТИЯ ПИЩЕВОЙ ПРОМЫШЛЕННОСТИ И ВНЕДРЕНИЯ В РА

Ключевые слова – агропромышленная система, пищевая промышленность, инвестиционная среда, отраслевая распределения инвестиции

В контексте стратегического развития пищевой промышленности РА, предлагаются пути улучшения инвестиционной политики. Во первых, представляется необходимым становление перспективной гармонизации распределения инвестиционных ресурсов в цепочке пищевой промышленности «сельское хозяйство – поставки продуктов- обработка -реализация». Во вторых, исходя из продуктовой безопасности страны, считается важным активизации финансирования инвестиций из государственного бюджета в области пищевой промышленности. Наконец, становится актуальным представлять инвестиционной политики в области пищевой промышленности, учитывая преодоления возможных рисков всего производственного цикла обработки продуктов в ближайшем будущем.

Ներկայացվել է՝ 01.04.2019 թ.
Ընդունվել է և ցայգրույթան՝ 19.04.2019 թ.

Արմինե Մեծլույսյան
Հայաստանի ազգային ագրարային համալսարան, ասպիրանտ

**ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ
ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՈՒԿ
ՇՐՋԱՆԱԿԸ**

Հիմնաբառեր – կառավարչական հաշվառում, վերահսկողություն, որոշումների կայացում, ներքին հաշվետվություն

Գործարարության ոլորտում հաշվառման մեջ առանձնացվում են երկու հիմնական բաղկացուցիչներ՝ ֆինանսական և կառավարչական: Ներկայումս մեծ ուշադրություն է դարձվում կառավարչական հաշվառմանը, որի հիմնական նշանակությունն է կազմակերպության բոլոր մակարդակների կառավարիչներին և աշխատակիցներին տեղեկատվության տրամադրումը, որն օգնում է նրանց կայացնել հիմնավորված որոշումներ և հասնել արտադրողականության ու իրականացվող գործողությունների արդյունավետության բարձրացմանը:

Կառավարիչները հիմնականում ընտրում են իրենց գործողությունների այս կամ այն տարբերակը՝ առաջնորդվելով հաշվապահական հաշվառման տեղեկատվությամբ: Այդ տեղեկատվությունը մեծամասամբ որոշում է նաև բիզնեսում նրանց ընդհանուր վարքագիծը՝ մոտիվացնելով կատարելու մի գործողությունը և հետ կանգնելով մեկ այլ գործողությունից: Եվ, այդ առումով, հաշվապահության ուսումնասիրությունը համարվում է բարձրագույն մակարդակի կառավարիչների պատրաստման կարևորագույն բաղկացուցիչը:

Հայտնի է, որ տարբեր երկրներում խոշոր կազմակերպությունների շատ կառավարիչներ բիզնեսում իրենց կարիերան սկսել են որպես հաշվապահներ:

«Կառավարչական հաշվառում» տերմինն առաջացել է 20-րդ դարի 40-ական թվականների վերջին անգլիական «management accounting» բառակապակցությունից, որը բառացիորեն թարգմանվում է որպես «կառավարման հաշվառում»:

Դեռևս 1950 թ. Անգլո-ամերիկյան խորհրդի հաշվետվական փաստաթղթերում տրվել էր կառավարչական հաշվառման սահմանումը, որը, հետագայում, լայնորեն կիրառվել է գիտնականների և հետազոտողների կողմից: Համաձայն այս տարբերակի, «կառավարչական հաշվառումը ներկայացնում է հաշվապահական տեղեկատվությունն այնպես, որպեսզի հեշտացնի կառավարման գործընթացը՝ ներառյալ օպերատիվ կառավարումն ու ռազմավարության ձևավորումը»⁴⁰:

Կառավարչական հաշվառման գծով Որակավորված հաշվապահների ինստիտուտի մասնագետները (ICMA, Ավստրալիա) նշում են. «Կառավարչական հաշվառման գծով մասնագետը ֆինանսական և այլ հաշվետվությունների նախապատրաստման և ներկայացման ժամանակ կիրառում է իր մասնագիտական գիտելիքներն ու հմտություններն այնպես, որպեսզի ապահովի ղեկավարությանը գործունեության պլանավորման և վերահսկողության համար անհրաժեշտ տեղեկատվությամբ»⁴¹:

⁴⁰ Thukaram M. E. Cost and Management Accounting.-New Age International (P), Ltd, 2004.-563 p.


⁴¹ www.cmawebeline.org

Կառավարչական հաշվառման էության նկարագրմամբ միակարծիք չեն նաև Ռուսաստանում: Մի խումբ գիտնականներ (Մ. Վարխուշինա և Ա. Շերեմետ) գտնում են, որ կառավարչական հաշվառումն իրենից ներկայացնում է հաշվապահական հաշվառման մի տեսակ, որի տեղեկատվությունն անհրաժեշտ է արդյունավետ կառավարչական որոշումների կայացման համար⁴²: Կարելի է չհամաձայնել այս տնտեսագետների կարծիքի հետ, որովհետև կառավարչական հաշվառումը չի կարող լինել հաշվապահական հաշվառման մի մասը կամ տեսակը: Կառավարչական հաշվառումն ուղղված է, առաջին հերթին, կառավարչական որոշումների ընդունման համար անհրաժեշտ տեղեկատվության տրամադրմանը և, ըստ էության, իր մեջ ընդգրկում է վարչական բաղադրիչի զգալի մաս: Որպես կառավարման գործառույթ՝ կառավարչական հաշվառումն ունի երկակի բնույթ. մի կողմից այն կառավարման յուրաքանչյուր գործառույթի տարր է (մոտիվացիայի, կազմակերպման, պլանավորման, վերահսկողության), իսկ մյուս կողմից այն կառավարման ինքնուրույն գործառույթ է: Միաժամանակ, կառավարչական հաշվառումը հանդիսանում է հաշվառման համակարգի տարրերից մեկը: Հետևաբար, կառավարչական հաշվառումը հանդես է գալիս որպես կառավարման գործընթացի և հաշվառման համակարգի սիմբիոզ:⁴³

⁴²Вахрушина М.А. Бухгалтерский управленческий учет : учеб. для студентов вузов, обучающихся по экономическим специальностям. — 6-е изд., испр.

⁴³ Дарья Юрьевна Рожкова, “Особенности управленческого учета предпринимательской активности, // Журнал «Вестник профессиональных бухгалтеров» / Архив журнала / 2015 год / № 6 /.

Կառավարչական հաշվառումը կազմակերպության տեղեկատվական համակարգ է, որի նպատակն է որոշումների կայացման և գործունեության պլանավորման, ընթացիկ գործունեության կառավարման և վերահսկողության, ծրագրերի կատարման և աշխատակազմի խթանման գործում կազմակերպության կառավարման օղակներին տեղեկատվության ապահովումը⁴⁴: Այստեղ միայն կարող ենք ավելացնել, որ այդ տեղեկատվությունը կարող է լինել ինչպես ֆինանսական, այնպես էլ ոչ ֆինանսական, քանի որ երկուսն էլ անհրաժեշտ և օգտակար են որոշումների կայացման համար: Տե՛ս գծապատկեր 1.:



⁴⁴ Ա. Հակոբյան, «Արտադրական ծախսումների կառավարչական հաշվառումը ՀՀ սննդի արդյունաբերության կազմակերպությունների օրինակով», ատենախոսություն, Երևան 2001թ.:

Գծապատկեր 1. Կառավարչական հաշվառման տեղեկատվական հոսքերի առնչությունը որոշումների կայացման գործընթացի հետ⁴⁵

Հիմք ընդունելով մասնագիտական գրականության մեջ տեղ գտած մեկնաբանումները՝ մեր կողմից առաջարկվել է կառավարչական հաշվառման հետևյալ սահմանումը. «կառավարչական հաշվառումը տեղեկատվական համակարգ է, որի միջոցով կազմակերպության կառավարող անձնակազմին է ներկայացվում ֆինանսական և ոչ ֆինանսական տեղեկատվություն՝ կազմակերպության ռազմավարական և մարտավարական նպատակների մասով օպտիմալ կառավարչական որոշումներ կայացնելու համար»:

Կազմակերպության հաշվառման համակարգը բաղկացած է հետևյալ տարրերից՝ հաշվապահական, վիճակագրական, օպերատիվ և հարկային հաշվառումներից, որոնք հանդիսանում են տեղեկատվական աղբյուր՝ ստացված տարբեր տեսակի հաշվառումներից և անհրաժեշտ օգտագործողների համար: Տնտեսության հաշվառման ողջ համակարգը մինչև վերջերս ուղղված էր արտաքին օգտագործողների համար տեղեկատվության հավաքագրմանը (հիմնականում ֆիսկալ մարմինների համար), իսկ սեփականատերերը կազմակերպության գործունեության մասին տեղեկատվություն էին ստանում պարբերաբար, եռամսյակը մեկ անգամ, իսկ, երբեմն էլ, տարին մեկ անգամ՝ շահաբաժինների ստացման ժամանակ: Ղեկավարությունը կազմակերպության գործունե-


⁴⁵ Կազմել է հեղինակը մասնագիտական գրականության մեջ տեղ գտած մեկնաբանումների հիման վրա:

ության մասին ստանում էր ընդհանրական տեղեկություններ՝ չունենալով ամբողջական և բազմակողմանի տեղեկատվություն տարբեր ստորաբաժանումների գործունեության մասին: Եվ, գլխավորը, տեղեկատվությունը հասնում էր բավականին ուշ, տնտեսական գործառնությունների տեղի ունենալուց հետո, երբ փոխել իրավիճակն այլևս հնարավոր չէր: Կառավարչական հաշվառման առաջացումը թույլ է տվել կազմակերպության ղեկավարներին և սեփականատերերին վերահսկել տնտեսական գործունեության ամբողջ գործընթացը, ժամանակին գտնել տնտեսավարման թույլ օղակները և ընդունել արդյունավետ կառավարչական որոշումներ:

Այսպիսով, կառավարչական հաշվառման գծով մասնագետները չեն կատարում տնտեսական գործունեության իրականացված դեպքերի պարզապես գրանցում, այլ խմբավորում, մշակում և վերլուծում են տեղեկատվությունն այնպես, որպեսզի ազդեն ընկերության ապագա արդյունավետ զարգացման վրա:

Ժամանակի ընթացքում կազմակերպության կառավարման գործընթացը և կառավարչական հաշվառումը նույնպես ենթարկվել է էական փոփոխության՝ և՛ առաջադրված խնդիրների, և՛ դրանց լուծման մեթոդների տեսանկյունից: Եթե սկզբնական շրջանում արտադրական հաշվառումն էր հանդիսանում կառավարչական հաշվառման հիմնական նպատակը, ապա այժմ դրա տեղեկատվությունը պարզապես անհրաժեշտ է մենեջերներին օպերատիվ արտադրական որոշումներ կայացնելու համար: Հետևաբար, կառավարչական հաշվառումն իր մեջ ներառում է նաև արտադրական հաշվառումը: Հաշվառման տեսակների միջև կապը ներկա-

յացվում է գծապատկեր 2-ում: Ինչպես երևում է նաև գծապատկերից, արտադրական հաշվառումը հիմք է հանդիսացել կառավարչական հաշվառման համար: Շուկայական հարաբերությունների զարգացման ընթացքում դրան ավելացել են բյուջետավորումը, կազմակերպության և դրա ստորաբաժանումների գործունեության կառավարչական վերահսկողությունն ու վերլուծությունը, օպերատիվ կառավարչական որոշումների ընդունումը, ինչպես նաև ներքին հաշվետվությունների կազմումը:



- Ա – արտադրական հաշվառում
- Բ – ֆինանսական հաշվառում
- Գ – հարկային հաշվառում
- Դ- կառավարչական հաշվառում

Գծապատկեր 2. Հաշվառման տեսակների միջև կապը⁴⁶

⁴⁶Бахрушина М.А. Бухгалтерский управленческий учет: Учебник для вузов. 2-е изд., доп. и пер. — М.: ИКФ Омега-Л; Высш. шк., 2002. — 528 с., ст. 25.

Կառավարչական հաշվառումը հատվում է նաև ֆինանսականին՝ ծախսերի ու ծախսումների հաշվառման մասով, տարբերությունը միայն ծախսերի հաշվառման մեթոդն է: Առաջին դեպքում խոսքն անալիտիկ հաշվառման մասին է, երկրորդ դեպքում՝ սինթետիկ:

Այսօր, ընդհանուր առմամբ, ընդունված է հարկային հաշվառման առանձնացումն որպես ինքնուրույն ուղղություն: Մակայն ֆինանսական և կառավարչական հաշվառման տեղեկատվությունը կարող է օգտագործվել հարկային հաշվարկների ժամանակ:

Կառավարչական հաշվառումը սովորաբար անվանում են ներքին հաշվառում, քանի որ այն տեղեկատվության տրամադրումն է ներքին օգտագործողներին՝ կազմակերպության կառավարող անձնակազմին, որի հիման վրա նրանք կայացնում են ավելի հիմնավորված որոշումներ և բարձրացնում են ընթացիկ գործընթացների արդյունավետությունն ու արտադրողականությունը: Իսկ ֆինանսական հաշվառումն, առաջին հերթին, նախատեսված է արտաքին օգտագործողներին տեղեկատվություն տրամադրելու համար, այսինքն՝ այն անձանց, ովքեր չեն մտնում կազմակերպության աշխատակիցների թվի մեջ:

Կառավարչական հաշվառումը նախատեսված է այնպիսի տեղեկատվության տրամադրման համար, որն անհրաժեշտ է կառավարիչներին որոշումների կայացման, պլանավորման, վերահսկողության իրականացման և գործունեության ցուցանիշների գնահատման համար: Ըստ այդմ էլ, կարե-

լի է առանձնացնել կառավարչական հաշվառման հետևյալ երեք նպատակները.⁴⁷

- բոլոր ծախսերի դասակարգումն իրացված արտադրանքի և ապրանքանյութական պաշարների միջև, որն անհրաժեշտ է ներքին և արտաքին հաշվետվությունների պահանջների բավարարման համար,
- համապատասխան տեղեկատվության տրամադրումը կառավարիչներին, որն օգնում է նրանց կայացնել ավելի հիմնավորված որոշումներ,
- տեղեկատվության տրամադրումը, որն անհրաժեշտ է պլանավորման, վերահսկողության և կազմակերպության գործունեության ցուցանիշների գնահատման համար:

Կառավարչական հաշվառման նպատակներից ու խընդիրներից ելնելով՝ որոշվում են դրա ֆունկցիաները, որոնցից մեկը պլանավորումն է: Եթե հաշվառման համակարգը վերահսկում է կազմակերպության ֆինանսական և տնտեսական գործունեությունն ըստ փաստերի, այսինքն, երբ դեպքն արդեն տեղի է ունեցել և դրա վրա ազդել արդեն հնարավոր չէ, ապա կառավարչական հաշվառման համակարգը հիմնված է անմիջականորեն պլանների կազմման վրա: Պլանավորման գործընթացը թույլ է տալիս կանխատեսել իրավիճակը և բացահայտել ընթացիկ աշխատանքի սխալներն ու թերությունները, ինչպես նաև այն նպաստում է կազմակերպության գործունեության թույլ և ուժեղ կողմերի որոշմանը, որոնց շնորհիվ կարելի է օպտիմալացնել բիզնես գործընթաց-

⁴⁷Cost & Management Accounting: An Introduction, Fifth Edition, by Colin Drury, 2012.

ները, բարձրացնել կազմակերպության և նրա աշխատակիցների աշխատանքի արդյունավետությունը, նվազեցնել ծախսերը և այլն:

Ընդգծենք նաև, որ կառավարչական հաշվառումը նախատեսում է ոչ միայն տեղեկատվության հավաքագրումը, այլ նաև մշակումն ու վերլուծությունը: Այդպիսով, վերլուծությունը, այդ թվում մաթեմատիկական մոդելավորումը, նպատակային կլինի նույնպես ներառել կառավարչական հաշվառման կազմի մեջ,⁴⁸ արդյունքում այն ավելի մոտիկ կլինի հաշվետվությունների տվյալներին և ավելի արագ կարձագանքի հաշվառման մեթոդոլոգիական փոփոխություններին:

Այսպիսով, կառավարչական հաշվառման հիմնական առավելությունը, որ տրամադրվում է ղեկավարներին, հնարավորություն է կանխատեսելու իրականացվող բիզնես գործողությունների հետևանքները: Վերլուծության և պլանավորման շնորհիվ կառավարչական հաշվառումը կանխարգելում է սխալներն ու լիկվիդացում որոշ ֆինանսական ռիսկերի հավանականությունը: Այն օգնում է լուծել կազմակերպության կառավարման ռազմավարական կարևոր խնդիրները, չէ որ արտադրական հաշվարկների ժամանակ կառավարչական հաշվառումը պետք է ուշադրություն դարձնի ընկերության գործունեության այն կողմերին, որոնք ցույց են տալիս ցուցանիշների աճի կամ էլ նվազման պատճառները, ինչպես նաև դրանց ավելացման կամ պակասեցման հնարավորությունները:

⁴⁸ Сидорова М. И. Методы математического моделирования в современном управленческом учете // Актуальные проблемы социально-экономического развития России. 2012. № 1. С. 16–22.

ԱՄՓՈՓՈՒՄ

Կառավարչական հաշվառման համակարգն, ի տարբերություն ֆինանսական հաշվառման, ունի որոշ առանձնահատկություններ: Առաջինը. այն կարող է վերլուծել կազմակերպության գործունեության ոչ միայն ընդհանուր շրջանակը, այլ նաև դրա առանձին ստորաբաժանումների գործողությունները (այսինքն՝ մասնակիից ընդհանուրին և հակառակը): Որպես կառավարչական հաշվառման օբյեկտ կարող է հանդես գալ առանձին կառավարչական խնդիր կամ ծրագիր: Հետևաբար, տվյալների ծավալը կառավարչական հաշվառման մեջ բավականին մեծ է: Երկրորդ՝ «ճկուն է» ներկայացված հաշվետվությունների ձևերի փոփոխման առումով, տրվյալ պահին արդիական բիզնես խնդիրներին համապատասխան կարողանում է փոփոխել հաշվետվությունների ձևերը: Եվ երրորդ՝ կառավարչական հաշվառումը մեծամասամբ առնչվում է այն տնտեսական գարծարքների հետ, որոնք վերաբերում են ապագա ժամանակահատվածին, և կարող է հաշվարկել ինչպես կանխատեսող եկամուտները, այնպես էլ վնասները՝ վերահսկելով թաքնված և չպլանավորած ռեզերվների առաջացումը:

Armine Mezhlumyan

Armenian National Agrarian University, PhD student

SPECIFIC TERMS OF MANAGERIAL ACCOUNTING FUNCTIONS

Keywords—*managarial accounting, control, decision making, internal reporting*

Managerial accounting with compared financial accounting, has its own specific functions. First, it provides reporting for analyzing business activities not only throughout the enterprise, but also for individual units, which represents a wide range of information. Secondly, it has a flexible reporting system, based on the characteristics of the economic activities of the business. Third, reporting aimed mainly at the future and the identification of reserves for improving the efficiency of the organization.

Армине Межлумян

Армянский национальный аграрный университет,

соискатель

СПЕЦИФИЧЕСКИЙ КРУГ ФУНКЦИИ УПРАВЛЕНЧВСКОГО УЧЕТА

Ключевые слова—*управленческий учет, контроль, принятие решений, внутренняя отчетность*

Управленческий учет имеет по сравнению финансового учета, имеет свои специфические функции. Во первых, оно дает отчетность для анализа хозяйственной деятельности не только по всему предприятию, но и по отдельным подразделениям, что представляет широкий круг информации. Во вторых, имеет гибкую систему представления отчетности, исходя из особенностей экономической деятельности бизнеса. В третьих, составляет отчетность, нацеленное в основном на будущее и выявление резервов повышения эффективности деятельности организации.

*Ներկայացվել է՝ 02.04.2019 թ.
Ընդունվել է սպառնություն՝ 19.04.2019 թ.*

Hamidreza Mahjoub

European Regional Educational Academy, Ph.D. Student

BLOCKCHAIN AND SMART CONTRACTS ABILITY TO REDEFINE BUSINESS PROCESSES

Introduction

Traditional management and business operations are relied on the strong trustable thirds parties that create trust for all participants of those operations. These operations have the range of small operations, such as trading a property or service, to big systems like companies, enterprises or even governmental programs. Big third parties like banks, notaries, intermediaries create trustable environments for the parties to trade and transact. Normally third

parties and such kind of management are central, have their costs, and are prone of corruption, mistake, or even penetration by hackers. Blockchain technology replaces central controls and intermediaries in business processes with a network of unlimited maintainers to create trust, security and clearance. At first step, which called blockchain version 1.0, this network can create supervision on exchange of goods, properties that will be exchanged on it. This step creates penetration proofing, fraud preventing, and secure, safe and correct environment of trading digital assets. The improvement of technology allows sharing tamper proof, permanent programs on the network, which can communicate with people, other programs and external factual events.

With this method, business processes and companies can be implemented on the blockchain. They will be done by codes, named smart contracts, which are shared all among the maintainers on the blockchain. The difference of smart contract and traditional computer program is that a computer program can be changed after creation, with the owner or every body that has the master key of the program. Smart contracts are safe to execute and nobody can change it after creation, even the creator of the program. They are also distributed, which means nobody can penetrate them and change or steal data from them. The purpose of this article is to show how these smart contracts can redefine some business processes and companies in the way that they are more trustable, efficient and with less cost than traditional versions. Especially in the process of supply chain, it introduces in more detail the steps to migrate from a traditional to a blockchain based supply chain management.

***Keywords**–blockchain, smart contracts, supply chain, performance indicators, GUEST methodology*

Having a blockchain means that we having a shared ledger that is maintained with many computers. Anyone can have access to this shared ledger with its account. This account will be protected with a combination of a public and private key. With this combination, all members of blockchain can be sure that the right person in the blockchain making request of change in its account on the ledger. Nobody can pretend another person account as his/her account, which means nobody can misuse someone else account. At the same time, nobody can illegally penetrate the ledger and make non-fair changes on the ledger.

Now the question is what data is on the ledger that everybody on this ledger interested to transact that with the others. The simplest data can be just numbers. Each number can be interpreted as a balance for someone. The system creates these numbers as the wage for the maintainer of the ledger that consume hardware and electricity to keep the ledger safe. Maintainers are called miners because they are like gold diggers that mine numbers electronically. People can use these numbers as their balance on their blockchain wallet. The acceptor, accept it as money and willing to exchange product/service with it, because he believes that others also accept these numbers from him as money.

Therefore, each account on blockchain has a balance, has an ID as public key and will be protect with a private key. This is the most

simple form of ledger on the blockchain which is version 1.0 blockchain. On the next version of blockchain, version 2.0, instead of having just balance as data on the blockchain, we can have program codes that will be executed with the miners. These codes, programs, applications and contracts are permanent and tamper proof which means after issuing, no one even the owner or writer of code, have the ability to change them.

There are two types of accounts in this version of blockchains. Normal type accounts that have, as in version 1.0, public key, private key and balance. Second type of accounts have balance and public key, but do not have any private key. Therefore, the code inside the account, itself, have the control of transferring balance to other accounts. Controlling balance is not the only thing that the code inside the account can do. It can also transfer messages to other accounts, update their status and to react to input messages. Smart contracts, as autonomous objects inside a network, can transact with each other, response to external events and do operations based on the situations on the network. Bigger and more complicated versions of smart contracts are named DAPP⁴⁹ and DAO⁵⁰ and are capable of implementing all the business processes and management of big companies.

When people do operation with these autonomous immutable permanent smart contracts, they do not need intermediaries and third parties to create trust. No body can change the logic of codes and all people can see, check and assess the “if then else” flow of

⁴⁹ Distributed applications, introduced first by Ethereum platform founder

⁵⁰ Decentralized autonomous organizations, introduced first by Ethereum platform founder

contracts and decide to whether to participate into contract or no. if they participate, thing happen exactly based on contract. A smart contract can accept input from other smart contracts, external events and normal accounts, which actually are people or smart properties. This gives huge flexibility to solve issues that even are very hard for traditional central systems, which need third parties. An example is simultaneous exchange of goods or services with the payment.

Combining these abilities with digitizing traditional assets and making them available on blockchain opens doors to realize industry 4.0⁵¹ automation trend. Objects having sensors and transact with the others based on contracts on blockchain and can exchange values with their private key, realize Internet of Things which again is another important part of Industry 4.0.


Simple payroll management system

In the simplest case, a payroll system needs a payroll manager to do paying job manually or via a computer program and bank system. The weak point here in manager personal desires, mistake, and penetration. Therefore, it will be great if we automate this this person's job and replace it with the use of smart contract as shown in figure 1. Here the smart contract is a code that accepts Ether⁵² via transactions to its account ID and will always split it equally among the predefined users that has been defined into the code.

⁵¹ Industry 4.0 is a name given to the current trend of automation and data exchange in manufacturing technologies. Wikipedia

⁵² The native token of Ethereum blockchain

Figure 1: Human vs Smart Contract Payroll System




These payment transactions are between normal accounts and smart contracts that we previously discussed. It is important that after issuing a smart contract, they are independent and even the creator do not have access to them. They live into the blockchain ecosystem forever and constantly do the same thing. The writer can add flexibility to the code that the users of the system get the ability to change the rules based on consensus. Otherwise, no one can change the smart contract, even if the code has some bugs, we should write new code with different address. In addition, centralized version is hard to work (if not impossible) if payees are in different countries with different local currencies.

Automated insurance company

In this case, we have a smart contract that has the ability to accept and pay to the other accounts. People payment of monthly premiums will be collected into the smart contract and at the same time, areal information of disasters comes to the contract too

(figure 2). This data have the regional information and with this information, smart contract, based on geographical position of insurees will paid out defected ones without any need to submit documents and time wasting actions.


Figure 2: Automated Insurance Company



The same system can be used for pension and retirement system. Mostly, these programs are on the hands of government, the government can spend the money in the situation of war or bad economical times. Instead of trusting to somebody for pay back, this model can substitute the operation very clearly and efficient. All the rules which determines when and how this money will be handled are in the contract. We can extend this simple model for more similar application and consider the model shown in figure 3. People participates in a smart contract if they have some incentives on it.

The contract will be connected to external world by entities named oracles. Oracles are data feeds from external systems that provide vital information for smart contracts. Mainly this information are factual events needed by contracts to execute under specific conditions⁵³. The growing need for oracles represents the continued expansion of blockchain systems into practical and real-world use cases, where accurate data is crucial. Some example are automated option contract, future contract, lending systems and prediction systems.

Figure 3: General form of external event based management and control systems




Realizing Internet of Things

Internet of things happen when devices have ability to connect to internet and do actions autonomously. This is one of the bases of Industry 4.0 era. Blockchain has great potential to realize these

⁵³ <https://blockonomi.com/oracles-guide/>

devices. One of the important parts that these autonomous things shall have is the ability of payment. Within blockchain with native tokens to feed transactions, it can be done. Each IoT device has an account protected with its private key that can transact with smart contracts within the blockchain. To accept instructions from smart contracts, they can have some balance in their account that accept a tiny token from smart contract as their validation key. Every valid device means it is active to work. An example of such system can be a hotel system, which unlocks the door, and room's utility whenever somebody pays its related smart contract. This system shown in figure 4.

Figure 4: IOT based smart hotel system



Decentralized Crowd Funding

First approach of crowd funding is writing a smart contract that will decide based on inputs and do a right action as a result. The

contract will be such that it gather funds from people with blockchain native token. If the fund reaches to the target value, it will redirect it to the receiver of the fund. If the fund does not reach to the target value, all the money goes back to the people that paid into the contract. There is no need to bank accounts, bank transaction fees and intermediary fee. Another method of crowd funding is very similar to the traditional IPO that companies do to raise fund in creation. Here it is named initial coin offer (ICO) and it is issuing native tokens for the enterprise that need to start or complete its implementation. Buyer of tokens is convinced that the enterprise will be successful and the value of native coin will rise. Another benefit for the buyer is that she can transact with the enterprise by these tokens. Buyers of the native tokens are not only the investors of the system, but also the customers and at the same time marketers.

Utilizing blockchain in supply chain management

The last case we will consider in this article is supply chain. However, here we try to introduce a methodology to design an upgrade for existing supply chain to a blockchain-based one. Among non-financial applications of blockchain, supply chain and logistic are one of the first and most attended cases. Physical internet and Industry 4.0 are two main drivers of upgrading supply chain management technology with blockchain. Regarding past few years, several proposals and implementations have been offered for this purpose. Many of them focused on business

process modeling and proposed for technology implementation⁵⁴. In some of these proposals, a prototype has been implemented on public blockchains like Ethereum. Leng et al. (2018) proposed a double chain architecture blockchain for agricultural supply chain to enhance the efficiency.

In proposals mentioned above, the main emphasis is on business process modeling and design of blockchain in the system. They suffer from the lack of a good business strategy as the evaluation of how much this migration enhances the supply chain key performance indices. Actually to measure the share of blockchain involvement in the SCM, we need a digital strategy. This digital strategy is itself, a part of the business strategy, which clears how much improvement, it brings to the desired performance indicators.

The lack of a strategy in the process of design, develop and verification of the projects, causes that there would not be a good evaluation for costs and benefits of different actors in the system. This is the reason many of the projects in this area has not be realized or failed soon. As audited by Deloitte⁵⁵ in late 2017, from 26000 new blockchain projects, only 8 percent remained and the others failed. Therefore, we can see how much business strategy especially digital strategy can help the projects to success. The proposed model to involve digital strategy in upgrading a business process to adopt blockchain is shown in figure 5. This model has

⁵⁴ Nakasumi, 2017; Caro et al., 2018; Di Ciccio et al., 2018; Lu and Xu, 2018; Tian, 2017; Casado-Vara et al., 2019.

⁵⁵ Deloitte Touche Tohmatsu Limited, commonly referred to as Deloitte, is a multinational professional services network.

three steps and in each step, we do some part of design, from evaluation to realizing.

This model needs some indicators to evaluate the efficiency that the project will bring to the system. Key performance indicators for supply chain management that can be compared between traditional and blockchain-based version of the project are as table 1. These indicators are the most ones that expected to be enhanced with blockchain. Besides these indicators, we also should consider limitations in our evaluation phase of the project. These are scalability and cost of the blockchain itself. These two issues are actually under huge effort to be resolved and blockchain version 3.0 and very recently, version 4.0 are the latest works in these issues. Version 3.0, mostly worked on enhancing scalability and version 4.0 achieve perfect ecosystem.

Figure 5: Design Steps to Adopt Blockchain in a Traditional Business Process




Table 1: Major Key Performance Indicators of SCM⁵⁶

Performance Indicator	Formula
Perfect Order Measurement	$((\text{total orders} - \text{error orders}) / \text{total orders}) * 100$
Cash to Cash Cycle Time	materials payment date – customer order payment date
Customer Order Cycle Time	actual delivery date – purchase order creation date
Fill Rate	$(1 - ((\text{total items} - \text{shipped items}) / \text{total items})) * 100$
Supply chain Cycle Time	Sum of the longest lead times for each stage of the cycle
Freight Bill Accuracy	$(\text{error-free freight bills} / \text{total freight bills}) * 100$
Days Sales Outstanding	$(\text{Receivables}/\text{Sales}) * \text{Days in Period}$
On Time Shipping Rate	$(\text{Number of On Time Items} / \text{Total Items}) * 100$
Day of Supply	DOS: $\text{Average Inventory} / \text{Monthly Demand} * 30$
Inventory Velocity	IV: $\text{Opening Stock} / \text{Next Month's Sales Forecast}$

GUEST Design Methodology

In order to comply the three phases of design with the latest standards in design method, one good option is GUEST ⁵⁷ methodology which is one of the best ones that can be used to

⁵⁶ Tradecloud, supply chain Management Company.

⁵⁷ Developed by a pool of researchers from the Politecnico di Torino, last revision, revision 2.0,2017

create the use case of the system. From the original idea to its implementation and communication between all parts of the system and actors will be controlled and clarified. This methodology articulated in five easy steps, Go, Uniform, Evaluate, Solve, Test. To evaluate the migration of total supply chain or some part of it, to the blockchain technology, all the necessary performance indicators mentioned in table 1 shall be defined in Goal/Objective section of solution canvas⁵⁸ of our GUEST model. Measuring and comparing the enhancements and costs of the project, push us in a right way to choose appropriate approaches and alternatives of blockchain. It helps us to be in accompany of fast growing blockchain technology and continuously evaluate the performances and making the required updates.

Conclusion

Blockchains change business processes and lead them toward automation. This is the basic need to migrate from industry 3.0 to industry 4.0. Giving the ability of payment to smart objects via smart contracts and transacting with smart contracts to do some actions realizing the internet of things. With eliminating third parties and intermediaries, creating trustless environment to do business and manage resources, the cost of traditional will drop sharply and efficiency grows considerably. Having an appropriate design approach to implement new projects or upgrade current systems to blockchain, maintains projects resilient and durable. This approach shall evaluate each actor pain and gain, evaluate

⁵⁸ An analytical tool used in the GUEST methodology with the intention of outlining the chosen solution

different key performance indicators and consider technology limitations on strategy and design phases.

Literature

1. Information Sharing for Supply Chain Management Based on Block Chain Technology, Mitsuaki Nakasumi, 2017 IEEE 19th conference on business information.
2. Blockchain-based traceability in Agri-Food supply chain management: A practical implementation, Miguel Caro, Massimo Veccino, 2018 Conference Paper.
3. Adaptable Blockchain-Based Systems: A Case Study for Product Traceability, Qinghua Lu, Xiwei Xu, 2017 IEEE software
4. Smart Contract for Monitoring and Control of Logistics Activities: Pharmaceutical Utilities Case Study, Roberto Casado-Vara, Javier Prieto, 2019 case study in in Advances in Intelligent Systems and Computing.
5. Research on agricultural supply chain system with double chain architecture based on Blockchain technology, Leng, K., Bi, Y, 2018 Future Generation Computer Systems.
6. Blockchain in Logistics and Supply Chain: a Lean approach for designing real-world use cases, Guido Perboli and Mariangela Rosano, 2018, IEEE Access.

Амидреза Маджуб

Европейская региональная академия образования, соискатель

**БЛОКЧЕЙН И “УМНЫЕ” КОНТРАКТЫ
ПЕРЕОПРЕДЕЛЯЮТ БИЗНЕС-ПРОЦЕССЫ**

Ключевые слова—блокчейн, умные контракты, цепочки поставок, показатели эффективности, методология GUEST

Блокчейн изменяет бизнес-процессы и ведет их к автоматизации. Это основная необходимость перехода с индустриального общества 3.0 на индустриальную общество 4.0. При этом, предоставляется возможным оплаты смарт-объектов через смарт-контракты и заключение смарт-контрактов для выполнения некоторых действий на реализации интернет объектов. С устранением третьих сторон и посредников, созданием надежной среды для ведения бизнеса и управления ресурсами, стоимость традиционных операций резко упадет, а эффективность значительно возрастет. Наличие соответствующего подхода к проектированию новых проектов реализации или обновления существующих систем для блокчейна, обеспечивает устойчивость и долговечность экономической деятельности. Этот подход должен выявить убыток и прибыль каждого участника, оценивать различные ключевые показатели эффективности и учитывать технологические ограничения на этапах бизнес стратегии и проектирования.

Համիդնեզա Մահջուր

Եվրոպական տարածաշրջանային կրթական ակադեմիա, հայցորդ

**ԲԼՈՎՉԵՅՆԸ ԵՎ «ԽԵԼԱՑԻ» ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԸ
ՎԵՐԱԶԵՎԱԿԵՐՊՈՒՄ ԵՆ ԲԻԶՆԵՍ ԳՈՐԾՆԹԱՑԸ**

Հիմնաքառեր – Բլոկչեյն, «խելացի» պայմանագրեր, մատակարարման շղթաներ, կատարողական ցուցանիշներ, հյուրընկալության մեթոդաբանություն

Բլոկչեյնը ձևափոխում է բիզնես գործընթացները և բերում գործընթացների ավտոմատացման: Այն հիմնվում է արդյունաբերական հասարակության 3-ից մինչև 4.0-ը անցնելու անհրաժեշտության վրա: Այս դեպքում, ինտերնետային օբյեկտների իրականացման որոշակի գործողություններ կատարելով, հնարավոր է դառնում վճարելու «խելացի» օբյեկտների ձեռքբերման համար՝ խելացի պայմանագրերի կրնքմամբ: Երրորդ կողմերի և միջնորդների վերացման արդյունքում բիզնես ռեսուրսների կառավարման համար հուսալի միջավայրի ստեղծումը, ավանդական գործողությունների արժեքը կտրուկ նվազեցնում են կոմերցիոն ծախսերը եւ զգալիորեն բարձրանում բիզնես գործունեության արդյունավետությունը: Նոր ծրագրերի նախագծման համար, ունենալով համապատասխան մոտեցում, բլոկչեյնը բարեփոխում և ապահովում է տնտեսական գործունեության կայունություն և երկարակեցություն: Այս մոտեցմամբ վերհանվում է ցանցային յուրաքանչյուր մասնակցի կորուստը եւ շահույթը, գրնահատվում են բազմաբնույթ առանցքային ցուցանիշներ և հաշվի են առնվում տեխնոլոգիական խոչընդոտները բիզնես ռազմավարության և նախագծման փուլերում:

*Ներկայացվել է՝ 02.04.2019 թ.
Ընդունվել է տպագրության՝ 19.04.2019 թ.*

Արմեն Հակոբյան

տնտեսագիտության դոկտոր, «ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ»

ՓԲԸ գլխավոր հաշվապահ

ՏՐԱՆՍՖԵՐԱՅԻՆ ԳՆԱԳՈՅԱՑՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

Հիմնաբառեր – տրանսֆերային գնագոյացում, ֆինանսական պատասխանատվության կենտրոններ, կառավարչական հաշվառման հաշվետվություն

Տրանսֆերային գնագոյացումը վերջին տարիներին ակտիվորեն ընդգրկվում է կառավարչական հաշվառման համակարգում և լուրջ դերակատարում է ձեռք բերում մրցակցային գործարարության շրջանակներում: Կառավարչական հաշվառումը տրանսֆերային գինը սահմանում է որպես մրցունակություն ապահովող նշաձող, որի հասանելիությունն էլ փաստում է լավագույն դիրքերի ամրապնդում ձեռներեցական ոլորտում: Դա, իհարկե, տարբերվում է հարկման բնագավառում ընդունված սահմանումից, այն է տրանսֆերային գնագոյացումը փոխկապակցված հարկ վճարողների միջև իրականացվող վերահսկվող գործարքներում ապրանքների մատակարարման, ոչ նյութական ակտիվների օտարման, աշխատանքների կատարման և/ կամ ծառայությունների մատուցման, սահմանված ֆինանսական ցուցանիշների որոշման ընթացակարգն է⁵⁹:

Կառավարչական հաշվառումը կազմակերպությունների մակարդակով սահմանում է ֆինանսական պատասխանատվության կենտրոններ (ՖՊԿ), իսկ եթե տրանսֆերային գնագոյացումը դուրս է գալիս մեկ կազմակերպության շրջա-

⁵⁹ Տես ՀՀ Հարկային օրենսգիրք, Գլուխ 73, Հոդված 361://www.arlis.am/

նակից և դիտարկվում է ներխուժային կապակցված տնտեսվարողների շրջանակում, ապա կառավարչական հաշվառման համար, որպես ՖՊԿ, դիտարկվում է խմբում ընդգրկված յուրաքանչյուր կազմակերպություն:

Եթե տրանսֆերային գներ են սահմանվում կազմակերպությունում գործող ներքին ստրաբաժանումների գծով, ապա անհրաժեշտություն է դառնում կազմակերպության գործունեությունը ներկայացնելու ըստ պատասխանատվության կենտրոնների: Ընդ որում, դրանք կարող են լինել ծախսերի, շահույթի կամ ներդրումների պատասխանատվության կենտրոններ:⁶⁰

Կառավարչական հաշվառումը *ծախսերի ձևավորման պատասխանատվության կենտրոնը* ճանաչում է այն դեպքում, երբ, մի կողմից հնարավոր է դառնում հստակ վերագրելու ծախսը կոնկրետ ՖՊԿ-ին, մյուս կողմից, պարզորոշ է դառնում այդ կենտրոնում ծախսերի ձևավորման պատասխանատուն: Այստեղ կարևորվում է այն հանգամանքը, որ ծախսերը կարող են վերագրվել տվյալ կենտրոնին, սակայն հնարավոր է, որ դրանց մի մասը դուրս մնան այդ նույն կենտրոնի պատասխանատվության շրջանակից: Օրինակ, եթե A (300 մ² տարածքով) և B (200 մ² տարածքով) ստորաբաժանումներն ունեն ընդհանուր ջեռուցման համակարգ, որի ամսական 10 մլն դրամ փաստացի ծախսերը ձևավորվում են C կաթսայատանը և բաշխվում են համապատասխանաբար 3/2 հարաբերակցությամբ, ապա 6 մլն դրամը, որը կվերագրվի A ՖՊԿ-ին, իսկ 4 մլն դրամը՝ B ՖՊԿ-ին, դուրս կմնան այդ ստորաբաժանումների պատասխանատվության շրջանակից, քանի որ դրանց պատասխանատուները չեն կարող ուղղակիորեն ներագդել կաթսայատան ծախսերի ձևավորման վրա:

⁶⁰ Ճուղուրյան Ա. Կառավարչական հաշվառման հիմունքներ, հեղ. հրատ., Եր. 2003, էջ 21-22:

Հենց այստեղ է, որ կարող են ծագել տնտեսական շահերի բախումներ A, B և C ստորաբաժանումների միջև, քանի որ նախատեսված արժեքից ավելի ջեռուցման ծախսերը C կաթսայատանից վերագրվելով A և B ծախսային պատասխանատվության կենտրոններին, կարող են անհիմն բարձրացնել վերջիններիս գործունեության ինքնարժեքը՝ գրկելով դրանցում ընդգրկված աշխատակիցներին պարզապահարներից կամ խրախուսման այլ միջոցներից: Հետևաբար, կառավարչական հաշվառումը պետք է հստակեցնի, թե կոնկրետ ծախսային կենտրոնում ձևավորվող ինքնարժեքի որ մասի գծով է պատասխանատվություն կրում, և որ մասն է, որ դուրս է մնում ծախսային տարրերի պատասխանատվության շրջանակից:⁶¹

Նման իրավիճակներում ծախսային կենտրոնների փոխհարաբերություններում արդյունավետ է գործում տրանսֆերային գների կիրառումը: Այսպես, եթե մեր օրինակում մեկ քառակուսի տարածքի ջեռուցման տրանսֆերային գինը նախապես սահմանված լիներ 0,016 մլն դրամ, ապա A ստորաբաժանումը, որպես ջեռուցման ծախս, կընդուներ 4,8 մլն դրամը ($300 \text{ մ}^2 \times 0,016$), իսկ B ստորաբաժանումը՝ 3,2 մլն դրամը ($200 \text{ մ}^2 \times 0,016$): Հետևաբար, այս դեպքում ջեռուցման 2 մլն դրամի ($3,2 + 4,8 - 10$) գերաճախսը պետք է վերագրվեր ոչ թե A և B ստորաբաժանումներին, այլ C կաթսայատանը:

Հետևաբար, տրանսֆերային գները կառավարչական հաշվառման պարագայում դրվում են ծախսային կենտրոնների ձևավորվող նախահաշվային ինքնարժեքի հաշվարկման հիմքում, որով և կարգավորվում են ՖՊԿ-ների միջև ծագող տարաձայնությունները փաստացի գերաճախսերի պատասխանատվության ստանձման հարցերում:

⁶¹ Peterson S., Introductory of managerial accounting, textbook, New York, 2018, page 34.

Տրանսֆերային գների օգտագործումը կառավարչական հաշվառումը կարևորում է նաև *շահույթի ձևավորման պատասխանատվության կենտրոնների* սահմանման ոլորտում: ⁶² Գործնականում միշտ չէ, որ հնարավորություն է ստեղծվում սահմանելու շահույթի ձևավորման ստորաբաժանումներ, քանի որ եկամուտը վերագրվում է հիմնականում արտադրական ցիկլի վերջնահատվածում գտնվող թողարկված պատրաստի արտադրանքի վաճառքին, կամ մատուցված ծառայությանը: Բնականաբար, նման պարագայում պարզապես հնարավորություն չի ստեղծվում արտադրության մեկնարկի կամ միջանկյալ փուլերը դիտարկելու որպես շահույթի կենտրոններ, պարզապես դրանցում եկամտի ձևավորման բացակայության պատճառով: Իսկ եթե յուրաքանչյուր ՖՊԿ-ին վերագրվում է իր իսկ կողմից թողարկվող արդյունքի կամ մատուցած ծառայության տրանսֆերային գին, ապա դա բերում է «միջանկյալ եկամտի» հաշվարկի հնարավորությանն ըստ առանձին ստորաբաժանումների, որն էլ այդ ծախսային կենտրոնները վերածում է շահույթի ձևավորման պատասխանատվության կենտրոնների:

Այսպես, եթե A ստորաբաժանումում թողարկվում է 2500 դետալ, միավորը 7 000 դրամ ինքնարժեքով, որը, որպես կիսաֆաբրիկատ, այնուհետև փոխանցվում է B ստորաբաժանմանը, որտեղ այն վերածվում է պատրաստի արտադրանքի՝ միավորը 10 000 դրամ ինքնարժեքով, ապա B-ն հանդես է գալիս որպես շահույթի կենտրոն, քանի որ այնտեղ համադրվում են թողարկված պատրաստի արտադրանքի ինքնարժեքն ու իրացումից եկամուտը՝ 15 000 վաճառքի գնով:

Եթե A ստորաբաժանման գծով չի սահմանվում B-ին փոխանցվող կիսաֆաբրիկատների տրանսֆերային գին,

⁶² Management and Cost Accounting, ACCA publication, 2018, pp. 56-58.

ապա 15 000 վաճառքի շուկայական գինը ամբողջությամբ վերագրվում է B ստորաբաժանմանը, որը, կոնկրետ դեպքում, հանդես է գալիս շահույթի կենտրոն: Իսկ երբ A ստորաբաժանման արտադրանքին վերագրվում է տրանսֆերային գին, օրինակ, մեկ դետալի գծով 8 000 դրամ, ապա պարզ է դառնում, որ 15 000 շուկայական գնային արժեքից միայն 7 000 դրամն է (15 000 – 8 000) վերաբերվում B ստորաբաժանմանը, իսկ A ստորաբաժանումն արդեն իսկ ծախսային կենտրոնից վերափոխվում է շահույթի կենտրոնի, որից եկող տեղեկատվությունը կառավարչական որոշումներին այլ որակ է տալիս:

Այսպես, եթե մենեջմենթը պարզևավճարների սանդղակ է սահմանում ձևավորված շահույթի 25%-ի չափով, ապա դրանից կօգտվեն ոչ միայն B, այլև A ստորաբաժանման աշխատակիցները, քանի որ այդ օղակում հնարավորություն կատեղծվի որոշելու շահույթից պարզևավճարը՝ 625 000 դրամ արժեքով, սահմանված տրանսֆերային գինը օգտագործելով «միջանկյալ եկամտի» հաշվարկներում [2 500 դետալ x (8 000 – 7 000) x 0.25]:

Կառավարչական հաշվառումը տրանսֆերային գները օգտագործում է նաև *ներդրումային պատասխանատվության կենտրոններում*, երբ արդեն շահույթի ձևավորումը համակցվում է տվյալ կենտրոնում իրականացվող ներդրումների հետ:⁶³ Այս պարագայում ընդլայնվում է կառավարչական հաշվառման շրջանակը, քանի որ, մի կողմից, տրանսֆերային գների հիման վրա բացահայտվում է ներդրումների կայացման անհրաժեշտությունը և կառավարչական որոշումներ են կայացվում, մյուս կողմից, կառավարչական հաշվառումը մենեջմենթին տեղեկատվություն է տրամադրում ներդրումների փաստացի հատույցի վերաբերյալ, որով հնարավորու-

⁶³ Друри К., Управленческий и производственный учет, М., Юнити, 2015, стр. 231.

թյուն է ընձեռնվում գնահատելու ներդրումային գործընթացի արդյունավետությունը:⁶⁴

Այսպես, եթե կազմակերպության A ստորաբաժանումը ձևավորում է 17,5 մլն դրամի (7 000 x 2 500) թողարկման ինքնարժեք, որը հին սարքավորումների օգտագործման արդյունք է և, այդ նպատակով, նոր սարքավորումներ են տեղադրվում՝ 5 տարի շահագործման արժեքով և 60 մլն սկզբնական արժեքով, ապա կառավարչական հաշվառումից պահանջվում է լրացուցիչ տեղեկատվություն, թե ամսական 1 մլն դրամ [(60 մլն : (5 տարի x 12 ամիս)) ներդրումների հաշվարկով որքան ծախսեր են տնտեսվում A ստորաբաժանումում, որի հիմքում նորից դրվում են նախօրոք սահմանված տրանսֆերային գները:

Այսպիսով, ներկազմակերպչական մակարդակով տրանսֆերային գները կիրառվելով կառավարչական հաշվառման կողմից, լուծում են ֆինանսական պատասխանատվության կենտրոնների ձևավորման խնդիրներ, ի դեմս ծախսերի, շահույթի կամ ներդրումային կենտրոնների: Ընդ որում, դրանցից առավել ընդգրկուն տեղեկատվություն է պահանջվում ներդրումների պատասխանատվության կենտրոնից,⁶⁵ որտեղ համակցվում են նաև ծախսերի ու շահույթի ձևավորման կենտրոնների գործառնությունները:

Սակայն, տրանսֆերային գներով կառավարչական հաշվառման կազմակերպումը նաև կարող է դուրս գալ մեկ կազմակերպության շրջանակից և գործել ներխմբային շահեր հետապնդող կազմակերպությունների շրջանակում: Այս

⁶⁴ Ильина А., Управленческий учет, Екатеринбург Издат. Уральского университета, 2016, стр. 98.

⁶⁵ Managerial cost accounting and control, ABOKI PUBLISHERS, 2015, page 102.

պարագայում, արդեն, անհրաժեշտ է դառնում մշակելու հաշվառման համակարգ, որը տրանսֆերային գների հենքով արձանագրում, մշակում և համախմբված հաշվետվություն է ներկայացնում:


Ընդ որում, կառավարչական այդ հաշվետվությունը եականորեն տարբերվում է համախմբված ֆինանսական հաշվետվության տեղեկատվությունից, որը պահանջում է միջազգային հաշվապահական ստանդարտը: Ստանդարտի նպատակն է սահմանել համախմբված ֆինանսական հաշվետվությունների ներկայացման ու պատրաստման սկզբունքները, երբ կազմակերպությունը վերահսկողություն ունի մեկ կամ ավելի այլ կազմակերպությունների նկատմամբ: Ընդ որում, համաձայն միջազգային համախմբված ֆինանսական հաշվետվություններում.

(ա) համախմբվում են մայր կազմակերպության և դուստրը կազմակերպությունների ակտիվների, պարտավորությունների, սեփական կապիտալի, եկամուտների, ծախսերի և դրամական հոսքերի նմանատիպ հոդվածները,

(բ) հաշվանցվում է յուրաքանչյուր դուստր կազմակերպությունում մայր կազմակերպության ներդրման հաշվեկշռային արժեքը և յուրաքանչյուր դուստր կազմակերպության սեփական կապիտալում մայր կազմակերպության բաժինը, ներկայացվում գուդվիլի հաշվարկման կարգը,

(գ) բացառվում են ներխմբային ակտիվները և պարտավորությունները, սեփական կապիտալը, եկամուտը, ծախսերը և դրամական հոսքերը, որոնք վերաբերում են խմբում ընդգրկված կազմակերպությունների միջև գործարքներին (ներխմբային գործարքներից առաջացող շահույթը կամ վնասը, որը ճանաչվել է ակտիվներում: Ներխմբային վնասները կարող են ցույց տալ որպես արժեզրկում, որը ճանա-

չում է պահանջում համախմբված ֆինանսական հաշվետվություններում:⁶⁶



Գծապատկեր 1. Կառավարչական հաշվառման միջոցով տրանսֆերային գներով հոլդինգի գործարար ակտիվության տեղեկատվության համախմբումը⁶⁷

Ի տարբերություն «Համախմբված ֆինանսական հաշվետվություններ» ՖՀՄՍ թիվ 10 ստանդարտի, տրանսֆերային գներով ներխմբային կազմակերպությունների գործունեության արդյունքների համախմբումը պահանջում է հատուկ հաշվետվություն, որում ոչ թե հաշվանցվում են կազմակերպությունների ֆինանսական արդյունքները, այլ, ընդհակառակը, ըստ առանձին ներհոլդինգային ձեռներեցական կենտրոնների, ներկայացվում յուրաքանչյուր կազմակերպության շահույթը կամ վնասը: Ընդ որում, ֆինանսական այդ

⁶⁶ ՖՀՄՍ 10 «Համախմբված ֆինանսական հաշվետվություններ», կետ Բ86:

⁶⁷ Կազմված է հեղինակի կողմից:

արդյունքները հիմնվում են ոչ թե գործող շուկայական, այլ հողիինգի ներսում սահմանված տրանսֆերային գների վրա՝ նպատակ ունենալով բացահայտելու յուրաքանչյուր կազմակերպության շահութաբերության կամ գործարար ակտիվության մակարդակը ձեռնարկատիրական խմբում (տե՛ս գծապատկեր 1): Դրանով իսկ տեղեկատվություն է ձևավորվում յուրաքանչյուր կազմակերպության կողմից հողինգի մրցակցային դիրքերի վրա ներազդեցության գծով և կայացվում են կառավարչական որոշումներ:

ԱՍՓՈՓՈՒՄ

Տրանսֆերային գներով կառավարչական հաշվառման կազմակերպումը նպատակ է հետապնդում համակարգված տեղեկատվություն հաղորդելու գործարարության մրցակցային դիրքերի ամրապնդման նպատակով կառավարչական որոշումների կայացման համար, ուղղված ինքնարժեքի իջեցման, շահութաբերության բարձրացման ռեզերվների բացահայտմանը: Ընդ որում, համակարգված այդ տեղեկատվությունը հնարավոր է օգտագործել ինչպես մեկ կազմակերպության ներտնտեսական շրջանակում, այնպես էլ կազմակերպությունների ներխմբային կառավարման համակարգում:

Armen Hakobyan
Sc.D. in Economics

FUNCTIONS OF MANAGERIAL ACCOUNTING AT TRANSFER PRICES

***Keywords** – transfer pricing, financial responsibility centers, managerial accounting reporting*

The organization of managerial accounting at transfer prices has the goal of providing system information for making management decisions to increase business competitiveness. This applies to decisions on cost reduction, identification of reserves for increasing the efficiency of economic activity. Moreover, such system information is also possible to use not only within the organization, but also in the circle of intra-group relations of enterprises, operating within the holding.

Армен Акопян
доктор экономических наук

ФУНКЦИИ УПРАВЛЕНЧЕСКОГО УЧЕТА В ОБЛАСТИ ТРАНСФЕРТНОГО ЦЕНООБРАЗОВАНИЯ

***Ключевые слова** – трансфертное ценообразование, центры финансовой ответственности, отчетность управленческого учета*

Организация управленческого учета по трансфертным ценам имеет цель представления системной информации для принятия управленческих решений по повышению конкурентоспособности бизнеса. Это касается принятия решений по

снижению себестоимости, выявлению резервов повышения эффективности экономической деятельности. Более того, такую системную информацию возможно будет использовать не только внутри организации, а также в кругу внутригрупповых отношениях предприятий, действующих в рамках холдинга.

*Ներկայացվել է՝ 10.04.2019 թ.
Ընդունվել է տպագրության՝ 19.04.2019 թ.*

Մեեր Կանդայան
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Գլխավոր հաշվապահի տեղակալ,
տ.գ.թ., ACCA

**ՖՀՄՍ 9 ՍՏԱՆԴԱՐՏԻ ՆԵՐՈՐՄԱՆ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ**

Հիմնարաներ – ՖՀՄՍ 9, ՀՀՄՍ 39, ֆինանսական հաստատություններ, ֆինանսական ճգնաժամ, ֆինանսական ակտիվների դասակարգում և չափում, ֆինանսական ակտիվների արժեզրկում, PD, LGD, EAD, դեֆոլթ

ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

2007 թ. ֆինանսական ճգնաժամը հիմք հանդիսացավ, որպեսզի ֆինանսական հաստատություններն էապես վերանայեն իրենց ֆինանսական ռիսկերի կառավարման մոտեցումները՝ դրանք համապատասխանեցնելով շուկայում առ-

կա արդի իրավիճակին: Մասնավորապես, ճգնաժամից հետո ֆինանսական ոլորտը կարգավորող մի շարք վերահսկող մարմիններ, ինչպիսիք են, օրինակ՝ Բազելյան կոմիտեն կամ Հաշվապահական հաշվառման միջազգային հաշվապահական ստանդարտների խորհուրդը (այսուհետ՝ ՀՀՄՄԽ), սկսեցին ակտիվ աշխատել կարգավորման նոր մեխանիզմներ ստեղծելու և ֆինանսական կազմակերպությունների գործունեությունն ավելի թափանցիկ դարձնելու ուղղությամբ: Այս աշխատանքների արդյունքում և ստեղծվեց ՖՀՄՄ 9 նոր ստանդարտը, որը 2018 թ. հունվարի 1-ից փոխարինեց նախկինում գործող ՀՀՄՄ 39 ստանդարտին: ՀՀՄՄ 39-ը ներդրվել էր դեռևս 2001 թ., և 2007 թ. ճգնաժամից հետո ակնհայտ դարձավ, որ վերջինս լիարժեք չի ապահովում ֆինանսական կազմակերպությունների կողմից հրապարակվող հաշվետվությունների թափանցիկությունը:

2009 թ. ՀՀՄՄԽ-ն հրապարակեց նոր ստանդարտի առաջին տարբերակը, որը հիմնականում կարգավորում էր ֆինանսական ակտիվների դասակարգման և չափման սկզբունքները և պետք է ուժի մեջ մտներ 2014 թվականին: Սակայն, մի շարք քննարկումների և ստացված նոր առաջարկների դիտարկումից հետո, ակնհայտ դարձավ, որ ստանդարտի ներկայացված տարբերակը պետք է վերանայվի, և ՀՀՄՄԽ-ն 2011 թ. դեկտեմբերին հետաձգեց դրա ներդրումը անորոշ ժամանակով:

2014 թ. հուլիսին, ՀՀՄՄԽ-ն շահագրգիռ բոլոր կողմերի հետ համաձայնեցնելուց հետո, հրապարակեց ՖՀՄՄ 9 նոր ստանդարտի վերջնական տարբերակը, որն արդեն իր մեջ ներառում էր ֆինանսական ակտիվների և պարտավորությունների դասակարգման և չափման ավելի մանրամասն

չափորոշիչներ, հեջավորված գործիքների հաշվառման և ներկայացման նոր մոտեցումներ և ամենամեծ նորամուծությունը՝ ֆինանսական ակտիվների արժեզրկման համար նախատեսված բոլորովին այլ և նախորդ ստանդարտից էապես տարբերվող նոր տրամաբանություն:

Ստանդարտն ուժի մեջ պետք է մտնի հրապարակումից մոտ 3.5 տարի հետո՝ 2018 թ. հունվարի 1-ից: Նման երկար ժամանակը պայմանավորված էր ֆինանսական հաստատություններին նոր ստանդարտի կիրառման բոլոր պահանջներին նախապես պատրաստվելու հնարավորության ընձեռմամբ:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԱՐԺԵԶՐԿՄԱՆ ՆՈՐ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ

Տվյալ հոդվածում մենք ավելի մանրամասն կանդրադառնանք ֆինանսական ակտիվների արժեզրկման նոր մոտեցումներին, քանզի վերջիններս ամենահեղափոխականն են նախորդ ստանդարտով սահմանված մոտեցումների համեմատ և ներկայացնում են առավել մեծ հետաքրքրություն:

Նախորդ ստանդարտի հիմնական փիլիսոփայությունը կայանում էր նրանում, որ ֆինանսական հաստատությունները պարբերաբար պետք է գնահատեին իրենց առկա վարկային ռիսկերը, հաշվետվությունները հրապարակելու ամսաթվի դրությամբ՝ հաշվի առնելով անցյալում տեղի ունեցած դեպքերը:

Այս մոտեցման հիմնական քննադատներն այն կարծիքին էին, որ անցյալը լիարժեք չի կարող ներկայացնել վարկային ռիսկը, քանի որ ռիսկն ապագայում տեղի ունենալիք

հնարավոր իրադրություններն են, որոնք կարող են առաջացնել կորուստներ ֆինանսական կազմակերպությունների մոտ՝ այդ իրադարձությունների ոչ լիարժեք և ոչ ճիշտ կանխատեսման ու կառավարման հետևանքով, և, հետևաբար, գնահատել ռիսկը միայն անցյալի վրա հիմնված տեղեկատվությամբ, սխալ է: Վերոնշյալ փաստարկները հատկապես ուժեղացան 2007 թ. ֆինանսական ճգնաժամից հետո, երբ ակնհայտ դարձավ, որ, հիմնվելով միայն անցյալի վրա, ֆինանսական հաստատություններից շատերը չկարողացան լիարժեք գնահատել ֆինանսական ռիսկերը՝ չկանխորոշելով ճգնաժամը և կրեցին էական վնասներ, իսկ որոշները նաև սնանկացան:

Նոր ստանդարտը միայն անցյալի վրա հիմնված վարկային ռիսկի չափման մոտեցումը չի ընդունում և պարտադրում է ֆինանսական կազմակերպություններին վարկային ռիսկը գնահատելիս հաշվի առնել ոչ միայն անցյալի պատմական շարքերը, այլ նաև ապագա հնարավոր զարգացումները, որոնք իրենց մեջ կարող են ներառել էական գործոններ վարկային ռիսկի գնահատման տեսանկյունից:

2007 թվականի ճգնաժամը ևս մի խնդիր բացահայտեց, որին նոր ստանդարտը նույնպես փորձել է անդրադառնալ՝ առաջարկելով նոր մոտեցումներ: Մասնավորապես, նախկինում ֆինանսական հաստատությունները վարկային ռիսկը գնահատում էին և համապատասխան արժեզրկման պահուստներ էին ձևավորում հիմնականում վարկային պորտֆելների գծով՝ անտեսելով վարկային ռիսկ պարունակող այլ ֆինանսական ակտիվները, ինչպես նաև հետհաշվեկշռում հաշվառվող և վարկային ռիսկ պարունակող պայմանական պարտավորությունները (վարկային գծերի, վարկային քար-

տերի, օվերդրաֆտների չօգտագործված մասեր, վարկային և այլ ֆինանսական երաշխիքներ, ինչպես նաև ակրեդիտիվներ):

Նոր ստանդարտը պահանջում է, որպեսզի այսուհետ վարկային ռիսկը գնահատվի, և համապատասխան արժեզրկման պահուստներ ձևավորվեն բոլոր այն ֆինանսական ակտիվների գծով, որոնք, համաձայն ստանդարտի, չեն դասակարգվի իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ, այդ թվում նաև վերը նշված բոլոր տիպի հետհաշվեկշռային պայմանական պարտավորությունների գծով:

Այսինքն, համաձայն նոր ստանդարտի, ֆինանսական հաստատություններն իրենց վարկային ռիսկերը գնահատելիս պետք է անդրադառնան շատ ավելի մեծ ֆինանսական գործիքների (թղթակցային հաշիվներ, միջբանկային վարկեր և ավանդներ, հակադարձ ռեպո գործարքներ, պարտքային արժեթղթեր, վարկեր և այլ ֆինանսական ակտիվներ, ինչպես նաև հետհաշվեկշռային պայմանական պարտավորություններ) համախմբի, քան նախկինում:

Համաձայն նոր ստանդարտի՝ վարկային ռիսկի բնութագրիչ է հանդիսանում ակնկալող վարկային կորուստը (այսուհետ՝ ԱՎԿ), որն իրենից ներկայացնում է հավանականության մի կշռված մի շարք սցենարներով՝ գնահատելու ակնկալվող դրամական միջոցների պակասորդները, զեղչված արդյունավետ տոկոսադրույքի մոտարկմամբ:

Դրամական միջոցների պակասորդը կազմակերպությանը պայմանագրով վճարման ենթակա դրամական միջոցների հոսքերի և կազմակերպության ակնկալվող դրամական միջոցների հոսքերի միջև տարբերությունն է: ԱՎԿ հաշվար-

կի մեխանիզմները ներկայացված են ստորև և դրանց հիմնական տարրերը հետևյալն են՝

- PD *Դեֆոլտի հավանականությունը* որոշակի ժամանակային հորիզոնի ընթացքում դեֆոլտի հավանական լինելու գնահատումն է: Դեֆոլտը միայն կարող է տեղի ունենալ գնահատված ժամանակահատվածում որոշակի պահի, եթե գործիքը նախկինում չի ապաճանաչվել: PD գործակցի կարևորագույն բաղադրիչներից են հանդիսանում այն մակրո ցուցանիշները, որոնք, ըստ ֆինանսական կազմակերպության, ունեն ապացուցելի կապ ֆինանսական գործիքի կամ գործիքների համախմբի դեֆոլթի վրա:
- EAD *Դեֆոլտի ժամանակ գործիքի արժեքը* ապագա դեֆոլտի ամսաթվի դրությամբ գործիքի գնահատված արժեքն է՝ հաշվի առնելով հաշվետու ամսաթվից հետո ակնկալվող փոփոխությունների ազդեցությունը, ներառյալ մայր գումարի և տոկոսների վճարումները՝ պայմանագրով նախատեսված կամ այլ կերպ, բաց թողնված վճարումների վրա հաշվեգրված տոկոսները և այլն:
- LGD *Դեֆոլտի դեպքում կորստի չափը* դրամական միջոցների կորստի գնահատումն է, որն առաջանում է, երբ որոշակի պահի տեղի է ունենում դեֆոլտ: Դա պայմանագրով սահմանված դրամական միջոցների հոսքերի և այն դրամական միջոցների հոսքերի տարբերությունն է, որոնք վարկատուն ակնկալում է ստանալ՝ ներառյալ գրավների իրացումից միջոցները:

ԱՎԿ պահուստը հիմնվում է վարկային ռիսկով պայմանավորված կորուստների վրա, որոնք, ակնկալվում է, որ կառաջանան ակտիվի կյանքի ընթացքում (ակտիվի կյանքի

ընթացքում ակնկալվող վարկային վնաս կամ ԱԿԱՎԿ), եթե առկա չէ վարկային ռիսկի զգալի աճ սկզբնական ճանաչումից հետո, որի դեպքում պահուստը հիմնվում է 12 ամսվա ընթացքում ակնկալվող վարկային վնասի վրա (12ամԱՎԿ): 12ամԱՎԿ-ը ԱԿԱՎԿ-ի այն մասն է, որը ներկայացնում է ֆինանսական գործիքի գծով պարտավորությունների չկատարման դեպքերի արդյունք հանդիսացող ԱՎԿ-ները, որոնք հնարավոր են հաշվետու ամսվան հաջորդող 12 ամիսների ընթացքում:

Ֆինանսական հաստատությունն իր վարկային ռիսկի կառավարման քաղաքականությամբ պետք է սահմանի յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի ավարտին այն հիմնական գործողությունները, որոնք հնարավորություն կտան գահատել՝ արդյո՞ք ֆինանսական գործիքի վարկային ռիսկը զգալիորեն աճել է սկզբնական ճանաչումից հետո՝ հաշվի առնելով ֆինանսական գործիքի գործողության մնացած ժամկետի ընթացքում դեֆոլտ տեղի ունենալու ռիսկի փոփոխությունը: Վերոնշյալ գործընթացի հիման վրա ֆինանսական հաստատությունները պետք է խմբավորեն իրենց ֆինանսական գործիքներն ըստ ստորն ներկայացված փուլերի.

Փուլ 1:

Սկզբնական ճանաչման ժամանակ պահուստ է ճանաչում 12 ամսվա ԱՎԿ-ի հիման վրա: 1-ին փուլի ֆինանսական գործիքներն ընդգրկում են նաև ակտիվները, որոնց դեպքում վարկային ռիսկը չի փոխվել դրանց ճանաչման օրվանից հետո և/կամ ակտիվը վերադասակարգվել է 2-րդ փուլից դե-

պի 1-ին փուլ, վարկային ռիսկի բարելավման հետ կապված:

Փուլ 2:

Երբ գործիքի վարկային ռիսկը զգալիորեն աճել է սկզբնական ճանաչումից հետո, Բանկը պահուստը ճանաչում է վարկի գործողության ամբողջ ժամկետի ընթացքում ակնկալվող վարկային կորուստների (ԱԿԱՎԿ) համար: 2-րդ փուլի ֆինանսական գործիքներն ընդգրկում են նաև այն ակտիվները, որոնց դեպքում վարկային ռիսկը բարելավվել է և ֆինանսական գործիքը վերադասակարգվել է 3-րդ փուլից, սակայն դեռևս առկա է ռիսկի զգալի ավելացման գնահատական:

Փուլ 3:

Ակտիվը համարվում է արժեզրկված և/կամ դեֆոլթային և ֆինանսական հաստատությունը չի ակնկալում, որ փոխառուն այլևս իր սեփական միջոցների հաշվին կկարողանա մարել պարտավորությունը: Նման գործիքների գծով պարտքի մարման համար ֆինանսական հաստատություններն արդեն պետք է միջոցներ ձեռնարկեն այդ գործիքների ապահովության միջոցների իրացման ուղղությամբ:

Եթե հակիրճ և առավելագույնս պարզ ներկայացնենք արժեզրկման պահուստի կամ ԱՎԿ մեծության բանաձևն, ապա այն կունենա հետևյալ տեսքը՝

$$ԱՎԿ = PD * EAD * LGD$$

Ընդ որում, ֆինանսական կազմակերպությունն այս բանաձևով պետք է հաշվարկվի ԱՎԿ վերը ներկայացված յու-

րաքանչյուր փուլի համար առանձին, քանի որ բանաձևի յուրաքանչյուր գործակից ամեն մի փուլի համար իրենից ներկայացնում է տարբեր մեծություն:

Իրականության մեջ այս բանաձևի յուրաքանչյուր գործակից պետք է ունենա իր հաշվարկման համար համապատասխան մոդելը: Ընդհանրապես, նոր ստանդարտի ևս մի նորամուծությունն այն է, որ այն խորհուրդ է տալիս ֆինանսական հաստատություններին յուրաքանչյուր հաշվարկի տակ դնել համապատասխան մաթմոդել, որն իր մեջ կներառի ինչպես անցյալ իրադարձությունների պատմական տվյալները, այնպես էլ՝ ապագայի հետ կապված ֆինանսական կազմակերպության գնահատականները:

Վերը բերված բանաձևի յուրաքանչյուր գործակցի մեծություն կապվում է դեֆոլթ հասկացության հետ, այսինքն՝ ժամանակի մեջ այն կետը, որից հետո ֆինանսական գործիքի գծով հաճախորդի բնականոն գործունեությունից դրամական հոսքեր ակնկալել այլևս նպատակահարմար չէ, և ֆինանսական հաստատությունը պետք է դիմի այլ միջոցների փոխատվության՝ վերադարձելիությունն ապահովելու համար, օրինակ՝ նախաձեռնի ապահովության միջոցի իրացմանն ուղղված գործողություններ:

Յուրաքանչյուր ֆինանսական հաստատություն ինքն է որոշում, թե որն է այդ ժամանակային կետը, որից հետո, արդեն, վրա է հասնում դեֆոլթը, սակայն այս մասով ցանկացած գնահատական պետք է ապացուցելի լինի:

Որպես ուղենիշ, ստանդարտը նշում է, որ ֆինանսական գործիքի գծով առկա է դեֆոլտ և, հետևաբար, այն դատում է որպես Փուլ 3-ին պատկանող ֆինանսական գործիք (այսինքն՝ վարկային տեսանկյունից արժեզրկված) ԱՎԿ

հաշվարկի նպատակով, բոլոր այն դեպքերում, երբ փոխառուն 90 օրից ավել ուշացնում է պայմանագրային վճարումների կատարումը:

ԱՄՓՈՓՈՒՄ

ՖՀՄՍ 9-ի ներդրումը էապես փոխում է ֆինանսական հաստատությունների կողմից ինչպես վարկային ռիսկի գնահատման, այնպես էլ ֆինանսական հաշվետվությունների հրապարակման սկզբունքները, դրանք մի կողմից դարձնելով ավելի թափանցիկ այդ հաշվետվությունների օգտագործողների համար, բայց, մյուս կողմից, մեծացնում է ֆինանսական հաստատությունների գործառնական ծախսերը, քանզի ներկայումս այդ հաստատությունները ստիպված են մեծ ներդրումներ կատարել վարկային ռիսկի կանխատեսման իրենց գործիքակազմում՝ դրանք դարձնելով ավելի կատարյալ:

Ամփոփելով հոդվածը, հիմնական մարտահրավերները, որոնց հետ արդեն իսկ բախվել են ֆինանսական հաստատությունները և ապագայում ևս շարունակելու են բախվել, կարելի է միավորել 3 հիմնական խմբի:

Գիտելիքի և պրակտիկայի պակաս – Չնայած այն հանգամանքին, որ ստանդարտը հրապարակվել էր դեռևս 2014թ. հուլիսին և ֆինանսական հաստատություններն ունեին բավարար ժամանակ այն ուսումնասիրելու համար, սակայն իրականությունը ցույց տվեց, որ կան շատ հարցեր, որոնց պատասխանները ստանդարտը չի տալիս, քանզի ինչպես և շատ այլ ստանդարտների դեպքում, այս դեպքում ևս որոշ հարցերի լուծումները ստանդարտը թողնում է ֆինան-

սական հաստատության ղեկավարության ենթադրություններին և գնահատականներին: Իսկ դա նշանակում է, որ ֆինանսական հաստատությունները բախվում են մի շարք դժվարությունների, քանզի մոդելների կառուցման և գնահատականներ տալու առումով չկան միասնական մոտեցումներ և ժամանակի ընթացքում անհրաժեշտ է լինում պարբերաբար անդրադառնալ ոչ միայն ստանդարտին, այլ նաև ստանդարտին վերաբերող տարբեր մասնագիտական մեկնաբանություններին և անընդհատ ներդրումներ կատարել նոր գիտելիքներ ձեռք բերելու ուղղությամբ:

Ընդ որում, այս խնդիրն առկա է ոչ միայն Հայաստանում, այլ, ընդհանրապես, աշխարհով մեկ: Նույնիսկ խոշորագույն աուդիտորական կազմակերպությունները, որոնք ամենից լավ են պատկերացնում այս ստանդատի կիրառումը, միանշանակորեն կամ լիարժեք չեն պատկերացնում ստանդարտի ողջ պահանջները և պարբերաբար նոր գիտելիքներ ձեռք բերելուն զուգընթաց փոխում են իրենց մոտեցումները:

Կանոնակարգվածության հետ կապված խնդիրներ – Ստանդարտի ներդրումը նոր մարտահրավեր է ֆինանսական ակտիվների ճանաչման, չափման, արժեզրկման որոշման և ապաճանաչման գործընթացի կանոնակարգման տեսանկյունից նաև: Ֆինանսական հաստատությունները ներկայումս ակտիվորեն փոխում են իրենց ներքին կանոնակարգերը՝ դրանք ավելի համապատասխանեցնելով ստանդարտի պահանջներին:

Առանց հստակ կանոնակարգվածության, վարկային ռիսկի ոչ ճիշտ գնահատման և ֆինանսական հաշվետվութ-

յուններում հրապարակվող տվյալների՝ անարժանահավատության ռիսկն էապես մեծանում է:

ՖՀՄՍ 9-ի ներդրմամբ էապես մեծացել է ֆինանսական հաստատությունների ռիսկերի կառավարման համար պատասխանատու ստորաբաժանումների դերը, և առաջնային է դարձել դրանց գործունեությունն էլ ավելի կանոնակարգելու և դրանց դերը կազմակերպությունում ավելի կարևորելու հարցը:

Ավտոմատացում և ծրագրային ապահովում – Բարդ մոդելները և տվյալների մշակումն առանց համապատասխան ծրագրային լուծումների դառնում են բարձր ռիսկային և, երբեմն՝ անհնարին: Ոչ ավտոմատ լուծումները կարող են բերել գործառնական ռիսկով պայմանավորված սխալների՝ համապատասխան բացասական ողջ հետևանքներով հանդերձ: Վերջինս նշանակում է, որ ֆինանսական հաստատությունները պետք է ինտենսիվ և լայնածավալ ներդրումներ իրականացնեն նոր ծրագրային լուծումներ ձեռք բերելու ուղղությամբ, հակառակ դեպքում ստանդարտի ողջ պահանջների ապահովումը կլինի անհնար: Մակայն ծրագրային լուծումներն անիմաստ և ապարդյուն կլինեն, եթե առաջնային չլուծվեն առաջին երկու մարտահրավերները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. IASB, IFRS 9 Financial Standard, July 2014,
2. Impairment of financial instruments under IFRS 9, Applying IFRS, EY, 2018 April,
3. GUIDELINES ON PD ESTIMATION, LGD ESTIMATION AND TREATMENT DEFAULTED EXPOSURES, EBA/GL/2017/16, EUROPEAN BANKING AUTHORITY, November 2017,
4. IFRS 9 impairment: Significant increase in credit risk, PWC, December 2018,
5. A look at current financial reporting issues, PWC, August 2014
6. REGULATION (EU) No 575/2013 OF THE EUROPEAN PARLIAMENT AND OF THE COUNCIL of 26 June 2013 on prudential requirements for credit institutions and investment firms and amending Regulation (EU) No 648/2012,
7. IFRS 9 Impairment: Practical Workshop for NBU Staff and Bankers, World Bank, May 2016.

Mher Kandalyan

Ameriabank CJSC

Deputy Chief Accountant

PhD in Economics, ACCA

ISSUES AND CHALLENGES OF IMPLEMENTATION OF IFRS 9 IN FINANCIAL INSTITUTIONS

Keywords – *IFRS 9, IAS 39, financial institutions, financial crisis, classification and measurement of financial assets, depreciation of financial assets, PD, LGD, EAD, default*

This article discusses the issues of implementation of new IFRS 9. We review historical events behind implementation of the new standard. Special attention is paid to new, revolutionary approaches to provisioning against depreciation of financial assets in financial institutions.

We discuss the key differences between approaches to provisioning against depreciation of financial assets in the two standards, as well as shortcomings of the old standard which IASB addresses in the new one.

We sum up the article by discussing the challenges faced by financial institutions while implementing the new standard, and recommended solutions.

Мгер Кандалян

ЗАО Америабанк

Заместитель главного бухгалтера

к.э.н., АССА

ПРОБЛЕМЫ И ВЫЗОВЫ В СВЯЗИ С ВНЕДРЕНИЕМ НОВОГО МСФО 9 В ФИНАНСОВЫХ УЧРЕЖДЕНИЯХ

Ключевые слова – МСФО 9, МСБУ 39, финансовые учреждения, финансовый кризис, классификация и измерение финансовых активов, обесценение финансовых активов, PD, LGD, EAD, дефолт

Статья посвящена особенностям внедрения нового МСФО 9. Рассматриваются исторические события, послужившие основанием для внедрения нового стандарта. Особое внимание уделяется новым, революционным подходам к формированию резервов на покрытие убытков от обесценения финансовых активов.

В статье рассматриваются основные различия методов формирования резервов на покрытие убытков от обесценения финансовых активов, рекомендуемых двумя стандартами, а также основные недостатки старого стандарта, которые попытался решить Совет по международным стандартам финансовой отчетности путем внедрения нового стандарта.

В заключение рассматриваются основные вызовы, с которыми сталкиваются финансовые учреждения в процессе внедрения нового стандарта, и действия, необходимые для их решения.

*Ներկայացվել է՝ 11.04.2019 թ.
Ընդունվել է սպառողության՝ 19.04.2019 թ.*

Գիտական հանդեսը հրատարակության է երաշխավորել
«Հաշվապահության Ուսուցման Միջազգային Կենտրոն» կրթական
հիմնադրամի գիտական խորհուրդը:

Գիտական հանդեսի էլեկտրոնային տարբերակը տեղադրված է
«Հաշվապահության Ուսուցման Միջազգային Կենտրոն» կրթական
հիմնադրամի պաշտոնական կայքէջում՝ www.iatc.am :

Երևան, Չարենցի 1, 9-րդ հարկ
հեռ.՝ (+37410) 575940, e-mai՝ info@iatc.am

Չափսը՝ 60x84 ¹/₁₆
Տպագրություն օֆսեթ՝ 10,44 մամուլ
Տպաքանակ՝ 200
Տպագրված է՝ Ա/Ձ «Արսեն Ժամհարյան» տպարանում
Երևան-25, Ալեք Մանուկյան 1/5

Գիտական հանդեսի էլեկտրոնային տարբերակը տեղադրված է
«Հաշվապահության ՈՒՏՈՍԾՄԱՆ Միջազգային Կենտրոն»
կրթական հիմնադրամի պաշտոնական կայքէջում՝ www.iatc.am:



ՀՀ, Երևան 0025, Չարենցի 1, 9-րդ հարկ, www.iatc.am, info@iatc.am
հեռ.՝ 010 575 940, 055 575 940, 099 575 940